

13847

2409

Հայ հող - ՀԱ՝ 2409

400

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՋՆԱԺՈՂՈՎԻ

Գ. Դ.

1504.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ե Ի

Հ Ա Շ Ի Ի

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ

ՅԱՆՋՆԱԺՈՂՈՎԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

1915-1916

ՎԱՇԱԿԱՆԱԿԱՆ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

1917



13847

ՀՐԱՄԱՆԱԻ
Տ. Տ. ԳԵՈՐԳԵ.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՅԱՌԱԶԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Ընդառաջ գնալով Նորին Վեհափառութեան եւ հայ հասարակութեան ցանկութեան տպագրութեամբ լոյս ենք ընծայում Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան 1915 եւ 1916 թուերի դրամական հաշիւն ու գործունէութեան տեղեկագիրը:

Պաշտօնի կոչուելու օրից ջանք չենք խնայել ըստ կարելոյն շուտ եւ լրիւ հաշիւ ներկայացնելու հայ հասարակութեան, սակայն եւ այնպէս երկու տարուայ հաշիւների եւ փաստաթղթերի կարգաւորումը այնքան ժամանակ խլեց, որ հագիւ այսօր հնարաւոր եղաւ այն լոյս ընծայել:

Հակառակ մեր ցանկութեան հնարաւոր չեղաւ լոյս ընծայուած հաշիւները նախապէս ըստ էութեան քննել ընտրեալ վերստուգիչ Թանձնաժողովի ձեռքով, որպէս զի տպագրութիւնը եւս կէս դար չյետաձգուէր. սակայն ուրախ եմ հաղորդելու, որ ըստ էութեան քննութիւնը ժողովով որոշուած է կատարել յատուկ Թանձնաժողովի ձեռքով եւ եզրակացութիւնը առանձին տպագրել, իբրեւ լրացուցիչ աշխատանք սոյն հրատարակութեան, որի համար պահանջուելիք կարեւոր դրամական ծախսերը կատարելու թոյլտուութիւնը արդէն քարհնածել է արտօնել Նորին Վեհափառութիւնը:

Եղբայրական Օգնութեան ներկայ հաշիւները պարփակող շրջանն է 1914 թուի դեկտեմբերի 28-ից մինչեւ 1917 թուի Յունուարի 1-ը, երբ գործել են երեք նախագահներ՝ Տ. Եփրեմ՝ եպիսկոպոս (այժմ՝ հանգուցեալ)՝ 28/XII 1914—1/1 1915, Տ. Բագրատ եպիսկոպոս՝ 1/1 1915—17/IX 1915 եւ Տ. Գարեգին վարդապետ (այժմ՝ եպիսկոպոս)՝ 17/IX 1915—1/VI 1916 թ., որոնց գործառնութեանց հաշիւներն ու գործունէութեան տեղեկաւորն է, որ դրում է հասարակութեան առաջ եւ որոնց ներողամտութիւնն ենք խնդրում, եթէ սոյն աշխատանքի մէջ սպրդած լինին ինչ-ինչ թերութիւններ, որից խուսափելն եղել է մեր անկեղծ ցանկութիւնը:

1916 թուի Օգոստոսի 1-ից մինչեւ 1917 թուի Յուլիսի 1-ը մեր գործունէութեան շրջանն է, որի հաշիւը նմանապէս պատրաստ է եւ շուտով տպագրութեան կը յանձնուի:

Ցաւում ենք, որ հնարաւորութիւն չունեցանք ներկայ հաշուի մէջ միւծել Երեւանի եւ Նրա Միւղերի (Ալէքսանդրապոլի եւ Իգդիրի) հաշիւները Ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան տուած գումարների հանդէպ՝ ստացած չլինելով նոցանից մեր տուած գումարների գործադրութեան հաշիւը, որ սակայն յուսով ենք թէ՛ կըրացուի այդ մարմինների հաշիւտուութեամբ:

Նախագան Եղբ. Օգ. Գլխ. կարգադիր Թանձնաժողովի՝ ԳԵՈՐԳ. ԵՊԻՍԿՈՊՈՍ

17/VI 1917 թ.
Ս. Էջմիածնի:


Հ. Լուսինյան
Ք. Դ.

564

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ս. ԷԶՄԻԱՆԻ ԵՂԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ



Ա.

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. ՏԱԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԸ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԵՐԸ ԱՆՅԵՒՈՒՄ.

Հայ Մելիքների և Ռուսաց Մեծն Պետրոս Թագաւորի մէջ ստեղծուած փոխյարաբերութիւնները սկիզբն են կազմում հայ ժողովուրդի ազատագրութեան երկունքին, որով երկու դար բռնուած հայութիւնը ազգովին ձգտում էր թափել մահմեդական բռնապետութեան հիւժող լուծը, ապահովել իւր քաղաքական գոյութիւնը, զարգացնել անցեալ ազգային նիւթական ու հողերը մշակոյթը հարեան քրիստոնեայ հօր պետութեան հովանու ներքոյ:

Այս ցաւաբեր երկունքի առաջին յաջող լուծումը իրականացաւ ԺԹ-րդ դարի սկզբին, երբ 1813 թուին Կիւլստանի և 1828 թուին Թիւրքմենչայի դաշնագրութեամբ արեւելեան Հայաստանը ընդ միշտ ազատուեցաւ Պարսից տիրապետութիւնից և Աղեքսանդր Ա-ի արքայական հրովարտակով Ռուսաստանում սկիզբն դրուեցաւ «Մերձաւոր արեւելքի քրիստոնեայ ազգերին մահմեդականների հալածանքից պաշտպանելու» մարդասէր քաղաքականութեան:

Մինչդեռ Ռուսաստանում հայ ժողովուրդի արեւելեան հատուածը 1828 թուից սկսած պետական իրաւակարգի յարաբերութեամբ տնտեսապէս բարդաւածում և մտաւոր ու հոգեւոր զարգացման ուղին բռնած թեւակոխում էր յառաջ, ջանալով պահպանել իւր ազգային առանձնատուր գիւրքն ու մշակոյթը, և համակուած աներկբայ հաւատարիմ հպատակութեան զգացումով, օգտուում էր

պետութիւնից շնորհուած մասնակի արտօնութիւններով, Տաճկաստանի հայութեան վիճակուած էր մի ամբողջ դար տակաւին մահմեդական-թրքական բռնութեան ծանր լուծը քաշելու, մատնուած ծայրայեղ տառապանքի, ենթակայ պարբերական աւերածութեան, կեղեքման, կոտորածի, որից հայ ազգը յուսահատած, երբեմն անձի և գոյքի ապահովութեան, խղճի ազատութեան և ազգային արժանապատուութեան գիտակցութեամբ, ողի ի բոլին, ըմբոստ փորձով տեղ-տեղ պայքարում էր պետութեան մէջ տիրող ապօրէն կարգերի դէմ, միշտ յառած Ռուսաստանի աջակցութեան և եւրոպական մեծ պետութիւնների գիւլանագիտական միջամտութեան, առանց երկուստեք որ և է իրական բարեփոխում ստանալու:

Հայ ժողովուրդի վտանգուած գոյութեանը ԺԹ-րդ դարում չօգնեց ու նրա ղեկավարութեանը թեթեւութիւն չբերաւ նաեւ ռուս-տաճկական առաջին և երկրորդ պատերազմը: Ման-Ստեփանոյի դաշնագրութեամբ Ռուսաստանի պահանջած բարենորոգութիւնը հայկական գաւառներում վիժեց Բերլինի վեհաժողովում, որի 61-րդ յօդուածի զօրութեամբ բարենորոգութեան վերահսկողութիւնը Ռուսաստանից խլուելով յանձնուեցաւ մեծ պետութիւնների միահամուռ իրաւասութեանը: Ուսկայն այս փորձն էլ մեծ խոչընդոտի բաղխեց շնորհիւ այն քաղաքական հակադիր ձգտումների, որ սնուցանում էին մեծ

պետութիւնները Օսմանեան կայսրութեան ու մերձաւոր արեւելքի նկատմամբ ընդհանրապէս և «Հայկական խնդրի» նկատմամբ մասնաւորապէս: Եւրոպայի արտաքին քաղաքականութեան այս հակադիր բաղադրանքից յղիացած տաճիկ կառավարութիւնը ոչ միայն մօտ կէս դարու ընթացքում չձեռնարկեց իւր հայաբնակ գաւառներում վարչական, օրինական բարենորոգութիւններ մտցնելու և հայութեան գլխին տեղացող կեղեքումները դադարեցնելու, այլ ընդհակառակը դիւալին մտորումներով հայ ազգը իւր սահմաններում իսպառ բնաջինջ անելու միջոցներ խորհեց և գործադրեց ի տրիտուր հայերի դէպի Ռուսաստանը տաճած համակրութեան և այն յամառ բողոքարկու ոգուն, որով հայ ազգը իւր գոյութեան և ապահովութեան դատը յանձնել էր եւրոպական մեծ պետութիւններին:

Բնաջնջման առաջին անգի փորձը տեղի ունեցաւ 1895—96 թուին. նիւթուեցաւ ընդհանուր հայկական կոտորած բոլոր թրքական հայաբնակ վայրերում, պետական զօրքի, մոլեռանդ մահմեդական ամբոխի և վայրենի քրդական ցեղերի ձեռքով: Հարիւր հազարաւոր հայեր խողովուցան և մասամբ լքան թողին իրենց բնավայրը: 61-րդ յօդուածը ստորագրող պետութիւնները բաւականացան միայն կատարուած սոսկալի իրողութիւնը ստուգելով և կոտորածից ազատուած որբերին տեղ-տեղ խնամելու հոգսը ստանձնելով. իսկ Ռուսաստանը առժամանակ մոռացած քրիստոնեայ ազգերին մահմեդական լծից ազատելու իւր պատմական քաղաքականութիւնը, ոչ միայն յետ կասեցաւ իւր առաջարկած բարենորոգութեան ծրագրից Հայաստանում, այլ և «Հայաստանը առանց հայերի» նոր քաղաքականութեամբ խստագոյն վարչական միջոցներով աշխատեց խզել այն կապը, որով շաղկապուած էին միեւնոյն ազգութեան պատկանող հատուածները Տաճկահայաստանում և Կովկասում: Եւ այնուհետեւ Հայաստանը դարձաւ կատարեալ սպանդանոց դահիճ սուլթանի ձեռքին. ամենուրեք սուրն էր շարժում հայի գլխին և բանդերում շղթաների շոխող հնչում. ժողովուրդը մարտիրոսական արիւն թափեց, առաջաւորները հիւծուեցան կապանքների մէջ, փոքրոգիները կրօնափոխ եղան, հազարաւորները գողթեցին Ռուսիա, Եգիպտոս, Բուլղարիա, Ռումինիա, Ամերիկա և այլուր, այլ ևս յոյս չունենալով Տաճկաստանում, իրենց բնիկ հայրենի երկրում ապահով ապրելու, իրենց ֆիզիքական գոյութիւնը, ինչքն ու ունեցուածքը, իրենց ընտանիքի և օջախի պատիւը պահպանելու:

Այս էր Հայաստանի վիճակը Թիւրքիայում,

երբ 1908 թուին անակնկալ բռնկեց տաճկական յեղափոխութիւնը, իբր նեցուկ քայքայուած պետական յօրինուածքի վերակենդանութեան: Մեծ մարդասպան» Արդուլ Համիդը դահլիճեց եղաւ և հաստատուեցաւ սահմանադրական միապետութիւն. երկրի կառավարութեան մէջ ժողովրդի ներկայացուցիչները առաջին անգամ առանց ազգի և կրօնի խտրութեան մասնակցելու իրաւունք ստացան: Այս յեղաշրջման մեծապէս նպաստեցին և հայ քաղաքական կուսակցութիւնները, որոնք դաշն կապած երիտասարդ թիւրքերի հետ, վստահ էին և համոզուած, որ նորոգուած պետութեան մէջ հայ ազգի տառապանքներին վերջ կդրուի և հայութիւնը օրէնքի և արդարութեան առաջ հասար և իրաւազօր ճանաչուելով միւս տաճկահայատակ ազգերին, այնուհետեւ կվայելի խաղաղ կեանքի բարեքնները, տնտեսապէս ու կուլտուրապէս կզարգանայ: Սակայն նոյն յեղափոխական երիտասարդ թիւրքերի նիւթած հայկական կոտորածը Կիլիկիայում և Ադանայում յեղաշրջման մերձաւոր ապագային համոզեց հայ ժողովուրդին և հայ յեղափոխական կուսակցութիւններին, որ նորոգուած Տաճկաստանի վարիչներն էլ Արդուլ Համիդի հետեւող են և Թիւրքիայի սահմաններում հայ ժողովրդին գլխովին բնաջինջ անելու քաղաքականութեան համախոհ: Այսպիսով տաճիկ կառավարութեան և հայ ժողովրդի մէջ բացուած անդունդը վերացնելու հնար չեղաւ և հայ ժողովրդի սրտում բուն դրած կասկածն ու անվստահութիւնը դէպի տաճիկ կառավարութիւնը չփարատուեցաւ: Այս վիճակի մէջ հայերը առթի էին սպասում, նորից «Հայոց դատը» հանելու Եւրոպական մեծ պետութիւնների ատենի առաջ: Վերահաս Բալկանեան և Թիւրք-իտալական պատերազմները 1912—1913 թուին ազդարարն եղան, «Հայկական հարցը» բոլոր թափով հրապարակի վրայ դնելու, առհաստիցեայ ունենալով մեծ պետութիւնների արտաքին քաղաքականութեան նոր ընթացքը, որի մէջ Ռուսաստանը վերստին իւր պատմական դերը ստանձնելու էր կոչուած արեւելեան հարցի նկատմամբ: Այս բարեպատեհ հանգամանքներում Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Հայրապետը չյապաղեց, Ռուսաց զերիշխանութեան տակ առաջին անգամ, իբրեւ զուլս ի սփիւռս աշխարհի ցրուած հայ ժողովրդի, կիրառեն իւր պատմական միջազգային հեղինակութիւնը, մի կողմից խնդրելով Ռուսաց կայսեր, նպաստել իրականացնելու խոստացուած բարենորոգութիւնները Տաճկաստանի հայաբնակ վիլայեթներում, միւս կողմից Պօղոս Նուբար փաշային իբրեւ իւր ներկայացուցիչ առանձին պատուիրակութեամբ ուղարկելով Եւ-

րոպա, մեծ պետութիւնների վարիչների հետ բանակցելու «Հայկական հարցի», Թիւրքիոյ Հայոց քաղաքական կացութիւնը վերջնականապէս բարելոքելու և ապահովելու նկատմամբ:

Հաշտութեան դաշինքով մի կողմից Թիւրքիոյ և միւս կողմից Բալկանեան պետութիւնների ու Իտալիայի մէջ խաղաղութիւնը վերականգնեցաւ Տաճկաց պետութեան սահմանները Եւրոպայում և Աֆրիկայում սղելով և նրա նախկին հզօրութիւնը թուլացնելով, որից յետոյ Ռուսաստանը տաճկական Հայաստանում, նեղուցների խնդրում ու Օտտոմանեան պետութեան ներքին գործերում առհասարակ դիւանագիտական նուաճումներ անելու տենչով յարուցեց Տաճկաստանի հայաբնակ վիլայեթներում վարչական-իրաւական բարենորոգութիւն հաստատելու խնդրը: Այս ձեռնարկութեանը աջակցեցին նաև Ֆրանսիան և Անգլիան, յատկապէս Գերմանիայի նուաճողական սպանալիքը արեւելքում մեղմելու և նրա յաջողութեանը Թիւրքիայում մի ընդդիմակաց դնելու համար: Այս իրադարձին Եւրոպայի մեծ ազդերի մէջ քաղաքական մթնոլորդը երբեմն-երբեմն գալիք կամ ներկայ անգի պատերազմի նախընթաց փոթորկալի վիճակն էր ներկայացնում: Սակայն վերջապէս փոխադարձ լարումը թուլացաւ և Ռուսաստանի դիւանագիտութիւնը յաջողեցրեց Թիւրք կառավարութեան ընդունել տալ իւր առաջարկած, հայաբնակ գաւառներում կիրարկելի բարեփոխութեան ծրագիրը ինչ-ինչ փոփոխութեամբ: Բարեփոխութիւնների իրականացմանը վերահսկելու իրաւունքը ղեջնելով, Ռուսաստանը համակերպեց չեղօք պետութիւնների հպատակ երկու ներկայացուցիչ ընտրելու պայմանին, որոնք իբրեւ ներկայացուցիչներ եւրոպական մեծ պետութիւնների, իրաւատէր պէտք է լինէին ստուգելու և հսկելու տաճիկ կառավարութեան ձեռքով Անատոլիայի մահմեդական և քրիստոնեայ ազգերի մէջ մտցնելիք ծրագրուած բարեփոխութիւնների իրականացմանը: Եւրոպացի իրաւաբանները՝ Հոֆ և Վեստինհեդ նոր էին ստանձնել իրենց պաշտօնը և ոտք դրել Հայաստանի ներքին գաւառները, դեռ իրական գործի չձեռնարկած, երբ 1914 թ. յուլիսի 20-ին Եւրոպայի գլխին որոտաց մեծ ռազմի ամպրոպը և ազգերի իրաւունքի ու արդարութեան դատը թողնուեցաւ պատերազմի բաղկին, ուժի յաղթանակին:

Չեղօքութիւն պահպանելու հաւաստիացումներով Թիւրք կառավարութիւնը պատրեց Ռուսաստանին և Դաշնակիցներին պատերազմի առաջին երեք ամիսը. 1914 թ. հոկտեմբեր 20-ին դաւադրութեամբ խախտեց չեղօքութիւնը իբրեւ կողմակից Գերմանիայի և յանկարծական յար-

ձակումն գործեց Ռուսաստանի Սև-ծովեան ափերի վրայ, որից հարկադրուած Ռուսաստանը և իւր դաշնակիցները պատերազմ յայտարարեցին Թիւրքիային՝ առաջինը ազատօրէն Միջերկրական ծովը ելնելու իւր դարաւոր քաղաքականութեան իրականացումը փութացնելու, իսկ Անգլիան՝ տաճկաց տիրապետութեանը Եւրոպայում և Ասիայում գերեզման փորելու մտադրութեամբ: Այսպիսով Տաճկաստանի հայութիւնը ճակատագրի բերմունքին թողնուած, ենթարկուեցաւ նորից իւր դարաւոր բռնակալի հաճոյքին, ահաբեկուած գալիք արհաւիրքի ուրուականից և գիտակ վերահաս անհասար պայքարին, ջանաց չեղօքութիւն պահպանել իւր հողի վրայ մարտնչող ազգերի մէջ, բաւականանալով միայն իւր հոգու ծածկութեան մէջ վառ պահել այն խորհրդաւոր յոյսը, որ ներշնչում էր նրան սահմանի այս կողմը ուսական աղատաբար դրօշի ծածանումը:

Մինչ ռուս-թրքական պատերազմի առաջին երկու ամիսը ռուս քաջարի զօրքը ճեղքելով տաճկական սահմանը Բասենի, Ալաշկերտի և Վասպուրականի արեւելեան կողմից թափով նուաճում էր հայաբնակ գաւառները սահմանի երկարութեամբ, Թիւրք կառավարութիւնը նախագծում էր հայերի բնաջնջման այն սոսկալի ծրագիրը, որ իրագործուեցաւ 1915 թուին. բոլոր կենտրոնական վայրերում հայ ժողովրդի աչքի ընկնող ներկայացուցիչները կախաղանի և բանդարկութեան ենթարկուեցան, մարտիրոսները պատերազմի ճակատ տարուեցան, երիտասարդ տղամարդիկ թիկունքում աշխատանքի կանչուեցան, ղեղձուկ դասակարգը գինաթափ եղաւ և այսպիսով հանուր հայ ազգը ապագայ պատահարների մղու ձաւանջի մէջ գրեթէ զուրկ մնաց ինքնապաշտպանութեան միջոցներից, յառած ազատարար ռուս զօրքի գալստեան, որ ըստ երևութիւն կարճատեւ ժամանակում պատուելով արեւմտեան Հայաստանը, եփրատի ափերով պիտի հասնէր Անատոլիա և Կիլիկիայի ծոցը: Սակայն այս յոյսը չիրականացաւ: Անպաշտպան ժողովուրդը կանխամտածած և հետեւողական բարբարոս միջոցներով մարտիրոսացաւ, արիւն քամեց, բնաջինջ եղաւ, բռնի գաղթի հարկադրուեցաւ, կորցրեց իւր ինչքն ու կայքը և թրքական Հայաստանը իսպառ դատարկուեցաւ հայերից: Հայ ժողովրդի թշուառները՝ մանուկներ, կոյսեր, գեւատի կանայք և ծերունիներ հորաւային անջրդի անապատները բռնուեցան: Հայ գիւղերն ու քաղաքները հիմնովին կործանուեցան և աւարի մատնուեցան: Այս բոլորից յետոյ տեղի ունեցաւ 1914 թ. դեկտեմբերի 20-ի և 1915 թ. յուլիսի 20-ի ռուսական զօրքի նահանջը, որով ռուս-տաճկական սահմանի եր-

կարութեամբ՝ Սև ծովից սկսած մինչև պարսկական Քրդստանը զբաղած հայկական գաւառների բոլոր քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, գլխաւորապէս հայերը, խուճապով դադթի դիմեց ռուս զինուորական կարգադրութեամբ դէպի Կովկաս:

Ահա երբորդ տարին է, որ տաճկաց Հայաստանի այս քաղաքական կացութեան երեսից հիւժուած, ծուռտուած, վտարուած հայ ժողովրդի թուով չնչին մնացորդները տառապում են Կովկասում, Միջագետքում և այլուրեք, յոյսը դրած կռուող և չեղոր ազգերի մարդասիրութեան, Կովկասի և այլ երկրներում ապրող հայ եղբայրների

2. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՈՐԱԿԱՆ ՀՈՐԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՏԵՌԱՊԵՆԷՐԻ ՄԱՏՆՈՒԵԺ ՀՕՏԻ ՄԱՍԻՆ:

«Հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոգխարաց»:

Հայ Հովուապետների աւանդական անձնութիւնն ուղիով ներշնչուած, Տ. Տ. Գէորգ Ե. Վեհափառ Կաթողիկոսը իւր վրայ վերցրեց տառապանքների և պատերազմի աղետից աւերուած տաճկահայ ժողովրդի դառն կացութիւնը դարմանելու հոգսը: Մի կողմից Ռուսաստանի արտաքին գործոց նախարարի միջոցով Եւրոպական դեսպանների ուղարկութիւնը հրաւիրեց Տաճկաստանի ներքին նահանգներում աքսորական հարիւր հազարաւոր հայերի ողորմելի վիճակի վրայ, այլ և ազգեցիկ, անուանի հայասէր անձանց միջոցով հայցից չեղոր պետութիւնների ներկայացուցիչներին, օգնութեան ձեռք կարկառելու հարաւային անապատներում սովից տանջուող հայութեան բեկորներին: Միւս կողմից պետական իշխանութեան թոյլտուութիւնը ստանալով, Հայրապետական կոնդակներով և շրջաբերականներով յանուն Ռուսաստանի և օտարահպատակ Հայոց թեմակալ առաջնորդների, համայն հայ ազգի, ազգային հաստատութիւնների, ընկերութիւնների համազգային հանգանակութեան կոչ հրատարակեց, որով պատերազմի սկզբից ի սփիւռս աշխարհի ցրուած հայութիւնը սրբազան ոգևորութեան հուրը կրծքում, եղբայրական օգնութեան նպաստի առաջ լուծանքը դրաւ Հայրապետի և ազգային կազմակերպութիւնների տրամադրութեան ներքոյ, լայն չափերով ամօքելու տաճկահայ եղբայրների դառն կացութիւնը և լրացնելու նոցա անձայր տարրական կարիքը: Միաժամանակ Եւրոպայի և Ամերիկայի նշանաւոր կենտրոններում Հայոց Հայրապետի հեղինակաւոր ձայնի արձագանքը հնչեց, ուր և կազմակերպուեցան

ոչարտաճանաչութեան և հուլատար խնամքին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, Ամենայն Հայոց Հայրապետին, հայ ընկերութիւններին և կազմակերպութիւններին, որոնք ամենքն էլ կարեկից հայ վշտակիր ժողովրդին, իրական օգնութեան զործն են կազմակերպել և վարում: Այդ հոգատարութեան և խնամքի մի շատ կարևոր մասը իւր վրայ է վերցրել Ամենայն Հայոց Հայրապետը և Մայր Աթոռին կից հիմնուած «Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովը», որի գործունէութեան է նուիրուած յետագայ նկարագիրը:

Կազմաթիւ Հայաստան Յանձնաժողովներ, որոնք Հայկական դատի պրոպագանդը աշխարհի ամեն կողմերում վարելով հանդերձ, նախապես պատկառելի օգնութիւն հասցրին տնաւէր հայ ժողովրդին, նպաստի գործը կազմակերպելով գլխաւորապէս յատուկ ներկայացուցիչների հրահանգով, որոնք և ցարդ գործում են Կովկասում, Ատրպատականում, նուաճուած տաճկական գաւառներում, սու առկա ծանօթանալով հայ թշուառների կարիքներին և կամ մասնաւորապէս նպաստի զուգարներ դնելով Նորին Ս. Օծութեան և զանազան հայ բարեգործական հաստատութիւնների տրամադրութեան տակ:

Ազգի մօտալուստ փրկութեան աննկուն հաւատով զօրացած, Նորին Սրբութիւնը ռուս-տաճկական պատերազմի յայտարարութեան նախօրեակին առանձին միջնորդութիւն յարոյց ռուս իշխանութեան առաջ, աքսորավայրերից ազատելու հայ նշանաւոր քաղաքական գործիչներին, որոնք վերադառնալով հայրենիք, ռուս պետութեան հաւատարիմ ղեկավարութեամբ մասն հայ կամաւոր զինքի մէջ կամ նուիրուեցին պատերազմի աղետից տառապանքներին օգնող կազմակերպութիւնների գործունէութեան, որով և մեծապէս նպաստեցին մի կողմից ռուս բանակի յաջողութեան թրջական ճակատում, միւս կողմից գնահատելի ծառայութիւն մատուցին հայ փախստականներին առաջին և երկրորդ դադթի ժամանակ և ապա փախստականներին խնամելու գործին: Նոյնպիսի միջնորդութեամբ Ռուսաստանի վաճառաշահ կենտրոններում ապրող քաղաքիւ տաճկահայատակ հայ քաղթականները ազատուեցան պատերազմա-

կան օրէնքով պետութեան սահմաններից արտաքսուելու վտանգից, իսկ հայ գերիների որոշ մասը, մանաւանդ բժիշկները արտօնուեցան՝ ոմանք մտնելու կամաւորական խմբերի շարքը՝ ոմանք սպասաւորելու փախստականների և զինուորական հիւանդանոցների բժշկական և առողջապահական գործին:

Այս բոլորից զատ Ամենայն Հայոց Վեհափառ Հովուապետի ժողովրդասէր ոգին պատերազմի ընթացքում սաւառնում էր յառաջընթաց ռուս բանակի շաւղով դէպի նոր գրաւած հայկական գաւառները՝ Վասպուրական, Կոգովիտ, Բագրևանդ, Մուշ, Բասէն, Տրապիզոն և այլուր, ուր դարաւոր քունութեան լծից փրկուած հայութեան բեկորներն էին մնացել: Նրանց տնտեսական կացութեանը ծանօթանալու և ըստ այնմ նպաստի մատակարարման գործը կազմակերպելու հոգսը, նրանց ինչքն ու կայքը ի մի գումարելու, կալուածներին տիրանալու, ազգային-եկեղեցական հաստատութիւնները ցուցակազրելու և նրանց ըստացուածքն ու փրկուած ազգային հուկութիւնների գոյութիւնը ապահովելու, ժողովրդին միեմարելու և նրանց կրօնական ու հոգեւոր հովուութիւնը վարելու, թշուառներին պատասպարելու և նրանց կենսական կարիքները հոգալու, այլ և այս բոլորի մասին մանրամասն զեկուցագիր կազմելու պարտքը Ն. Ս. Օծութեան կողմից յանձնարարուեցաւ Մայր Աթոռի միաբանութեան անդամներին և ձեռնհաս աշխարհական անձանց, որոնք պարբերաբար շրջելով գրաւած գաւառները, կատարում էին իրենց ստանձնած առաքելութիւնը Հայրապետի հրահանգութեամբ: Առաջին անգամ

այսպիսի յանձնախմբեր կազմուեցան 1914 թ. նոյեմբերի 15-ի №: 1750, 1751 կոնդակներով յանուն Տ. Տ. Մեսրոպ և Նորէն Կաթողիկոսների և պ. պ. Յ. Թումանեանի, Յ. Նունուցի, Ս. Նաչատրեանի և Շիրվանզադէի, իսկ ապագայում նոյն իմաստով յանձնարարութիւն և լիազօրութիւն ստացան Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեան, Տ. Յովհաննէս վարդապետ Հիւսեան Վասպուրականում, Տ. Արսէն վարդապետ Ղլտճեան Ալաշկերտում, շնորհունակ Իսահակ սարկաւազ, ձեռնարանի Տեսչի օգնական պ. Ա. Տէր-Պողոսեան և ուսուցիչ պ. Բ. Բահաթրեան Մուշում, Տ. Ներսէս Կաթողիկոս Մելիք-Թանգեան Վասպուրականում, Ալաշկերտում և Պարսկաստանում, Տ. Չաւէն վարդապետ Կարնոյ շրջակայքում և Տ. Մեսրոպ աւագ քահանայ Մելիան Տրապիզոնում և ուրիշները, որոնց զեկուցումներն ու հաղորդած տեղեկութիւնները առաջ և ապա ուղեցոյց և խթան կղան Ամենայն Հայոց Հայրապետի հովանու և անմիջական հսկողութեան ներքոյ հաստատուած Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովի և սրա Կովկասի զանազան կենտրոնական և գաւառական վայրերում կազմակերպուած բաժանմունքների հսկայական գործունէութեան, նուիրուած բիւրաւոր հայ փախստականների, հազարաւոր որբերի, համաճարակի ենթարկուած քաղաքիւ հիւանդների կարիքներին, մի բեղմնաւոր գործունէութիւն, որի ոգին ու շունչը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին էր և նրա գոյութեան յարատե կցորդուած, հայ ժողովրդին ամեն ազգային արհաւիրքի ժամանակ մայրաբար կաթ ջամբելու գաղափարը:

Բ.

ՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱՅՐԵՐԻՑ ԵՒ ԵՂԲԱՅՐԱՎԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՐԱՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

1914 թ. դեկտեմբերի 18-ից մինչև 1915 թուի մարտի 1-ը

1. ԱՌԱՋԻՆ ԿԱՄ ՓՈՔՐ ԳԵՂԹ

Սարիղամիշի ճակատամարտից առաջ, 1914 թ. դեկտեմբերի 18-ին Գեորգիքոյի յաջողութիւնից յետոյ, թիւրք բանակի յառաջխաղացումը դէպի Կովկաս ամբողջ սահմանագծի երկարութեամբ՝ Սև ծովից մինչև Ուրմիոյ լճի ափերը, նախագուշակն էր Օսմանեան ռազմական ծրագրի, որով տաճիկ զինուորութիւնը ձգտում էր ճակատի աջ ու ձախ թեւերից ասպատակել Կովկասը և արևմտեան երկաթուղու գիծը կտրելով, ռուս զօրքի փոխադրութեան և ռազմական մթերքի մատակարարութեան զգալի հարուած հասցնել։ Այս առ երևոյթս յաջող և յանդուգն ծրագրի իրականանալու վտանգը հարկադրեց ռուս բանակին, թիկունքը պաշտպանելու դիտմամբ, ոչ միայն հապճեպով նահանջել երկու ամիս առաջ սահմանի միւս կողմում գրաւած թրքական հողից, այլ և սահմանամերձ գաւառներից հայերին և այլացեղ քրիստոնեաներին գաղթեցնել դէպի Կովկասի ապահով վայրերը։

Մահուան և կիսանքի պայքարի մէջ հայ ժո-

ղովուրդը ահաբեկած, դեկտեմբերի 18—28-ը Բասենի, Ալաշկերտի, Բայազետի, Աղբալի, Աբաղայի և Ատրպատականի բազմաթիւ գիւղերից ու քաղաքներից, այլ և Արդուինի, Արտանուշի, Օլթու և Արգահանի շրջաններից, իւր ինչքն ու կայքը թողած, կրակի և արեան միջով փախաւ դէպի Կովկասի մերձաւոր և հեռաւոր կողմերը, մարդկային ծանր կորուստ և նիւթական մեծ աւարտալով թիւրք հրոսակներին։ Գոյութեան ամեն միջոցից զուրկ, քաղցի և մերկութեան մատնուած, սառնամանիքի և հիւանդութիւնների ենթակայ փախստականները գաղթում էին զանազան ուղղութեամբ, գլխաւորապէս Իգդերի և Զուլփայի վրայով դէպի Արարատեան դաշտը՝ էջմիածին, Երևան, Նախիջևան, այլ և Կարսի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի և Բաթումի վրայով դէպի միւս հայաբնակ կենտրոնները՝ Թիֆլիս, Գանձակ, Բազու, Ղզլար, Մոզդուր, Եկատերինոզար, Արմաւիր և աւելի հեռուն մինչև Նոր Նախիջևան և Ռուսաստանի այլ քաղաքները։

Գաղթականութեան ժամանակ Տաճկահայաստանում և Պարսկահայաստանում աւերուած և հայութիւնից լքած վայրերն են. Ա) Բասենում. — Գոմաձոր, Գրդաբուզ, Էգէպատ, Եաշան, Թէղովերան, Իշխուա, Իւղվերան, Խոսրովերան, Մանձաղ, Հալանքար, Բեոփրքեոյ. — Բ) Բայազետի եւ Ալաշկերտի գաւառներում. — Արծափ, Աշխալա, Ալաշկերտ, Ամաղ, Ամար, Աղա Դէվէ, Բայազետ, Բլուր, Բաղո, Գարբաս, Դիաղին,

Դութախ, Դաւոյի գիւղ, Դերեկ, Եոնջալու, Երանոս, Զերո, Զեդեան, Թաւա, Իրիցու գիւղ Ալաշկերտի, Իրիցու գիւղ Դարաքիլիսայի, Խաչու, Խոշեան, Խաստուր, Խըզը, Հաջի Սաֆար, Դումլիպուլաճախ, Դարաբազար, Դարաքիլիսա, Դադի, Դայաբէկ, Դաւաջա, Դաղարայ գիւղ, Մուսուն, Միրզաջան, Մանգասար, Մաղրէ, Մուլա Սիւլէյման, Մլան, Մուլա Հասան, Ուշքիլիսա, Զիլանի, Զամբուլու, Զուջան, Զամիան,

Սէյդո, Տաշլի չայ, Բորուն, Բեոփրքեան, Բեոքը. — Գ) Ատրպատականում, Աղբալում եւ Աբաղայում. — Ախպակ, Արալ, Ախարիկ, Աւգարիկ, Ախտախանա, Աղբխան, Բաշկալ, Բազա, Բարդուղիմէոս վանք, Բաղլըո, Բէնկերտ, Բաբառու, Գարդբաթ, Դաւրի, Դարբարու, Դերեքէց, Երնջան, Զէվաջուկ, Թաւրիզ, Իքաղաջ, Իսալու, Խոյ, Խոսրովա, Խարադոս, Հասիստան, Հերխուան, Հասան թամրա, Հաֆթուան, Դոթար, Դալասար, Դըլըջա, Դայթաղ, Դարաբաղ, Մարգաւէն,

Մալքաւա, Մհալլա, Մհալազան, Նախիջևան թաֆա, Շորաւ, Շէյթանաւա, Շումբլաբաթ, Ուրմի, Զարբախշ, Զամաւաւա, Ռահուա, Սէյդաւար, Սարգեղ, Սարամէրիկ, Սալմաստ, Սառնա, Սորանա, Սաւա, Վառ, Վոր, Վարդան, Փայաջուկ, Փիս, Քալաշան, Քեոհնաշահր։

Գաղթականների ընդհանուր թիւն էր միջին հաշուով 8427 ընտանիք կամ առնուազը 60,000 հոգի։

Փախստական տառապեալների աչքը յառած էր Ամենայն Հայոց Մայր Աթոռ Էջմիածին և Նրա Գահակալ Տ. Տ. Գեորգ Ե. Վեհափառ Կաթողիկոսին, որ և իւր հօտի անակնկալ տագնապի գոյժը առնելուն պէս, փութաց առաջին օգնութիւնն հասցնել, լցուած թշուառներին ընդունելու և պատուարելու, քաղցածներին կերակրելու, հիւանդներին ապաքինելու, անանկների մերկութիւնը ծածկելու, որբերին ժողովելու և հովանաւորելու հայրական սիրով և հոգատարութեամբ։ Եղբայրական Օգնութիւնը հայ ազգի վսեմ պարտքն էր։ Եւ Ամենայն Հայոց Հայրա-

պետն անմիջապէս ազգու կոչ ուղեց իւր հանուր հօտին, շուտափոյթ օգնութիւն թախանձելով։ Մայր Աթոռի միաբանութիւնը և Հայոց եկեղեցու հոգեւոր զինուորութիւնը անձնուրացութեան, իսկ հայ ազգը ամեն կողմից առատ դրամական և նիւթական աջակցութեան իրական երաշխիք ընձեռեց իւր ալեղարդ Հայրապետին, վտարուած հայ հօտը փարախելու և նրա տագնապն ու վիշտը ամոքելու համար, զօրացած փախստականներին իրօք ապաւէն լինելու և աւերակ հայրենիքը մօտիկ ապագայում վերաշինելու յուսով և հաւատով։

2. ԵՂԲԱՅՐԱՎԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎԱՆԱՌՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ

Նորին Սրբութիւնը, ռուս-թրքական պատերազմի յայտարարումից անմիջապէս յետոյ, նախատեսնելով հայ ժողովրդին ապառնացող պատերազմական աղետի և արհաւիրքի մեծութիւնը, 1914 թ. նոյեմբերի 7-ին Կովկասի Փոխարքային ուղած № 1719 գրութեամբ համազգային հանգանակութեան թոյլտուութիւն էր ստացել և նոյեմբերի 20-ի № 1767—1772 կոնդալներով, յանուն թեմակալ Առաջնորդների, ընդհանուր կոչ արել հայ ժողովրդին, ազգովին նախապատրաստուելու գալիք փորձութեանը ընդառաջել և հայ համայնքի կենսունակ ու կարող ոյժերը գործի դնելով ստեղծել նպատակայարմար հաստատութիւններ, պատերազմից վտանգուած ազգայինների՝ փախստականների, վիրաւորների, գործող բանակի զինուորների ընտանեկան, այլ և կամաւոր զինքի բազմապիսի կարիքները զարմանելու համար։ Եւ իրօք Հայրապետական հրահանգիչ պատուէրի համաձայն, կարճ ժամանակի ընթացքում, բազմաթիւ ազգային հաստատութիւններից և ընկերութիւններից զատ, Նորին Վեհափառու-

թեան հովանաւորութեան ներքոյ, Մայր Աթոռի միաբանների՝ թեմակալ Առաջնորդների, վիճակային փոխանորդների, գործակալների և քահանաների նախազահութեամբ և աշխատական ներկայացուցիչների անդամակցութեամբ քաղաքներում և աւաններում կազմուեցան եղբայրական օգնութեան յանձնաժողովներ, որոնք հանգանակութեամբ և այլ կերպ ժողոված դրամական նպաստ, մթերք և զգեստ էին հասցնում էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսին և միաժամանակ ապակենտրոն գործունէութեան ձեռնարկում պատերազմից փաստուածներին առ տեղեւան խնամելու համար։ Այսպիսով Սարիղամիշի մեծ աղետի առթիւ դեկտեմբերի 20-ին սկսուած գաղթի խուճապից առաջ Նորին Սրբութեան տրամադրութեան տակ զանազան էր բաւականաչափ նպաստի գումար և վերահաս փախուստից տագնապածներին անհրաժեշտ կենսական նիւթեր, օգնութեան առաջին գործը գոհացուցիչ հիմքի վրայ դնելու համար։ Եղբայրական Օգնութեան զբօղի տակ Յանձնաժողովները գործում

էին էջմիածնում, Երևանում, Հին Նախիջևանում, Զուլֆայում, Իզդիրում, Ալեքսանդրապոլում, Ախալքալաքում, Նոր Բայազետում, Նուշում և այլուր, որոնց գոյութեան նեցուկ և մատակարար

հանդիսանում էին հեռավոր հայաբնակ վայրերից բաղմաթիւ աղբային հաստատութիւններ և պատերազմից ծագած բաղմաթիւ ժողովրդական կարիքներին հոգատար կոմիտէներ:

3. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՆՈՐ ԵՒ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՉՆԵԺՈՂՈՎ ԵՒ ՆՐԱ ՊԱՐՏՔԻ ԵՒ ԻՐԱՆՈՒՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԸ

Նորին Սրբութեան հաստատուն կամքն էր, իւր հայրենի երկրից վտարուած և աստանդական հօտը Ռուսաստանի սահմաններում անխտիր հովանաւորել և իւր հայրական խնամքը հաւասարապէս տարածել գաղթականների վրայ, այլ և աղբային նպաստը արդար մատակարարութեամբ բաշխել արկածեալներին: Այս ցանկութեան իրականացումը պայմանաւորուած էր Նղբայրական Օգնութեան Յանձնաժողովների համերաշխ գործունէութեամբ: Անհրաժեշտ էր նաև անմիջական հսկողութեամբ և տնօրէնութեամբ ստուգել նպատակների ստացումն ու անշեղ գործադրութիւնը: Այս դիտաւորութեամբ Նորին Սրբութիւնը 1914 թ. դեկտեմբերի 28-ի № 1990 սրբատառ Կոնդակով բարեհաճեց Մայր Աթոռում, իւր անմիջական հովանաւորութեան ներքոյ Գործող Յանձնաժողովը վերածել մի կենտրոնական հաստատութեան, վերանուանելով «Ս. էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողով» և վստահանալով նրան հետեւալ պարտականութիւններն ու իրաւունքը.

1. «Փութով ժողովել ի մի գամեւայն տեղեկութիւն գնալ գաղթականաց, որք ի պատեառս ուսումնական պատեալովի բողբալ են գտունս և գտացուածս իւրեանց և գտանին ի բեռաւ կացութեան, ցուեալ յայլ և յայլ տեղիս»:

2. «Քննել ի ձեռն մասնաժողովոց, ներկայացուցչաց և վստանելի անձանց զվիճակ նոցա և գնետեւանաց յայտ առնել Մեզ ի տնօրէնութիւն»:

3. «Մտանել ի բանակցութիւն քնդ Յանձնաժողովս Եղբայրական Օգնութեան, հաստատեալս Կոնդակով Մերովի ի գանազան քաղաքս, տալով նոցա զկարեւոր տեղեկութիւնս վասն գաղթականաց և խնդրելով ի նոցանէ գտեղեկագիրս գործունէութեան իւրեանց, մատուցանել Մեզ ի գիտութիւն»:

4. «Միաւորել գործունէութիւնս ումեւայն

Յանձնաժողովոց Եղբայրական Օգնութեան և ի դէպս անհրաժեշտութեան, նախապէս ընկալեալ ի Մեկն զկարեւոր հրահանգս, հրաւրել աստ ի Ս. էջմիածին զներկայացուցչս նոցա ի խորհրդակցութիւն, վասն որոշելոյ զընդհանուր սկզբունս գործունէութեան յօգուտ գաղթականաց»:

5. «Խորհրդակցել պարպեալբար ընդ ներկայացուցչս մեծակալ քաղաքաց և սահմանագլուխ աւանից վասն կանոնաւորապէս պահպանելոյ և բնակեցուցանելոյ գաղթականս ի քաղաքս գիւղօրայս յայտ ցրտագին եղանակի»:

6. «Խնամել ըստ ամենայնի և տալ նոցա զբժշկական օգնութիւնս, սովորել և մխրթալ գնոսա հոգեպէս»:

7. «Ստանալ ի Սինօդէ Ս. էջմիածնի գծապաշինեալ մատենս և պահել գամեւայն հաշիւս կանոնաւորութեամբ և կանխագոյն բոյլտուութեամբ Մերով ստանալ ի Կանապանէ Մայր Աթոռոյս գանհրաժեշտ դրամս ի նուիրատուութեանց յօգուտ գաղթականաց»:

Սրբազնագոյն Հայրապետի բարեհաճութեամբ Յանձնաժողովի անդամութեան էին կոչուած Մայր Աթոռի միաբաններից Տ. Եփրեմ, Տ. Բագրատ, Տ. Մատթէոս Կախկոպոսները, Տ. Գաբրիէլ, Տ. Բարդէն և Տ. Վրթանէս վարդապետները, որոնք դեկտեմբերի 28-ի նիստին Յանձնաժողովի նախագահութիւնը յանձնեցին Տ. Եփրեմ Կախկոպոսին, գանձապահութիւնը՝ Տ. Վրթանէս վարդապետին և քարտուղարութիւնը Տ. Մատթէոս Կախկոպոսին*), որից յետոյ Յանձնաժողովը անյապաղ ձեռնամուխ եղաւ իւր բեղմնաւոր գործունէութեամբ արդարացնելու Նորին Սրբութեան յայտերը: Խորհրդակցական նիստեր տեղի էին ունենում առաջին երկու ամիսներին՝ զբերէ ամեն օր, ապա շաբաթական 4—5 անգամ և այդպէս շարունակ մինչև երկրորդ կամ մեծ գաղթը, 1915 թուի յուլիսի 20-ը:

*) Ս. էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովի կողմը ապագայում փոփոխութեան է ենթարկուել որի մասին համապատասխան տեղը յիշատակութիւն կրին:

4. ՏԱԿԿԱՀԱՅ ԵՒ ՊԱՐՍԿԱՀԱՅ ՓԱՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԽՆԱՄՔ ԵՒ ՀՊԻԱԺՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՐՈՒՄՆ.—Նորին Վեհափառութեան Հմր. 1990 Կոնդակի մէջ արձարծուած էր այն ուշագրաւ միտքը, որ գաղթականները անպայման պատսպարուին սահմանամերձ երևանի թեմի հայ գիւղերում և աւաններում, որպէս զի աղետի ծփուն ալիքներից տառապած հայութեան մնացորդները իսպառ չանջատուին հայրենի բնավայրից, այլ բարեպառն բերմունքին նորից հայրենիք դառնալու, իրենց քայքայուած տնտեսութիւնը վերանորոգելու և մոխրակոյտի տակ թաղուած օջախը շէնցնելու գիւրութիւն ունենան:

Յանձնաժողովը խելամուտ էր այս իմաստուն հրահանգին: Եւ անմիջապէս, գաղթի սկզբին, համապատասխան կարգադրութիւն եղաւ Յանձնաժողովի բաժանմունքներին, մասնախմբեր կազմել և արդէն նախագծուած ծրագրով փախըստականների ընդունելութեան, երևանի թեմի սահմանամերձ գիւղերը առաջնորդելու և պատրաստելու փոյթ տանելու: Եւ որովհետեւ գաղթականութեան մեծագոյն հոսանքը անցնելու էր Իզդիրի և Զուլֆայի վրայով, ուստի և Յանձնաժողովը իւր առաջին հոգսը դարձրեց Զուլֆայում և Իզդիրում կուտակուած բերաւոր փախտականներին անցի ճանապարհ հարթել զէպի էջմիածին և Երևան:

Մասնախմբերը, որոնց գլուխ էին կանգնած Մայր Աթոռի միաբանութեան անդամները մասնակցութեամբ երևանի և Վաղարշապատի հայ մտաւորականների, այլ և ձեմարանի ուսանողների ու զանազան աղբային ընկերութեանց ներկայացուցիչների, գաղթի երկճիւղ ուղու երկարութեամբ հիմնեցին յարմարաւոր վայրերում՝ Իզդիրում, Օրգովում, Մարգարաւում, Սև ջրի սփին, էջմիածնում, Փարաքարում, Զուլֆայում, Հին Նախիջևանում, Զահուկում, Ապրակունիսում, Ղամարլուում սննդատու կայաններ, հանգստեան իջևաններ, ուր հիւժուածներին հաց, կերակուր, թէյ էր մատակարարուում, մերկին տաք հագուստ, ցրտաւար հիւանդներին բժշկական տարրաւոր օգնութիւն, որով փոքր ի շատէ փախտականները կազդուրուած դիմում էին զէպի կենտրոնական վայրեր՝ Նախիջևան, Երևան, էջմիածին:

Գաղթի տեսարանը աղէխառը էր և սոսկալի: Հազարաւոր ձերուներներ, կանայք, զեռատի կոյսեր և հարսներ, պատանիներ և մանուկներ խու-

ճապով, շարան—շարան, անցած սարսափից հաւածական, գալիք փորձութեան երկիւղը սրտում, որը որդեկորոյս, սիրելու մահը ողբալով, որը մերկ ու բոկոտն, հիւանդութիւնից տնջալով, որը հիւժուած ծծկեր մանուկը կրծքին սեղմած, երկրորդը շալակին, երրորդի թեկից բռնած, որը փրկած ինչքն ու կայքը սայլին ու զրաստին բարձած, լացով արտասուքով, ցրտատար ոտքով ճեղքում էր լեռներում կուտակուած ձիւնն ու սառոյցը, տրորում հարթութեան տիղմն ու ցեխը, միշտ ահաբեկ ուշքը դուրումի երկիրը դարձրած, գլխիկոր, յամբաքայլ յառաջ ընթանալով անյայտութեան մէջ զէպի մի անծանօթ գիւղ, մի հիւրընկալ օջախ:

Այս բերաւոր թշուառների հոծ կուտակումը Զուլֆայում և Իզդիրում խափանելու և նրանց փախադրութիւնը զէպի ներքին գաւառները փութացնելու նպատակով, Նորին Վեհափառութեան յանձնարարութեամբ Ատրպատականի Առաջնորդ Տ. Ներսէս և Երևանի Փոխ—թեմակալ Տ. Խորէն Կախկոպոսները, առաջինը Զուլֆայում պ. պ. Ա. Շարաֆեանի և բժիշկ Վ. Արշակունու, երկրորդը Իզդիրում պ. Ս. Սաչատրեանի մասնակցութեամբ, գաղթը տնօրինելուց դատ, միջնորդութիւն էին յարուցանում զինուորական և հաղորդակցութեան պետերի առաջ փախստականներին ինչ—ինչ գիւրութիւններ՝ պաշարեղէն, արտակարգ գնացքներ, կառքեր, սայլեր, զրաստներ ընձեռելու, այլ և փախստականներին սահմանագլխին ցուցակագրելու կարգադրութիւնը և մաքսային տուրքը վերացնելու, որպէս զի փախստականները հարկադրուած չլինին օրերով և շաբաթներով ցրտի, բուքի, քաղցի ու ծարաւի մատնուած անպաշտպան մնալ: Այս միջնորդութիւնը յարգուեցաւ, ամեն հնարաւոր գիւրութիւն տրուեցաւ: Դեկտեմբերի վերջերին գաղթի առաջին շարքերը հասան էջմիածին և Երևան, որտեղ կանխապէս Նղբայրական Օգնութեան, վանական և հասարակական կազմակերպութիւնների ջանքով պատրաստուած էին ապաստանարաններ, հանրակեցարաններ, սեղանատներ, որբանոցներ, հիւանդանոցներ, այլ և ամբարուած կենսական մթերք և հանգերձեղէն: Իզդիրից մինչև էջմիածին գաղթականների փոխադրութիւնը տնօրինում էին Տ. Տ. Գաբրիէլ, Վրթանէս և Թադէոս վարդապետները ձեմարանական ուսանողների գործա-

կցութեամբ, իսկ սննդատու կայանները և իջևան-
ների ղեկավարութիւնը յանձնուած էր Տ. Արիս-
տակէս վարդապետին, Սարգսրապատի գործակալ
Տ. Գարեգին քահանային և զինուորական բժիշկ
պ. Տէր Սահակեանին: Հոգստարութեան նոյն-
պիսի փոյթ և կազմակերպուած աջակցութիւն
էին ցոյց տալիս զաղթականներին Ջուլֆայում
Տ. Ներսէս եպիսկոպոսի հսկողութեամբ: Երեւա-
նում օգնութեան գործին գլուխ էր կանգնած Տ.
Խորէն եպիսկոպոս Թեմական, Նահանգական և
Կանանց Յանձնաժողովների ձեռնտուութեամբ,
Հին Նախիջևանում՝ Տ. Սիօն վարդապետ Եղբայ-
րական Օգնութեան Յանձնաժողովի և Կովկասի
Հայոց զանազան ընկերութիւնների լիազօր պ.
պ. Ա. Պապեանի, Ա. Յարութիւնեանի և Հ. Ծա-
տուրեանի աջակցութեամբ, Ալեքսանդրապոլում՝
Տ. Արտակ վարդապետ, բժիշկ Պատուական Յով-
հաննիսեան և բազմաթիւ յանձնաժողովների
ներկայացուցիչներ, իսկ Կարսում՝ Տ. Ներսիս
վարդապետ և Եղբայրական Օգնութեան լիազօր-
ները: Ամենուրեք զաղթի ճանապարհին, յարմար
կայաններում օր ու գիշեր եռում էր Եղբայրա-
Օգնութեան գործը, որին յօժարակամ անձնու-
րացութեամբ նուիրուած էին առաձին խմբակ-
ներ, հոգևորականներից, ուսանողներից, կամաւոր
քոյրերից, բժիշկներից բաղկացած, որոնք ձեռքի
տակ եղած հնարաւոր միջոցներով ջանադիր էին
մեղմացնելու թշուառների անհուն վիշտը, լցու-
ցանելու նրանց բազմապիսի կարիքը, փրկելու
վտանգուածների կեանքը և նպաստելու զաղթի
յաջող ընթացքին:

Գաղթի յորձանքը սահմանազլխից չարու-
նակուեցաւ նաև 1915 թուի յունուարին յաջոր-
դական նուազումով, իսկ վերջին ալիքը հասաւ
Էջմիածին յունուարի 27-ին: Դոքա Ալաշկերտի
ամենից աւելի կեղեքուած գիւղերի՝ Ալաշկերտի,
Մուլա-Սուլէյմանի, Չեղկանի, Խոշեանի փրկուած
սակաւածիւր բնակիչներն էին՝ թուով 300 հոգի,
քրքերից լլկուած, խոշտանգուած կանայք և երե-
խաներ, որբեր և այլերներ, որոնք ուսւ բանակի
ձեռքով կեղեքիչներից ազատուած, յունուարի
10—27-ը իրենց զառնագոյն զրկանքների մէջ
վայելել էին բանակի հրամանատար Օգանովսկու
հովանաւորութիւնը, Նորին Վեհափառութեան
առանձին առաջարկութեամբ և ուղարկած դրա-
մական նպաստով, և նրա օժանդակութեամբ մեծ
գժուարութիւններ յաղթելով հասել Իզդիր և
այնտեղից Էջմիածնի և Երևանի Յանձնաժողով-
ների տնօրէնութեամբ փոխադրուել Էջմիածին:
Գաղթի ամենածանր աղետը՝ բծաւոր և որովայնի
տիֆ, զեղինտերիա սրանց էր վիճակուած և սրանց
վարակմամբ համաճարակը ապագայում հետզհետէ

բուռն դրաւ զանազան կենտրոններում՝ Իզդիրում,
Էջմիածնում, գիւղերում և այլուրեք, մանաւանդ
որ տակաւին հիւանդանոցները կազմակերպուած
չէին և բժշկական օգնութիւնը կաղում էր բժիշկ-
ների և օգնականների բացարձակ բացակայու-
թեան պատճառով, չնայելով Յանձնաժողովների
փութկոտ հոգածութեան:

ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ.—Գաղթի առաջին երկու
շաբաթուայ ընթացքում Էջմիածինը, Երևանը,
Ալեքսանդրապոլն ու Նախիջևանը լցուեցան
փախստականներով: Նրանց երկար ժամանակ
քաղաքներում մնալը անհնարին էր մթերքի պա-
կասութեան, այլ և այն պատճառով, որ այդ
կենտրոնները չէին կարող գոհացում տալ զաղ-
թական գիւղացիութեան տարրական պահանջնե-
րին: Առաջին կազդուրիչ ապաստարանը տալուց
և կրած ծանր վիշտն ու դառնութիւնը թեթեակի
ամոքելուց յետոյ անհրաժեշտ էր փախստական-
ներին տեղափոխել շրջակայ գիւղերը, ուր թշուառ-
ները կարող լինէին իրական հանգիստ՝ իրենց
ծանօթ կեանքի բարիքները վայելել, գիւղական
տաք և հիւրընկալ օջախի շուրջը բոլորած, բնու-
թեան ծոցում սովորական աշխատանքի նուիր-
ւելով: Այսպէս Եղբայրական Օգնութեան կենտրո-
նական Յանձնաժողովները միաժամանակ երեք
ծանր և էական գործ ունէին կատարելու՝ փա-
խստականների ժամանակաւոր պատսպարումը
կենտրոններում, փոխադրութիւնը գէպի գիւղերը
և գիւղական համայնքների կազմակերպութիւնը՝
բնակէր և թշուառ եղբայրներին հիւրնկալելու
ծանր պատքը կրելու համար:

Էջմիածնից փոխադրութեան աշխատանքը
սկսուեցաւ 1914 թ. դեկտեմբերի 29-ից և շա-
բունակուեցաւ մինչև 1915 թ. յունուարի վերջը
Տ. Գարեգին, Տ. Բարգէն, Տ. Արիստակէս և Տ.
Վրթանէս վարդապետները ղեկավարութեամբ Փո-
խադրութիւնը կատարում էր տանեակ սայլերով
և ֆուրգուներով գէպի Երևան և շրջակայ գիւ-
ղերը: օրական տեղափոխում էին 200—700 հոգի:
Հիւանդները բացառապէս ուղարկուած էին Երե-
ւան, ուր բժշկական օգնութեան աւելի գիւրու-
թիւններ և կազմակերպուած հիւանդանոցներ
կային հերթապահ հայ բժիշկների և խնամատար
հայ տիկնանց ղեկավարութեան տակ, որոնց բա-
րեկարգութեան վերահսկիչն էր տիկին Ա. Մուսի-
նեան: Իսկ գիւղերն ուղարկելուց առաջ Յանձնա-
ժողովը անհրաժեշտ համարեց զաւառապետի
գործակալ քահանաների և Մայր Աթոռի միա-
բանութեան տեղեակ անդամների խորհրդակցու-
թեամբ որոշել Էջմիածնի շրջակայքի այն գիւ-

ղերը, որոնք բարեկեցիկ լինելով հնարաւորութիւն
ունէին հիւրընկալել փախստականներին: Բացի
դրանից չորս յանձնախումբ ուղարկուեցաւ Տ.
Արիստակէս, Տ. Թադէոս, Տ. Երուանդ վարդա-
պետներ և Տ. Սարգիս քահանայ Ասլանեանի
գլխաւորութեամբ, շրջելու գիւղերը և բանակցելու
համայնքների հետ, թէ իւրաքանչիւր գիւղ քանի՞
փախստական կարող է պատսպարել, կերակրել,
վառելիք տալ նրանց, այլ և կեր անասուններին,
և որքան ժամանակ: Պահանջուած տեղեկութիւն-
ները և գիւղացիների դրաւոր համաձայնութիւնը
ստանալուց յետոյ միայն զաղթականները փո-
խադրուեցան հետզհետէ Մուլաբայազիտ, Էջի-
լար, Շահրիար, Գեչըլու, Սարգարապատ, Վերին
և Ներքին Խաթունարիս, Զէյլա, Այլանլու, Հա-
ջիլար, Ֆուսքանոց, Ալիբեկլու, Հայթաղ, Մու-
լադուրսուն, Խզնաւուզ, Աղանատուն, Վերին
Այլանլու, Գրամփի, Բեորփալու, Աղջաղալա,
Հաջիդարէ, Դոխս, Մուղանջուզ, Զիբուխի, Ար-
մթլու, Ուղուն Օբա, Բալաքեարիս, Օհաննավանք,
Մուղնի, Դզլթամիր, Փարբի, Եղուարդ, Աշտա-
րակ, Օշական, Կարբի, Բիւրական, Թալիշ, Գեղ-
լու, Թալին, Դրմզլու, Դադալու, Մաստարա, Կօշ
և այլն: Փոխադրութիւնը կատարում էր ցու-
ցակներով. հետեւում էին համագիւղացի փախս-
տականներին մի կամ մի քանի հարեան գիւղե-
րում տեղաւորելու սկզբունքին: Գիւղ գնացող
փախստականները Մայր Աթոռի պահեստից պա-
նում էին հանգերձ, անկողին, թէյ, շաքար,
սապոն, ալիւր, կուժ և այլ շատ անհրաժեշտ
իրեր, այլ և յանձնարարական թուղթ տեղական
քահանայի, տանուտէրի և կանխապէս ընտրուած
զաղթականական Հոգաբարձութիւնների անու-
նով, որոնք արտօնուած էին ապագայում իրեն
Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի մաս-
նաձեւեր իրենց յանձնուած փախստականներին
խնամակալել և նրանց վիճակի ու կարիքի մասին
տեղեկութիւն հաղորդել և զեկուցումն անել
Դլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովին:

Նոյնպիսի հիմքի վրայ էր դրուած զաղթա-
կանների տեղափոխութիւնը Երևանից, Նախիջե-
ւանից և Ալեքսանդրապոլից: Սկզբում Երևանից
ուղևորում էին Կոտայք, Ծաղկաձոր, Նոր Բայա-
զիտի շրջակայքը, ապա նաև Զանգիբազար,
Գառնիբազար և Շարուր: Որովհետև ճանապարհը
շատ երկար էր, տեղ-տեղ հաստատուած էին
սննդատու կայաններ և իջևաններ՝ Բանաքեռում,
Էյլարում, Սուխոյ Ֆոնտանում, Ախտայում, Ելե-
նովկայում, Նոր Բայազիտում և Ղամարլուում:
Նախիջևանից զաղթականութիւնը երկու շաբաթ-
ուայ մէջ տեղաւորուել էր շրջակայքի 50 հայաբնակ
գիւղերում Տ. Սիօն վարդապետի, Եղբայրական

Օգնութեան Յանձնաժողովի և պետական իշխա-
նութեան հոգածութեամբ, որոնց նեցուկ էր հայ
և թուրք ազգաբնակչութիւնը վերոյիշեալ կազ-
մակերպութիւնների տրամադրութեան տակ դրած
ուսուստի առատ պաշարով և փոխադրութեան
սայլերով: Այս շրջանում էին գլխաւորապէս
կենտրոնացած նաև պատկառելի թուով ասորի
զաղթականներ, որոնք հաւասար և անխտիր
խնամք էին վայելում: Ալեքսանդրապոլում փա-
խստականներին տեղաւորելու և խնամելու գոր-
ծին սկիզբն էր դրուած դեռ զեկուսմբերի 5-ին:
1915 թուի յունուարի սկզբին բազմաթիւ փա-
խստականներ տեղաւորուած էին քաղաքում,
ապա փոխադրուեցան մասամբ Շիրակի և Ղա-
րաքի լիսայնի գիւղերը, ուր անխտիր ապաստարան
էր գտնում հայ, յոյն, վրացի, ասորի և ռուս
բազմացեղ տարրերից բաղկացած զաղթականու-
թիւնը: Յիշատակելի է նոյնպէս, որ յիշատակուած
կենտրոններից զաղթի սկզբին բաւականաչափ
փախստականներ ճանապարհի ծախք և այլ կեն-
սական մթերք ու հագուստ ստանալով յօժարա-
կամ անցնում էին գէպի հիւսիսային նահանգ-
ները, մանաւանդ հիւսիսային Կովկաս, ոմանք
իրենց կորցրած հարգատեններին որոնելու, ոմանք
իրենց ազգականներին ապաւինելու նպատակով:

ՅՈՒՑԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.—Գաղթի սկզբին փախստականներին ցու-
ցակադրելու հետամուտ էր սահմանազլխի պե-
տական իշխանութիւնը: Սակայն խուճապն ու
սահմանազլխի կայաններում օր ըստ օրէ կու-
տակուող փախստականների բազմութիւնը, որ
անմիջական օգնութեան, սննդի, հագուստի,
բնակարանի մեծ կարիք ունէր, միանգամայն
անհնարին էին դարձրել ցուցակադրութիւնը,
ուստի և Եղբայրական Օգնութեան Յանձնաժո-
ղովի միջնորդութեամբ պետական վարչական այդ
կարգադրութիւնը վերացուեցաւ (Հմմ. եր. 13.)
այն պայմանով, որ Երևանի Նահանգապետի տնօ-
րէնութեամբ մօտիկ ապագայում իրականանայ
փախստականներին առաջին իսկ ասպնջակող
կենտրոններում՝ Երևանում, Էջմիածնում, Ալեք-
սանդրապոլում և Նախիջևանում, ուր հէնց առա-
ջին օրերից պետական պաշտօնեաները սկսել էին
ցուցակադրել, որով յապաղում էր փախստական-
ների փոխադրութիւնը գէպի գիւղերը և անհնա-
րին կացութիւն ստեղծուում կենտրոնական վայ-
րերում բնակարանի, մթերքի և օգնութեան այլ
անհրաժեշտ միջոցների բացակայութեան պատ-
ճառով: Ուստի Կարգադիր Յանձնաժողովը Տ.
Խորէն եպիսկոպոսին և պ. Մ. Մուսինեանին հե-

ազգրով յանձնարարեց իբրև պատուիրակ ներկայանալ Նախագահության և խնդրել յետաձգելու գաղթականների ցուցակագրութիւնը, մինչև որ նրանք վերջնական բնակութիւն հաստատեն Երևանի նահանգի գիւղերում: Այս միջոցով թիւը ցանկալի հետևանք ունեցաւ: Արագ փոխադրութեան այդ գլխաւոր խոչընդոտը վերանալուց յետոյ, Յանձնաժողովը փոյթ ունեցաւ առանձին մասնախմբերի միջոցով՝ բաղկացած ուսանողներից, դպրոցականներից, հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներից, մասնաւորապէս իւրաքանչիւր գաղթավայրի փախստականների և ընդհանրապէս Երևանի նահանգում ապաստանածների լրիւ, յականջ յանուանէ շնչագրութիւնը կազմել հարուստ վիճակագրական տեղեկութիւններով յատուկ պատրաստուած բլանկների վրայ: Սրանից զատ յունուարի վերջին կազմակերպուեցաւ նաև գաղթականութեան միօրեայ ոչ անուանական աշխարհագիր, ընդհանուր թիւը իմանալու նպատակով: Վիճակագրութեան կազմակերպութիւնը և իրականացումը գլուխ է բերուել Տ. Տ. Մատթէոս, Խորէն, Բագրատ Կալսեղապոսների և Տ. Բագրէն վարդապետի ջանքերով:

Այս վիճակագրութեամբ, որ Նոյնի Վեհափառութեան 1914 թ. դեկտեմբերի 28-ի № 1990 փառութեան 1914 թ. դեկտեմբերի 28-ի № 1990 փառութեան 1914 թ. դեկտեմբերի 28-ի № 1990 կոնդակով արտայայտած հրահանգներից մէկն էր, երեք էական խնդիր լուծուեցաւ. նախ՝ գաղթականութեան թուական քանակի որոշումը, երկրորդ՝ ամեն տեսակ նպաստի հաւասար և արդար բաշխումը և համապատասխան ծախսը նախահաշուի նախագծումը, երրորդ՝ նախքան գաղթը փախստականների հայրենիքում թրքական գաղանդութեան երեսից կրած զրկանքների, տառապանքների բռնաբարութիւնների, առևանգումների, անձնական և նիւթական կորուստների արձանագրումը, որ իբրև պատմական նիւթ ապագայում պէտք է զրուի ազգերի իրաւախոհ արդարադատութեան ատենանի առաջ:

Ցուցակագրութեամբ պարզուեցաւ, որ գաղթի սկզբին էջմիածին եկած 15090 փախստականներից առ 1 փետրուարի 1915 թ. էջմիածնում հաստատուած էին բնակութեամբ 1000 հոգի, իսկ շրջակայքի գիւղերում 6200 հոգի. Երևան մտած 8017 հոգուց քաղաքում մնացել էին 2316, փոխադրուել՝ Կոտայք 1485, Ջանգիրասար 327, Գառնիքասար 1038, Ծաղկաձոր 1223, Նոր Բայազետի շրջան 110, իսկ աւելի հեռաւոր տեղեր ուղարկուել ըստ ցանկութեան 1518 հոգի. Իգդիրի շրջանում մնացել էին 2974. Հին Նախիջևանի շրջանում 10000 հոգի, որից 3000 ասորիներ. Ալեքսանդրապոլ մտած 5937 հոգուց՝ քաղաքում 3159, շրջակայ գիւղերում 2778 հոգի:

Ըստ այսմ Երևանի նահանգը պատսպարել էր 34128 օտարահաւատակ փախստական: Գաղթականների ընդհանուր և գաղթավայրերում հաստատուածների թուական քանակը 1915 թուի փետրուարից յետոյ շարունակ երբեք էր, աւելանալով կամ նուազելով, շնորհիւ այն հանգամանքի, որ գաղթի հոսանքը դեռ շարունակուում էր աւելի կամ պակաս թափով, ճակատի ուղմական յաջողութեան կամ անյաջողութեան և դրանից ծագող վտանգի և ապահովութեան համեմատ. գաղթական ընտանիքները անջատուած կամ կորած անդամներին որոնելու և գտնելու յոսով հարկադրուած էին տեղից տեղ թափառել, նոյն իսկ հայրենիք դառնալու խիղախ քայլ անել, իսկ ոմանք՝ յարմար բնակութեան վայր ընտրելու հոտից ընկնել: միւս կողմից Յանձնաժողովներն իրենք ստիպուած էին ծանր հիւանդներին միակուսացնելու, որբերին, ծնողազուրկ երեխաներին ժողովելու և կենտրոնական ապաստարաններում դեպքերու նպատակով գաղութներում թուական փոփոխութիւն յառաջ բերել:

ԲՆԱԿԱՐԱՆԻ, ՍՆՆԴԻ, ՀԱԳՈՒՍՏԻ ԵՒ ԱՅԼԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՐԷՆԻ ՄԱՍԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ.— Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովի գործի էական և դժուարին մասը կազմում էր տարածականութեամբ իրարից բաժանուած փախստական գաղութներին կերակրելու, հագցնելու և նրանց ապրուստի տարրական պահանջները ցուցանելու պարտականութիւնը և հաւասար մատակարարութեան վերահսկողութիւնը, որին անչափ փափազում էր Նոյնի Սրբութիւնը: Սկզբում գաղթի խուճապը և բազմապիսի զրկանքները մոտենում հոծ բազմութեան կուտակումը մի քանի կենտրոններում բնականաբար յառաջ բերաւ բոլոր ձեռնարկութիւնների մէջ գրեթէ գլուխ կորցնելու չափ շփոթութիւն և իրարանցում, մասնաւորապէս որ կանխաւ պահանջի համապատասխան չափով պարէնի նախապատրաստութիւն տեսնելու հնարաւորութիւն չկար, պակասաւոր էր նաև աշխարհաւոր և հմուտ գործակիցների կազմակերպուած աջակցութիւնը:

Մոնղալու կայաններում, իջևաններում և բժշկական օգնութեան հանգրուաններում փոքր ինչ ոյժ ստացած գաղթականութիւնը դեկտեմբերի վերջին և յունուարի առաջին օրերը առանձին մասնախմբերի դիւղավարութեամբ էջմիածնում տեղաւորուեցաւ. տնայինները՝ վանքի ընդունաւ սեղանատանը, ազարակում, վանքապատկան շուկայի խանութներում, Եղբայրական Օգնութեան վարձած բնակարաններում, տեղա-

կան զօրանոցի ազատ մասերում, գիւղի ազգային և պետական դպրոցների շէնքերում, Հռիփսիմէի, Գայիանէի և Շողակաթի պարապ շէնքերում և շտեմարաններում, իսկ փոքր ի շատէ ունեւորները իրենց վարձած մասնաւոր տներում: Վառելիք և լուսաւորութիւն անխտիր տրուում էր վանական պահեստից: Երևանում Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովից նշանակուած կառավարիչներ եկող գաղթականներին տեղաւորում էին թեմական, Գայիանեան, ծխական դպրոցներում և Ս. Սարգիս եկեղեցուն կից վարձուած շինութեան մէջ. նոյն ձևով նաև Նախիջևանում, Խզդիրում և Ալեքսանդրապոլում: Այս կենտրոնական վայրերում միաժամանակ կազմակերպւում էր նաև գաղթականների փոխադրութիւնը դէպի մերձակայ Սարգարապատի, Աշտարակի, Կոտէից, Գառնիի, Ջանգու և Գողթնեաց գիւղերը, ուր հիւրընկալ տեղացիները իրենց տները, գոմերը և մարազներն էին տրամադրում փախստականներին: Այս վիճակը շարունակուեցաւ գրեթէ մի ամիս, մինչև որ ամենքը բնակութեան հաստատուն տեղ ստացան Յանձնաժողովի մեղուաշան աշխատութեամբ:

Առանձին փոյթ ունէր Ս. Էջմիածնի Կարգադիր Յանձնաժողովը նաև փախստականներին պատկանող խաշների պահպանութեան նկատմամբ: Սահմանազլխի գաղթավայրերից բազմաթիւ ընտանի կենդանիներ աղատուել էին քրդերի և թշնամի զօրքի ձեռքից և կազմում էին փախստականների միակ թանգարժէք ունեցուածքը, որի պահպանութեան համար անշուշտ առանձին խնամք էր պէտք: Անտէր անասունները, որոնց նախիրներով կամաւորական խմբերն էին աղատել և վարել դէպի ռուսական սահմանը, յանձնուած էին Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին, պատսպարւում ու կերակրւում էին Մայր Աթոռի ազարակում վանքապատկան կերով. իսկ սեփականատէրերի անասունները իրենց տէրերի հետ փոխադրուում էին գիւղերը: Մի կողմից ձմեռուայ կերի պակասութիւնը և միւս կողմից գաղթականներին ճնշող գոյութեան նիւթական տաքնապը հարկադրում էր շատերին վաճառքի հանել տաւարը, այս կամ այն կարիքը ցուցանելու համար: Եւ տարաբաղդաբար հայ հասարակութեան մէջ գտնուում էին շահագէտ մարդիկ, մեծ մասամբ զօրքի կապալառուներ, որոնք շահագործելով խեղճ փախստականների դրամական և նիւթական կարօտութիւնը, շատ չնչին գնով առնում էին նրանցից մեծ քանակութեամբ տաւար և անոգալի կերպով զրկում նրանց իրենց ապագայ հայրենի տնտեսութիւնը վերականգնելու միակ յենարանից: Այս շարքը արմատախիլ

անելու դիտաւորութեամբ Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովը կտրուկ միջոց ձեռք առաւ. մի կողմից պետական իշխանութեան միջոցով բացարձակ արգելք դրուեցաւ անասունների գնմանը փախստականներից, այլ և շրջիկ հոգևորական և աշխարհական լիազօրների բերանով յորդոր կարգացուեցաւ գաղթականներին, սեփական տաւարը չծախելու, հասկացնելով վաճառման աւերիչ հետևանքը. միւս կողմից որոշուեցաւ կիրարկուած միջոցների ապարդիւն անյնելու դէպքում Յանձնաժողովի միջոցներով անասունները գնել և պահել յօգուտ գաղթականութեան և կամ զօրքը պարենաւորող իշխանութեանն առաջարկել ընթացիկ բարձր գնով և վաճառքից շահած գումարը դանձել յատուկ նպատակով, այն է՝ զործադրել գաղթականների ապագայ գիւղատնտեսութեան բարգաւաճման օգտին հայրենի երկրում: Այս առթիւ Յանձնաժողովը Համառուսական Ջեմստվոյի ներկայացուցիչ պ. Լ. Եւանգուելեանի միջոցով բանակցութիւն սկսեց Ալաշկերտում գործող բանակի հրամանատարի և Գաղաքների Միութեան Կովկասի ներկայացուցիչ պ. Ա. Խատիսեանի միջոցով Թիֆլիզում Կովկասեան ճակատի կենտրոնական Ինտենդանտովոյի հետ: Այս կերպ հնար եղաւ փրկել անասունների մի մասը, որ երկրորդ մեծ գաղթին և յետոյ բարիք եղաւ գաղթականական հիւանդանոցներին և որբանոցներին, թէև նոյն անակնկալ մեծ գաղթը խափանեց նաև անասունների պահպանութեան նախկին ծրագրերը:

1914 թ. դեկտեմբերի 28-ից մինչև 1915 թ. յունուարի 15-ը գաղթականութիւնը սնուցանելու հոգածութիւնը ծանրացած էր միայն կենտրոնական Յանձնաժողովի և նրա գլխաւոր բաժանմունքների վրայ, մի ժամանակ, երբ պահեստներում բաւականաչափ ալիւր և նպարիզէն չկար, իսկ դրսից՝ Մոսկուայից և Նոր Նախիջևանից յղած վազոնները ալիւրի, շաքարի, թէյի, սապոնի պաշարով և այլ տեղերից սպասուած մթերքը դեռ տեղ չէին հասել: Յանձնաժողովները զանազան կողմերից Նոյնի Սրբութեան գիմնով, նպաստի գումարներից մասն և բաժին էին ստանում, տեղացիներից անհրաժեշտ պարէնը գնելու, կենտրոնական վայրերից անցնող հազարաւոր գաղթական ամբոխին մի քանի օր, մի քանի շաբաթ հաց, տաք կերակուր, թէյ, շաքար, սապոն և հանդերձեղէն բաշխելու նպատակով:

Միայն էջմիածնի Յանձնաժողովը գաղթի առաջին երկու շաբաթուայ ընթացքում Գարեգին, Բագրէն, Վրթանէս և Թադէոս վարդապետների անմիջական հսկողութեամբ օրական կերակրում

էր առնուազը 7000—8000 հոգուց բաղկացած բազմութիւն, առատօրէն ցամաք հաց և թէյ մատակարարելով, ու մօտ 2000 հոգու ուտեաց և պահոց, փոփոխակի մսով և բրնձով կամ ձիթով ու բրնձով կերակուր բաշխելով վանքի և զօրանոցի ընդարձակ սեղանատներում և հանրակեցարաններում: Վանքի և Վաղարշապատի զանազան մասերում սարքուած թէյի ահագին կաթսաներն ու անդատու կայանները առաւօտից մինչև երեկոյ մատչելի էին օգտուել ցանկացող գաղթական հերթակալներին, որոնք ամաններով թէյ ու կերակուր էին կրում իրենց բնակարանները: Հաւասար բաշխման և խեղճերին ու անձարներին զրկանքից պաշտպանելու հոգսը քաջում էին ճեմարանի ուսանողներից և գիւղական ներկայացուցիչներից բաղկացած մասնախմբեր: Իսկ սննդի պակասութիւնից հիւծուած հիւանդներին և մանուկներին խնամելու և ժամանակին կաթ, ձու և թեթեւ սնունդ մատակարարելու փոյթ ունէր բարեգործական ընկերութեան տիկնանց յանձնախումբը Տ. Վահան քահանայ Աղազատեանի գլխավորութեամբ: Ալիւրի սպառումը այնպիսի չափերի էր հասել, որ վանական շտեմարանից զատ տեղական հացթուխների պահեստներն էլ դատարկուել էին: Վանական և գիւղական փուռերը գործում էին միայն գաղթականների համար: Յանձնաժողովի պահանջմամբ հացթուխներին արգելուած էր առ ժամանակ հացի վաճառումը բնիկ ժողովրդին: Հացի զգալի պակասը լրացնելու համար, Յանձնաժողովը Երևանից ներմուծում էր օրական 250—300 փութ հաց: Կարգադիր Յանձնաժողովի հրահանգութեամբ կերակրելու սկզբնական այս կարգը կիրարկուում էր նաև Երևանում, Ալեքսանդրապոլում, Իզմիրում և Նախիջևանում:

Գաղթականներին գիւղերում տեղաւորելուց յետոյ սննդի և հացի մատակարարումը աւելի բարդացաւ և Գլխավոր Կարգադիր Յանձնաժողովի եղբայրական օգնութեան գործը աւելի մեծացաւ և ընդլայնեց: Չնայելով որ գիւղական համայնքները համախօսական վճիռներով որոշ պարտականութիւն էին յանձն առել փախստականներին պատասպարելու և նրանց ապրուստի դաշնութիւնը ըստ կարելոյն մեղմացնելու և այդ ծանր լուծը գաղթի առաջին ամիսները քաջում էին համբերութեամբ և ժրջան տոկունութեամբ, սակայն անդական հայ ազգաբնակչութեան անտեսութեան արագ քայքայման լուրջ իրողութիւնը ապագայում նորանոր պահանջներ և հոգածութեան խնդիրներ դրեց Յանձնաժողովի առաջ: Երևանի գաւառներում հացի ծայրայեղ պակասութիւնը սովի վտանգ էր սպառնում: Ուստի

Կարգադիր Յանձնաժողովը Նորին Վեհափառութեան հաճութեամբ ժամանակին կոչ ուղեց հանուր ուսանալատակ հայութեան, գլխավորապէս ալիւր, շաքար, թէյ և կենսական այլ մթերք առաքելով նպաստել եղբայրական օգնութեան գործին և միաժամանակ ձեռնարկեց նուիրատուութեամբ դանձուած դրամական միջոցներով ալիւր, ցորեն, հանդերձեղէն և այլ անհրաժեշտ մթերք դնել կամ պատուիրել հեռաւոր տեղերից: Ապա Երևանի նահանգի գլխավոր կենտրոններում փութով կազմակերպեց եղբայրական Օգնութեան պահեստներ, որտեղից վիճակագրական տուեալներին համեմատ, գաղթականներին խնամող համայնական ընտրութեամբ կազմուած Հոգաբարձութիւնները, որոնք եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի մասնաճիւղերի դեր էին կատարում, յատուկ պահանջադրերով պարբերաբար ամեն տեսակ մթերք ստանում և բաշխում էին փախստականներին, առանձին յանձնախմբերի հսկողութեամբ, նրանց վիճակը բարելաւելու համար: Հաղորդակցութեան կենդանի կապը Ս. Էջմիածնի Գլխավոր Կարգադիր Յանձնաժողովի և սրա բաժանմունքների մէջ օրէ ցօր աճում, զարգանում էր և օգնութեան գործը հսկայական ծաւալումն ստանում շնորհիւ բազմաթիւ հայաբնակ վայրերից՝ կոմիտէաներից, ազգային հաստատութիւններից, ընկերութիւններից և բարեբաւերներից Էջմիածին, Երևան, Ալեքսանդրապոլ տեղացող դրամական և առատ նւթական նպաստի մուցակագրութիւնից և վիճակագրութիւնից առաջ գիւղերին ապուխտած գաղթականներին նւթապահանջ նպաստ պարբերաբար ուղարկուում էր պատահական քանակութեամբ շրջիկ խմբերի ձեռքով և բաշխուում Էջմիածնի գաւառում շրջանային վերահասու վարդապետների և գործակալների հրահանգութեամբ, իսկ միւս գաւառներում վարձական պաշտօնանների ձեռքով և յանձնախմբերի անօրէնութեամբ: Իսկ յետոյ 1915 թ. փետրուարի 1-ից սկսած, յունուարի 24-ի Էջմիածնի և Երևանի Յանձնաժողովների խառն նիստի որոշման համաձայն, նպաստը բաշխուում էր գաղթական ընտանիքներին հաստատուն և որոշ չափով, իւրաքանչիւրի անդամների թուի համեմատ, նպաստի բաժանչիւրի անդամների թուի համեմատ, նպաստի յատուկ և անուանական գրքոյկներով, որոնք պարունակում էին վիճակագրական մանրամասն ցուցմունքներ: Գիւղերում որոշուած էր տալ ամեն մի շնչին օրական 2 գրուանքայ հաց կամ 1½ գրուանքայ ալիւր, այլ և հանրային կաթ-1½ գրուանքայ ալիւր, մի անգամ տաք կերակուր և սոյից օրական մի անգամ տաք կերակուր և թէյ: Ուր հանրային կաթոսներ գնելու հնարաւորութիւն չկար, տրուում էր համեստ քանակութեամբ թէյ, շաքար, այլ և սննդեան այլ նիւ-

թեր՝ բրինձ, լոբի և այլն: Քաղաքներում նպաստը մեծ մասամբ զրամով էր լինում, 1—2, 3—5 և 5-ից աւելի անգամ ունեցող ընտանիքների շնչին օրական 15, 10 և 8 կոպէկ, թոյլ տալով ցանկացողներին հանրակացարանի խոհանոցից և թէյի կաթնայից օրական մի անգամ տաք կերակուր և թէյ ստանալ: Հանրակացարանում չապրողներին տրուում էր նաև բնակարանի վարձ Յանձնաժողովների իւրաքանչիւր անգամ սոհմա-հաճ չափով:

Այս բոլորից զատ գիւղերում ապրող գաղթականները օգտուում էին անդական բնակիչների հիւրընկալութիւնից, որ ըստ հայկական սովորութեան բնիկները ցոյց էին տալիս թշուառ ազգայիններին: Ազգային և եկեղեցական մեծ տօներին՝ Ծննդեան, Բարեկենդանին, Զատիկին և այլն Յանձնաժողովները և տեղական բնիկ ազգաբնակչութիւնը առանձին խումբ էին տաճում, սննդի առատութեան և տեսակաւորութեան նկատմամբ, գաղթականներին տօնական տրամադրութիւն ներշնչելու: Տեղ-տեղ շնչին տրուում էր 20—50 կոպէկ տօնական նպաստ:

Հայկական բարձրաւանդակի դաժան ձմրանը կովկասի հայութեան ապաւինած գաղթականութիւնը անցել էր ձիւնապատ լեռներով, պատառոտած ցնցոտիների մէջ փաթափուած: Ծանապարհին բաւականաչափ ցրտահար երեխաներ, ծերունիներ, սանդու մայրեր գաղթի ընդհանուր լանջերին, Արաքսի և Սև ջրի ափերին, սրանց վիճակը աւելի քան արգահատելի էր: Էջմիածին հասնելուն պէս, Նորին Վեհափառութեան հաճութեամբ Մայր Աթոռի և Հոգևոր ձեմարանի հանդերձատան դռները բացուեցան նրանց առաջ և աւելորդ հանդերձեղէնը անձաւ լիւսածներին բաժանուեցաւ: Ծեմարանի սաներն ու կարիկից գիւղացիները նրբազգաց փութկոտութեամբ իրենց աւելորդից մասն էին հանում խեղճերին: Սակայն կարեկցութեան այսպիսի պատահական արտայայտութեամբ անհնարին էր այնքան թշուառների մերկութիւնը ծածկել և նրանց մարմնի ցրտատար մասերին տապալթիւն շնչել: Անհրաժեշտ էր հանուր գաղթականութեան համար հանդերձ, անկողնի պարագաներ, կօշիկ և այլ պիտոյք հայթայթելու և մատակարարելու գործ կազմակերպել Էջմիածնում, Երևանում, Ալեքսանդրապոլում և Նախիջևանում:

1914 թ. դեկտեմբերի 31-ին Կարգադիր Յանձնաժողովի նիստին Էջմիածնում կազմուեցաւ 54400 ռուբլու Նախահաշիւ, գաղթականների համար սպիտակեղէն, հանդերձ, վերմակ, ներքնակ, կօշիկ, գլխարկ և գուլբայ պատրաստել տալու

որոշումով, ի նկատի առնուեցաւ արհեստանոցներ բանալու անհրաժեշտութիւնը և յանձնարարուեցաւ եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի Երևանի բաժանմունքին աշխատանքի սկզբնաւորութիւնը քաղաքում, ուր արհեստանոցներին պատուէր տալու և ապրանք ձարելու աւելի դիւրութիւններ կային: Բարեբաղդաբար Յանձնաժողովի կոչը Ռուսաստանի հայ ազգաբնակչութեան, փախստականներին հանդերձեղէնով օգնութեան ձեռք մեկնել, իրական արդիւնք տուաւ և 1915 թուի յունուարի 3-ից սկսած բազմաթիւ հեռաւոր և մերձաւոր քաղաքներից հետգնուէ ստացուեցան էջմիածնում և միւս կենտրոններում հակիրով ամեն տեսակի և հասակի հին ու նոր հագուստներ, կօշիկ, վերմակ, ներքնազգեստ, վերնագգեստ, այլ և պիտանի կտորներ ու մթերք՝ ալիւր, շաքար, թէյ, սապոն և այլն: Առաջին առաքման հոգածութիւնը պատկանում էր Պետական Դուռայի անգամ պ. Մ. Պապջանեանին, պ. Գ. Զախուշեանին և Մոսկուայի հայկական կոմիտէին: Ստացուած իրերը ամբարուկով հիմք եղան եղբայրական Օգնութեան պահեստներին, որոնք գաղթի սկզբից և այնուհետեւ ամեն տեսակի պիտոյք էին մատակարարում գաղթականներին Կարգադիր Յանձնաժողովի տեսչութեամբ և հրահանգով, պահելով ստացուած և զործադրուած իրերի հաշիւ: Գաղթի սկզբին Էջմիածնում պահեստի անօրէն էր նշանակուած Մայր Աթոռի միաբաններից Տ. Թադէոս վարդապետ, իսկ Երևանում պահեստը ունէր առանձին վարչութիւն, որին զուլի էին կանգնած Կանանց Յանձնախմբից տիկնայք Ա. Մուսիսեան, Վ. Աթանասեան և օրիորդ Տէր-Թադէոսեան: Հագուստ մատակարարուում էր անխտիր բոլոր փախստականներին յատուկ տոմսերով և շրջիկ վերահասուների ցուցմունքով, որոնք առ տեղեւան իմանալով իւրաքանչիւր ընտանիքի անդամների քանակը, հասակը և ծանօթանալով իւրաքանչիւրի կարիքին, վաւերացմամբ համապատասխան տոմս էին տալիս, պահեստից անհրաժեշտը ստանալու: Գիւղերը փոխադրուած փախստականներին վիճակագրական ցուցակների համաձայն հագուստեղէն և անկողնի պարագաներ բաշխուում էին գիւղական գաղթականական Հոգաբարձութիւնների միջոցով, որոնց մերձաւոր հսկողութիւնը յանձնարարուած էր Կարգադիր Յանձնաժողովի լիազօրներին՝ հոգեորական և աշխարհական ներկայացուցիչներին, որոնք արտօնուած էին նաև մատակարարութեան իրական արդիւնքը ստուգելու, զանգատները լսելու և իրենց գիտողութիւնները Յանձնաժողովին դեկուցանելու: Հարկաւ գաղթի շարժման յառաջ երբա՞ծ իրարանցմանը տեղ-տեղ անհաւասար

խմբակներ ուղարկել զիւղերը: Յանձնաժողովի այս մտադրութեան հաւանութիւն շնորհեց Նորին Վեհափառութիւնը, որի հեռագրական խնդրի և առաջարկած երաշխաւորութեան համաձայն պետութեան ներքին Գործոց նախարարը հաճեցաւ եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի տնօրէնութեանը ստորագրել տաճկահայտակ հայ գերիներէից երեք բժիշկ՝ Արշակ Պօղոսեանին, Սարգիս Յովսէփեանին և Կարապետ Բլրուլիտնին, այլ և երկու ֆելդշեր—գեղազործ՝ Նազար Աղայեանին և Վարդան Ճաճիկեանին: Միաժամանակ Մոսկուայի Հայկական Կոմիտեան ու Բազուի Հայոց Կուլտուրական Միութիւնը տուգործուած եղբայրական օգնութեան սիրով, մեծաքանակ զեղորոշք՝ վերակապի նիւթեր, գործիքներ, սպիտակեղէն և բժշկական—սանիտարական կազմ խմբակներ ուղարկեցին էջմիածին, Յանձնաժողովին աջակցելու գաղթականների մէջ տարածուած հիւանդութիւնների դէմ մաքառելու գործում: Մոսկուայի խումբը բաղկացած էր 10 հոգուց բժշկուհի օրերորդ Ե. Պ. Ունանեանի ղեկավարութեամբ, իսկ Կուլտուրական Միութեան խմբի ղեկավարն էր բժիշկ Պետրոս Թաշեան: մանկաբարձուհի տիկին Մելիքեանի ընկերակցութեամբ:

1915 թուի փետրուարի 18-ին բժիշկ Սարգիս Յովսէփեան և Արշակ Պօղոսեան իրենց օգնականներով, Յանձնաժողովի հետ պաշտօնավարութեան պայմաններ կնքելուց յետոյ, սկսեցին իրենց բժշկական—սանիտարական գործունէութիւնը, առաջինը Սարգարապատի շրջանում, բնակութեան տեղ ընտրելով Ղուրդուղուլին, իսկ երկրորդը Օշականի, Աշտարակի և Ապարանի գիւղերում, կենտրոն ունենալով Աշտարակը: Մարտի 26-ին բժիշկ Պետրոս Թաշեանը իւր խմբով ձեռնարկեց գործի վարչապատում և մերձակայ գիւղերում: Իսկ ապրիլի 2-ին բժիշկ Կարապետ Բլրուլեանը փոխարինեց կամաւորական խմբի մէջ մտած բժիշկ Պօղոսեանին և նուիրուեցաւ սկզբում Աշտարակի ապա վաղաբազմապատի գաղթականութեան կարիքներին: Բժշկական արշաւախմբերին Գլխաւոր Յանձնաժողովի կողմից տրուում էին անհրաժեշտ դիւրութիւններ՝ ձիեր, սայլեր, ճանապարհորդական կաշուէ վերնազգեստ, զեղորոշք, վերակապի և առաջին օգնութեան նիւթեր, այլ և հրահանգ առ տեղեւան կազմակերպելու բժշկական—սանիտարական գործը, հսկելու անդեղէնի կանոնաւոր մատակարարութեան, այլ և վիճակագրական զեկուցագիր պատրաստելու գաղթականների առողջապահական կացութեան մասին: Բժիշկներն ու ֆելդշերները պարտաւորուած էին շրջի գիւղերը, այցելել հի-

ւանդներին, կենտրոններում զեղերի պահեստ ունենալ և այնտեղից զեղ մատակարարել, երեխաներին ծաղիկ պատուաստել, չեղոքացնել կարմրուկն ու այլ մանկական հիւանդութիւնները, մանկաբարձութեան օժանդակ լինել, ախտահանել վարակուած բնակարանները, բազանիքներ հիմնել և առհասարակ նպաստել ժողովրդի մարքակեցութեան, մերձաւոր գիւղերի ծանր և վարակիչ հիւանդներին կենտրոնացնել Ղուրդուղուլու, Աշտարակի ժամանակաւոր բարակներում և կամ ուղարկել էջմիածնի հիւանդանոցները: Հիւանդանոցների ղեկավար բժիշկները բժշկական խնամատարութիւնից զատ պարտաւոր էին նաև հսկել պաշտօնեաների հաւատարիմ ծառայութեան և կարգապահութեան, կահ կարասիքի անկորուստ պահպանութեան, վարել հիւանդանոցի մատենաները և փոյթ ունենալ անտեսութեան: Գաղթականութեան առողջապահիկ կացութեան վերաբերեալ բոլոր ծանրակշիւ խնդիրները սակայն լուծուում էին Յանձնաժողովի անդամների և բժիշկների միահամուռ խորհրդով և փոխադարձ համաձայնութեամբ:

Առաջին անգամ բժիշկների խնամքով կազմուած զեկուցումները տարածուած հիւանդութիւնների և նրանց դէմ մաքառելու գործնական եղանակի և արդիւնքի մասին, հիւանդ գաղթականների մանրամասն ցուցակով հանդերձ, Գլխաւոր Յանձնաժողովի խորհրդակցութեան առարկայ դարձաւ էջմիածնում մարտի 14-ին: Բժշկական—սանիտարական թուցիկ խմբերը ապագայում էլ պարբերաբար զեկուցումներ էին մատուցանում Յանձնաժողովին, իւրաքանչիւրը իւր շրջանի մասին: Եւ վարակիչ համաճարակի ծաւալման երկիւղից մղուած, Յանձնաժողովը բազմապատկեց էջմիածնում և զաւառում հիւանդանոցների թիւը, եղածները ընդարձակեց, իսկ Գայիտէի վանքի միաբանական շէնքը հիւանդանոցի վերածելով, յատկացրեց վարակիչ հիւանդներին: Բազուի Հայոց Կուլտուրական Միութիւնը խոստացաւ մի հիւանդանոցի բժշկի, ֆելդշերի, մանկաբարձուհու ուճկի և զեղորէից ծախքերը իւր վրայ վերցնել: հիւանդանոցը իւր անուամբ կոչելու պայմանով:

1915 թ. ապրիլի վերջերին ժամանեց Մոսկուայի Հայկական Կոմիտեայի և Պիրոգովի անուան Բնկերութեան բժշկական անդամու խումբը բժշկուհի օրերորդ Ե. Պ. Ունանեանի առաջնորդութեամբ: Խումբը հրահանգուած էր աշխատել Ս. էջմիածնի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի տնօրէնութեամբ երկու միմեանցից 15 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող կենտրոններում, հազար հոգուց բաղկացած գաղթական համայնքների մէջ, կերակրել և նրանց

բժշկական կարիքները դարձանել: Յանձնաժողովը ի նկատի ունենալով, որ էջմիածնի գաւառում գաղթականները բժշկական—սանիտարական օգնութեան մեծագոյն կարիք ունին Ապարանի և Աշտարակի շրջանում, ուր նաև սննդի մեծ պակասութիւն էր զգացուում, որոշեց Մոսկուայի բժշկական անդարաշխ խումբը տեղաւորել Աշտարակում, նորաբաց հիւանդանոցից զատ նաև համայնական հիւանդանոցը ստորագրել բժշկուհի Ունանեանին և միջնորդութիւն յարուցանել Մոսկուայի Հայկական Կոմիտեայի առաջ հազարի փոխաբէն երկու հազար գաղթական կերակրել այն պայմանով, որ հացը երեւանի նահանգական կոմիտեայի մատակարարի, իսկ հիւանդանոցի և սեղանատան կահաւորումը Յանձնաժողովը հոգայ: Փոխադարձ համաձայնութեան գալուց յետոյ բժշկուհի Ունանեանի խումբը հաստատուեցաւ Աշտարակում և Յանձնաժողովի հովանաւորութեան տակ երկար ժամանակ իւր բեղմնաւոր և փրկարար գործունէութեամբ համակրելի եղաւ շրջանի գաղթականութեան, որին մատչելի էր բժշկուհին իւր սիրալիր, պարզ բնաւորութեամբ և կոչման անձնադիր սպասաւորութեամբ, որը ամենայն տարրական կարիք գոհացնում էր, անձամբ բուժելով հիւանդներին և հսկելով սննդի մատակարարութեան: Այնուհետև Աշտարակի նախկին բժշկական արշաւախումբը իւր առաջնորդ բժիշկների՝ Կ. Բլրուլեանի և Ա. Պօղոսեանի հետ ազատուելով գործից, հնարաւորութիւն ունեցաւ մօտիկ ապագայում իւր ետանդի թափը նուիրելու նոր նուաճած հայկական գաւառների՝ Ալաշկերտի, Ալջաւաղի, Մանազկերտի և Վանի հայ ազգաբնակչութեան մեծ կարիքներին, որոնց նկատմամբ վաղուց Յանձնաժողովը արթուն ուշադրութեամբ բժշկական օգնութեան և նպաստի մատակարարութեան լայն ծրագիր էր կազմել:

Երեւանի նահանգի քաղաքներում գաղթականների բժշկական—առողջապահական կացութեան բարելաւումը աւելի դիւրին էր քան էջմիածնի և այլ գաւառներում շնորհիւ այն յարմարութիւնների, որ ունին ընդհանրապէս քաղաքները բժշկական տեսակէտից: Այդտեղ բժիշկների, օգնականների, գթութեան քոյրերի, զեղերի պակասութիւնը այնքան զգալի չէր որքան գիւղերում: Առանձնապէս երեւանում և Ալեքսանդրապոլում քաղաքային սանիտարական կազմակերպութիւնները, հիւանդանոցները, պատերազմից ճառասուածներին խնամող նահանգական կոմիտէն և իւր բաժանմունքները ընդատաջ գալով եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին, սիրով ամեն աջակցութիւն ցոյց էին տալիս գաղթականներին, հենց թէ քաղաքացի ազգաբնակչու-

թիւնը եկամուտ հիւանդութիւններից և համաճարակից պաշտպանելու դիտաւորութեամբ: Բացի դրանից քաղաքներում կենտրոնացած պահեստի զինուորական սանիտարական կազմակերպութիւնները յօժարակամ սպասաւորում էին գաղթականութեան առողջապահական կարիքին:

Չնայելով այս դիւրութիւններին, Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովը դրամական մեծ զոհաբերութեամբ գաղթի սկզբին յատուկ և սեփական հիւանդանոցներ հիմնեց Երեւանում, Ալեքսանդրապոլում, Հին Նախիջևանում: Հիւանդութիւնների ծաւալման դուզնութեամբ հիւանդանոցների, սրահակների, մահճակալների, կամաւոր և վարձու պաշտօնեաների թիւը բազմապատկուում և կցորդ մասերը՝ խոհանոց, բաղանիք, լուացքատուն և այլն կարիքի համեմատ ընդարձակուում էին: Թեթեւ հիւանդների խնամատարութիւնը քաղաքներում կատարում էին շրջիկ խմբակներն ու հերթակալ բժիշկները, այցելելով հանրակացարանների և մասնաւոր բնակարանների հիւանդներին: Գիւղական գաղթականների համար, էջմիածնի գաւառի օրինակով, եղբայրական Օգնութեան տեղական Յանձնաժողովները կազմակերպում էին շրջանային բժշկական արշաւախմբեր մի—մի բժշկի, ֆելդշերի, զեղագործի առաջնորդութեամբ, որոնք կենտրոնական մեծ գիւղերում բժշկական կայաններ էին հիմնում ծանր հիւանդների ընդունելութեան համար, իսկ թեթեւներին շրջագայութեան ժամանակ առ տեղեւան օգնութիւն հասցնում: Իգգիւրն ու Նոր Բայազիտը ուրոյն բժշկական կենտրոններ էին շրջանի գաղթականութեան, իսկ Ծաղկաձորում աշխատում էր Երեւանի եղբայրական Օգնութեան կենտրոնական Յանձնաժողովի հրաւիրած բժիշկ Աւետիս Տէր—Յարութիւնեան իւր գործակից արշաւախմբերով: Երեւանի մերձակայ միւս շրջանների համար պատերազմից ճառասուածներին խնամարկող նահանգական կոմիտէն էր բժիշկներ ուղարկում իւր ծախքով և այդ ձեռնարկութեան բարոյապէս նպաստում էր Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը, որի անդամները մասնակցութիւն և ձայն ունէին կոմիտէի նիստերին: Հին Նախիջևանում բժշկապետ Թայեի ցուցմունքով բացուած հիւանդանոցը խնամում էր 50-ի չափ գաղթական հիւանդներ, որոնց դիւրաւ մատակարարում էր Կարմիր Խաչի բնկերութիւնը, հոգալով նաև բժիշկների, քոյրերի ուճիկը, իսկ հիւանդանոցի տնտեսական ծախքերը հատուցանում էր Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը: Հին Նախիջևանի գաւառում բժշկական կայաններ էին նաև Ջահուկն ու Ապրակունիսը, ուր Եղբայրական Օգնութեան Յանձ-

նաժողովի անօրէնութեամբ աշխատում էին բժշկական Գէորգեան, երկու ֆելդշեր և մի մանկաբարձուհի: Ալեքսանդրապոլի գաղթականական հիւանդանոցի պահպանութիւնը և 15 հանրակացարաններում ապաստանած հիւանդներին խնամելը ամսական առ նուազը 2500 ռուբլու ծախք էր պահանջում, չհաշուելով հիւանդանոցի բացման ու կանաւորման միանուագ ծախքը, որ 10000—15000 ռուբլու էր հասնում: Բժշկական կենտրոն էին նաև Ղարաքիլիսան և Ջաջուր: Այս վերջին կայանում մօտ 50 վերստ տարածութեան վրայ գործում էր Մոսկուայի Հայկական Կոմիտէի բժշկական և անդաբաշխ արշաւախումբը, չնայելով որ շրջանի գաղթականների թիւը 300-էջ չէր անցնում:

Աչքի, բութի, կոկորդի և այլ մասնակի հիւանդութեամբ տառապողներին ամենուրեք հնարաւորութիւն և դրամական առանձին նպաստ էր տրուում դիմելու Երևանի և Թիֆլիզի մասնագէտ բժշկներին, Յանձնաժողովի պաշտօնական վկայութեամբ:

Այսպիսի փութկոտ և եռանդուն ջանքերի շնորհիւ Երևանի նահանգում ապաստանած առաջին գաղթականութիւնը զերծ մնաց սպառնացող համաճարակ հիւանդութեան դառն հետևանքից: Բժիշկների և սանիտարական թուղթի խմբերի անձնադիր հոգածութեամբ հիւանդները ապաքուցեցան, տկարներն ու հիւծուածները կազդուրուեցան, մօտիկ ապագային կրելու երկրորդ կամ մեծ գողթի արհաւիրքն ու աւերը, որի բերած ընդհանուր մահացութիւնը հազարաւոր փախստական թշուառների կեանքը հնձեց և իջևցրեց եղբայրական գերեզման, ուր և հանգաւ, մարեց նրանց անհուն տնչը՝ հայրենիքը փրկուած, հայի հնադարեան կեանքը իւր յօրինուածքով, պատմական և արդի յիշատակարաններով հայրենի հողում նորոգուած ու կենդանացած, մշակոյթի բարիքներով ունեցած տեսնելու տենչը:

ԽՆԱՄՔ ՓԱՆՍՏԱԿԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԵՒ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ ՆՐԱՆՑ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՈՒ ԴԱՍՏԱՐԱՄԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. — Գաղթի սոսկալի տաղնապը ծանրագոյն թախիժով համակեց մահաւանդ փախստական մանուկներին: Գաղթի խուճապի նախօրեակին ռիսկալ քրդի ու դարսանամու տաճիկ սուր ու սուխին հայրենի լեռներում զոհ էին եղել հարիւրաւոր հայրեր ու մայրեր, որոնց որբուկ զաւակները թողնուած էին անազորոյն բաղդին: Գաղթի ժամանակ հետամուտ թշնամին շատ ծնողներ գիականցրել էր լիւնների արահետներին, իսկ նրանց մանուկները

ապաստանել էին սահմանի այս կողմը, ոմանք ապաւինած հարեանների գթաբորտութեան, ոմանք հայ կամաւորներին ու ղինուորներին, որոնք և մեղմում էին նրանց քաղցը և տապաղնում ցրտահար մարմինը իրենց կայաններում: Մանուկներին մէջ սակաւ չէին և այնպիսիները, որոնք գաղթի ճանապարհին մոլորած կորցրել էին ծնողներին և թաղնուել առապարներում, քաղցի ու մերկութեան մատնուած: Սիրտ էին մորմոքում մահաւանդ այն ընկեցիկ երեխաները, որոնց վերաւոր, ուժասպառ մայրերը հարկադրուած ձգել թողել էին ճանապարհին:

Վեհափառ Հայրապետը իրազեկ անմեղ մանուկներին այս ողբալի վիճակին, առաջին գաղթի սկզբին և եթ տնօրինել էր Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին, դուրս և խնամք տածել դէպի փախստական մանուկները, որոնք, ժողովել նրանց և պատսպարել որբանոցներում ու մանկական ապաստարաններում իւր բարձր հովանաւորութեան ներքոյ: Այս նպատակով Մայրավանքի երիտասարդ միաբաններից ոմանք Տ. Գարեգին վարդապետի առաջնորդութեամբ ուղարկուեցան գաղթուող զանազան վայրերը, որոնք ծնողազուրկ, մոլորուած և ընկեցիկ երեխաներին փախստական ամբոխի մէջ, զօրքի կայաններում և թագստոցներում:

Կորստից փրկուած հինգ հարիւրի չափ երկսեռ մանուկներ համախմբուեցան Էջմիածնում, Երևանում և Ալեքսանդրապոլում, ուր տակաւին կազմակերպուած ապաստարան—որբանոցներ չլինելու պատճառով Նորին Սրբութեան հաճութեամբ երեխաները յատուկ մասնախմբի հոգածութեամբ յանձնուեցան գթաւատ ընտանիքների և տիկնանց, որոնք սիրալիւր յօժարութեամբ յանձն էին առնում, առժամանակ նրանց խնամել ու դաստիարակել, մինչև որ Գլխաւոր Յանձնաժողովը ի վիճակի լինի մոլորուածների ծնողներին գտնել, իսկ գլխովին որբերի համար ապաստանարան հաստատել: Կարճ ժամանակից յետոյ Երևանի Փոխ—թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի և Ալեքսանդրապոլի Առաջնորդական փոխանորդ Տ. Արտակ վարդապետի անմիջական հսկողութեան տակ Երեւանում, Ալեքսանդրապոլում և Ղարաքիլիսայում բացուեցան Եղբայրական Օգնութեան Կարգադիր Յանձնաժողովի անդամների որբանոցները: Յարմար բնակարանների բացակայութեան և կենսական մթերքի սակաւութեան պատճառով, առաջին գաղթին Էջմիածնում, չնայելով զործ դրած ջանքերին, հնարաւոր չեղաւ որբանոց հիմնել, ուստի անտէր մանուկներին մասամբ ուղարկուած էին Երեւանի որբանոցը և մասամբ Թիֆլիզ՝ քահանաների և ծխական Հոգաբարձութեան Յանձնաժողովին,

տեղաւորելու նրանց և խնամելու տեղական պայմանների ընձեւած դիւրութեան չափով: Գլխաւոր Յանձնաժողովը միանգամայն գիտակ փախստական մանուկներին ապահով պահպանութեան նկատմամբ իւր ստանձնած պատասխանատուութեան ծնողներին, աղքի և Ամենայն Հայոց Հայրապետի առաջ, Էջմիածնում իւր կենտրոնական Դիւանին կից հաստատեց նաև յատուկ բաժանմունք, որբերին և անտէր մանուկներին ցուցակազերելու և մանրամասն տեղեկագիր կազմելու իւրաքանչիւրի ծնողեան, ընակաւայրի, ծնողների, ուր և ում խնամքին յանձնուած լինելու մասին: Այս տեղեկագրերի միջոցով ծնողներն ու որբերի ազգականները հնարաւորութիւն էին ստանում որոնելու իրենց հարազատներին և տնօրինելու նրանց ազգալի վիճակը:

Նորին Սրբութեան հայրական կամքն էր ոչ միայն գլխովին որբերին հովանաւորել և ուսման ու գործնական արհեստի վարժեցնելով նախապատրաստել նրանց, ապագային որ և է կոչման ու զբաղմունքի նուիրուելու յօգուտ անհատական բարեկեցութեան և հայրենիքի հանուր վերաշինութեան, այլ ընդհանրապէս ապուէն լինել այն բոլոր փախստական մանուկներին, որոնց ծնողները զուրկ լինելով ապահով ապրուստի միջոցներից, կացութեան դառն պայմանների մէջ բնաւ հնարաւորութիւն չունէին իրենց զուակներին անուցանելու, հազցնելու և խնամքով դաստիարակելու: Մտորուում էր ուրիմ կոխան կղած հայ բուրաստանի գէթ մանր ծաղկունքը կորչել, հանել թշնամու սիւնած փուշ ու տատառկեց և պարարտացնել նրանց աղքի սրտից բլխած աղբիւրով ոռոգուող անդաստանում: Սակայն այս խոհուն ծրագրի իրականացումը առաջին գաղթի սկզբից և եթ գոնաւորութեան հանդիպեց. «Որբանոց—ապաստարան» անունը կրող հաստատութեան գէթ ծառ էին կանգնում ոչ միայն հարազատ ծնողները, այլ և որբերի խնամակալ հետաւոր ազգականները, որոնք հայ նահապետական օջախի աւանդական մզումով չէին կամենում հաշտուել իրենց հարազատ ու մերձաւոր, արիւնակից մանուկներին ընտանիքից անջատելու և օտարների խնամքին յանձնելու մաքի հետ: Եւ Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը խորապէս բմբռնելով և նրբագգածութեամբ մտորելով գաղթական և բազմաառնջ մոլորուողի այս քնքոյշ, դրական և ընտաւոր ունակութիւնը, հարկադրուած էր ապաստարան—որբանոցներում տեղաւորել միայն բոլորովին անտէր, որբ, այլ և այն սակաւաթիւ մանուկներին, որոնց ծնողները գիտակցաբար և ինքնակամ բերում, յանձնում էին:

Եւ իրօք առաջին գաղթին բացուած որբանոց—ապաստարանները, թէպէտ օժտուած ամեն յաջմարութիւններով, կենսունակ չեղան, կարճատե գոյութիւնից յետոյ գրեթէ կազմալուծուեցան յիշատակած հանգամանքների շնորհիւ և միայն մեծ կամ երկրորդ գաղթից յետոյ վերահենգանաւալու և բարգաւաճելու ցանկալի վիճակ ստացան: Պատսպարուած երեխաներից շատերը բարեբաղդաբար վերստին իրենց մայրենի գիրկն ընկան և որբանոցները հարկադրուեցան միայն սակաւաթիւ անտէր երեխաներին հոգատար լինել: Այսպիսով Էջմիածնում Կանանց Յանձնախմբի խնամքի տակ մնացին միայն թուով 18 երեխայ, իսկ Երևանի ընդարձակ և օրինակելի որբանոցում 20-ի չափ, 3—12 տարեկան հասակի, աղայ և աղջիկ: Դրութիւնը նոյնն էր նաև Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում և այլուրեք: Մինչդեռ հեռաւոր հայաբնակ վայրերից և գաղութներից հայ ընկերութիւններ և համայնքներ Մայր Աթոռից որբեր էին խնդրում, նրանց աւարիներով սնուցանելու, խնամելու և կրթութիւն տալու երաշխաւորութեամբ, Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը հնարաւորութիւն չունէր նման խնդիրները կատարելու, քանի որ իւր հիմնած որբանոց—ապաստարանները մեծ մասամբ զատարկ էին, երեխաները պատսպարուած գլխաւորապէս իրենց ծնողների յարկի տակ և մասամբ վստահելի ընտանիքներում, իսկ միւս կողմից Նորին Վեհափառութեան հաճելի չէր իւր բարձր հովանաւորութեան ապաւինած որբերին հայրենիքի կրծքից կորցնելու և հեռաւոր պանդխտութեան ծոցը նետելու փորձը:

Փախստական երեխաների ուսման և դպրոցական դաստիարակութեան գործն էլ առաջին գաղթին աչքի ընկնող թափ չստացաւ, թէպէտ Յանձնաժողովը այլ խնդրին արժանաւոր ուշադրութիւն էր նուիրել և մինչև իսկ ուրուագծել գաղթականական դպրոցների բացման, պահպանութեան, ուսուցման աւարկաների և վարչական կազմակերպութեան ծրագիրը: Պատեւադմի աղետն ու պատահարները դպրոցական կեանքի մէջ ուսման տարւայ երկրորդ կիսին որոշ աստիճանի խանգարմունք և իրարանցումն էին յառաջ բերել: Սև ծովից մինչև Զուլֆա, ուսու—տաճիկական և պարսկական սահմանին կից կովկասեան գաւառներում շատ դպրոցներ անտէրկալ նահանջի պատճառով տեղահան էին եղել, փոխադրուել կամ ժամանակաւորապէս փակուել, որով և տեղական հայ դպրոցների ցանցը սեղմուել էր: Տեղ—տեղ միեւնոյն դպրոցական շէնքում զետեղուել էին մի քանի միմեանցից անկախ դպրոցներ և վաղ ասուցալից մինչև ուշ իրիկուն հերթով դա-

սաւանդութիւն էր լինում: Եւ այս իրողութեան երեսից ծխական դպրոցները հնարաւորութիւն չունէին ամեն տեղ փախստական աշակերտ—աշակերտութիւններին անխտիր հիւրընկալելու և իրենց դասընթացքին մասնակից անելու: Անձնուրաց հայ ուսուցչութեան ջանքերի շնորհիւ միայն սակաւաթիւ վայրերում յաջողութեամբ էր փախստական երեխաների համար դաստանդութեան յատուկ ժամեր սահմանել ճաշից յետոյ և կամ քիչ աշակերտ ունեցող դասարաններում տեղաւորել համապատասխան պատրաստութեամբ օժտուածներին: Այդպէս էջմիածնի շրջանում Վաղարշապատի ծխական դպրոցների Մանկավարժական Խորհրդի որոշմամբ ազատ դասարաններում ընդունուել էին 30-ի չափ դպրական աշակերտներ և ուսուցիչներից ոմանք ճաշից յետոյ պարապում էին 70—80 անգրագէտ երեխաների հետ: Աշտարակում բժշկուէի օրիորդ Ե. Պ. Ունանեանի ղեկավարութեամբ ուսուցչութիւնը և բանիմաց երիտասարդութիւնը կազմակերպել էր «մանկական դասընթացք» 120—150 փախստական մանուկների համար. նոյնպէս Օշականի և Կարբու դպրոցներում ուսուցիչների հոգածութեամբ հաւաքուել և սովորում էին պատկանելի թուով մանուկներ: Երեւանում, Ալեքսանդրապոլում, Ախալքալաքում և շրջակայքում ևս ուսումնաս-

5. ԵՂԱՅՐԱՅԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԻԺՈՂՈՎՆ ԻՐԵՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒՍԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՆԿԱՐ ԵՆ ՆՐԱ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆԸ

Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ Կոնդակով երաշխաւորուած էր այն աներկբայ վստահութիւնը, որ վիճակուեցաւ Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին հայ ազգի, ուսւ պետական իշխանութեան և պատերազմից ֆլասուածներին օգնող ուսուցչ և ազգային հաստատութիւնների կողմից: Կեանքի կոչուած լինելով առաջին գաղթի խոճապին և չենթարկուելով տեղական իշխանութեան վաղեմի կասկածամտութեան և յարուցած սովորական, անուղղմիտ արգելքներին, Յանձնաժողովը իւր գործառնութեան մէջ հանդիսացաւ հայ գաղթականութեան իրաւունքի պաշտպան և հեղինակաւոր ներկայացուցիչ իշխանութեան և կոմիտէների առաջ այն բոլոր խնդիրներում, որոնք վերաբերում էին նրանց բնակութեան գաղթավայրին, փոխադրութեան, պարենաւորման, պետական նրապատի մատակարարութեան, որբանոցների և դպրոցների պահպանութեան, դարձին գէպի հայրենիք և սրտ վերաշինութեան, այլ և ներքին

տենչ գաղթական պատանիները վայելում էին ծխական դպրոցների սիրարժան հիւրընկալութիւնը: Սրանց ամենքին Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը մատակարարում էր պատշաճ հագուստ, սպիտակեղէն, կօշիկ, դասադրքեր և դասական պիտոյք, երբեմնակի նաև հոգում նրանց բաւարար սննդի և մաքրութեան կարիքը, այլ և ըստ հարկին դրամական օժանդակութիւն հասցնում տնտեսապէս չապահովուած դպրոցներին և վաստակաւոր ուսուցիչներին:

Յանձնաժողովը առանձին փութով հետամուտ էր նաև կորուստից ապահովելու որբերի, անտէր երեխաների, այրի ու անձար կանանց շարժական և դրամական ունեցուածքը, այլ և անշարժ կայքը հայրենիքում: Գաղթականական Հոգաբարձութիւնների և լրագործների միջոցով ամենքին ազդարարուում էր, որ իրենց դրամական գանձը, թանգարժէք իրերը, անասունները ցուցակով և մշակուած ձեռով պահ տան Յանձնաժողովին և սրա բաժանմունքներին. իսկ հայրենիքում եղած անշարժ կայքի խնամատարութիւնը յանձնարարուում էր Նորին Սրբութեան կողմից նուաճուած գաւառները առաքուած հոգեւորական պատուիրակներին և կամ նոյն վայրերում կաղմակերպուած ազգային հաստատութիւններին ու Յանձնաժողովի բաժանմունքներին:

դատական, իրաւական սովորոյթներին և կրօնական, ժողովրդական ծէսերին:

Հէնց գաղթի սկզբին սահմանագլխի զինուորական, հաղորդակցութեան և ոստիկանական իշխանութիւնները ճանաչելով Յանձնաժողովի այս իրաւասութիւնը, յարգեցին նրա միջնորդութիւնը գաղթականներին անարգել և առանց յապաղման ներքին գաւառներն առաջնորդելու նկատմամբ, ամեն հնարաւոր դիւրութիւն շնորհեցին փոխադրութիւնը գլուխ բերելու կարճ ժամանակում, ցուցակազրութիւնը և իւրաքանչիւր գաղթական ընտանիքին պատշաճ վկայագիր կամ անցաթուղթ ընձեռելու արտօնութիւնը վերապահելով միայն Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին: Այդ վկայագրերը Ռուսաստանի բոլոր մասերում իշխանութեան կողմից համարուում էին իրրե վաւերական անձնատու և նրանց հիման վրայ գաղթականները ամենուրեք ընդունուում, խնամուում և ստանում էին պետական և ազգային նպաստ իրենց ընտրած գաղ-

թավայրում անարգել ապրելու համար մինչև պատերազմի աղետի վերացումը հայրենիքի գլխից:

Խորապէս համոզուած լինելով, որ պաշտօնաւոր աւերը տակաւին վերջացած չէ և գաղթական ու տեղական հայ ազգաբնակչութեան տնտեսական լուրջ ճգնաժամ է սպասում, այլ և զիտենալով, որ ազգային նպատակը անբաւարար կլինի ժողովրդի անձայր թշուառութիւնը մեղմելու համար, Յանձնաժողովը հենց սկզբից ամեն ջանք գործ դրաւ իւր ներկայացուցիչներն ունենալ Երևանի պատերազմից ֆլասուածներին օգնող Նահանգական Կոմիտէում, որպէս զի անհրաժեշտ դէպքում հնարաւորութիւն ունենայ աջակցել պատերազմի առթիւ սահմանած պետական նպատակից հայ գաղթականներին ևս արդար մասն ու բաժին հանելու խնդրի յաջող լուծման: Առանձնապէս բեղմնաւոր արդիւնք ունեցաւ այն հանգամանքը, որ Երևանի Հայոց Առաջնորդ Տէր Խորէն եպիսկոպոսը, իրրե թեմի Հոգեւոր Հովիւ այլ և Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի ներկայացուցիչ, Նահանգական Կոմիտէի անդամ էր և նիստերին ամեն յարմար առթիւ պաշտպանում էր հայ գաղթականութեան շահերը և իւր զիրքով ու հեղինակութեամբ ազդում այն բոլոր խնդիրների նպատակայարմար լուծման, որոնք վերաբերում էին անմիջապէս հայ գաղթականներին ամենօրեայ ապրուստին և առողջապահական վիճակին: Միւս կողմից Սրբազան Հօր առաջարկութեամբ Նահանգապետի կողմից Կոմիտէի անդամութեան էին կոչուած նաև Երևանի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի կազմից յայտնի հասարակական գործիչներ՝ պ. պ. Գ. Տէր—Խաչատրեան, Գ. Ամիրեան, Մ. Մուսիսեան և Յ. Մելիքեան, որոնք ի մօտոյ ծանօթ լինելով գաղթական հայ ժողովրդի կացութեան պայմաններին, լաւագոյն կերպով ներկայացնում էին նրա խեղճութիւնը և իրենց ներգործող ազդեցութեամբ իրականացնել տալիս Ռուսաստանի հայութեան իղձը տաքնապող տաճկահայ ազգայինների նկատմամբ: Եւ ամենամեծ բարիքը, որ վիճակեց Նահանգական Կոմիտէն հայ փախստականներին, պետական նպաստի մատակարարութեան անյապաղ տնօրէնութիւնն էր, որի համաձայն նպաստը՝ դրամ, ալիւր, հաց և հագուստ բաշխուում էր գլխաւորապէս Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի շրջանային ներկայացուցիչների միջոցով Երևանի, Էջմիածնի, Ղաւարլուի, Նոր Բայազետի և Իգդիրի կողմերում, իսկ Շարուրի և Հին Նախիջևանի շրջանում Տ. Ներսէս Եպիսկոպոս Մելիք—Թանգեանի անմիջական կարգադրութեամբ: Սարգաթապատի և Ապա-

րանի շրջանում նոյն պարտականութիւնը կատարում էին հաշտարար միջնորդ պ. պ. Յ. Սալաթեան և Լ. Միքայէլեան Յանձնաժողովի ցուցմունքներով և նախապէս նրա հետ համաձայնութեան գալուց յետոյ: Նահանգական Կոմիտէն յօժարութեամբ իրագործել է նաև Յանձնաժողովի այլ առաջարկները գաղթականներին սահմանազրկից դիւրութեամբ փոխադրելու, նրանց նկատմամբ մաքսային տուրքը վերացնելու, տեղափոխուելիս երկաթուղու ձրի տոմս բաշխելու, բժշկական օգնութիւն հասցնելու և մթերքների փոխադրութեան երկաթուղային տարիֆը Նախարարի կարգադրութեամբ իջեցնել տալու նկատմամբ:

Երևանի Նահանգական Կոմիտէից գալիս, հայ գաղթականութեան խեղճութեան և կեանքի դաւնութիւնը ամօքելու մեծ եռանդ ու ջանք էին ցոյց տալիս Մոսկուայի Հայկական Կոմիտէն, Կովկասի Հայոց բազմաթիւ կազմակերպութիւնները՝ Ազգային Կենտրոնական Բիւրոն, Հայոց Բարեգործական, Նպաստամատոյց, Գիւղատնտեսական և ուրիշ ընկերութիւնները, Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը, այլ և Համառուսական Զեմսկի և Քաղաքների Միութիւնները: Այս բոլոր հաստատութիւնները առաջին գաղթի սկզբից փոխադարձ համաձայնութեամբ ամեն կերպ պաշտպանում էին համերաշխ գործունէութեան սկզբունքը և ներշնչում նպաստի մատակարարութեան շրջանային տեսուչներին և պաշտօնեաներին, գաղթականական գործերում ըստ ամենայնի համակերպել Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովի ցուցմունքներին: Եւ որովհետեւ գաղթականների պարենաւորման պետական վարչութիւնը զենեքալ Թամամշեի գլխաւորութեամբ Կովկասում տակաւին գոհացուցիչ չափով չէր կազմակերպել իւր գործունէութիւնը, գաղթականների համար ուղարկուած մթերքների և ապրանքի փոխադրութեան հոգսը, Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի խնդրով և առաջարկութեամբ, քաշում էին մասամբ Կարմիր խաչի Ընկերութիւնը, իսկ գլխաւորապէս Նահանգական Կոմիտէն և Համառուսական Զեմսկի և Քաղաքների Միութիւնը, որոնք Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անուանով ստացուած ապրանքներն ու մթերքները անկորուստ հասցնում էին ըստ պատկանելոյն:

Այսպիսով առաջին գաղթի սկզբից Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը գաղթականական վարչական գործերով եռուն բանակցութեան և յարաբերութեան մէջ էր գտնաւորւում պետական և ազգային հաստատութիւնների հետ: Ապագային, երբ պատերազմական անհրաժեշտ

կարիքները ճակատում բարդացան և երկաթուղիները բոլոր կարողութեամբ նուիրուեցան ռազմական պահանջներ լցուցման, որով թիկունքի պարենաւորումը հետզհետէ դժուարացաւ, առանձնապէս զաղթականներին զգալի զրկանք պատճառելով, աւելի ևս սերտացաւ Յանձնաժողովի և վերոյիշեալ հաստատութիւնների փոխյարաբերութիւնը: Այլիւրի, ցորենի, սալոնի, շաքարի, հազուատիղէնի և այլ մթերքների զգալի պակասութեան դէպքում հաստատութիւնները սիրով և փոխարինարար միմեանց օգնութեան ձեռք էին կարկառում յանուն պթասրութեան դէպի գաղթականութիւնը. և Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը, իբրեւ ամենից աւելի պատասխանատուն նորին Սրբութեան և ազգի առաջ, ոչ մի ճիշդ ու ջանք չէր խնայում իւր յարաճուն միջնորդութեամբ, դիմումներով և խնդիրներով յանուն գեներալ Թամաճեւի, Քաղաքների Միութեան Կովկասի լիազօր Ա. Խատիսեանի, Պետական Դոմայի անդամ Մ. Պապաջանեանի, ազգային կոմիտէների ներկայացուցիչներ Ս. Յարութիւնեանի, Գ. Չալիսեանի, Ս. Մամիկոնեանի, որպէս զի պատշաճաւոր տեղում իրենց ազդեցութիւնը գործադրին, բարոյապէս աջակցելու Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին, հանուր հայ փախստականներին փութով կենսական մթերք հասցնելու և նրանց քաղցը յագեցնելու համար:

Կարնանումտին քաջամարտիկ ռուս բանակի յառաջնադասամբ Կովկասի ճակատում թշնամուկտուռ կարճակաման վտանգը վերացել էր և ըստ երևութին ջլատուած էր ընդ միշտ նրա ռազմական ոյժը: Արդուինի և Արտահանի շրջանից թիւրք բանակը քաշուել էր դէպի արևմուտք. Հին Բայազետը, Վանայ լճի հիւսիսային գաւառները, Ալաշկերտը, Ղարաքիլիսան ու Մանադկերտը կատաղի կռիւներից յետոյ անցել էին ռուսաց ձեռքը. թշնամուց մաքրուած էր նաև հիւսիսային Ատրպատականը սահմանադժի երկարութեամբ: Ռուս յաղթական բանակը հաստատուն քայլով շարժուում էր մի կողմից դէպի Վասպուրական, միւս կողմից դէպի Մշոյ դաշտն ու Վանայ լճի արևմտեան եզերքը: Միակ վտանգաւոր տեղը, որտեղից թշնամին երբեմն սպառնալից ցամառն և զայրոյթի նշաններ էր արտայայտում, Սարիգամիշի և Կարսի արևմտեան գիծն էր, էրզրումի ուղղութեամբ: Ռազմական յաջողութիւնից Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը թիւ առած, մտորում էր հայ փախստականների ներգաղթի հարցը հրապարակի վրայ դնել, ռուսի և բանակցութեան մէջ մտաւ Կովկասի պետական իշխանութեան և ճակատի դի-

նուորական հրամանատարների հետ, զորուած նաև այն իրողութիւնից, որ Դոնի շրջանի և հիւսիսային Կովկասի ստաիկականական վարչութիւնները վարակիչ հիւանդութիւնների տարածման երկիւղից հարկադրուած, կարգադրել էին տաճկահայատակ փախստականներին, հետզհետէ տեղափոխուել Անդրկովկաս, այնտեղից հայրենիք դիմելու նըպատակով: Այս դիմումները սակայն քաղաքական և պատերազմական ինչ-ինչ նկատումներով քաջասական հետևանք ունեցան և զաղթականները դատապարտուեցան իրենց չարքաշ կեանքը օտար երկնքի տակ շարունակելու դառն վիճակին, մաքառելով քաղցի, մերկութեան և անգործութեան դէմ:

Գաղթականական գործի հետզհետէ վարդանալով բարդացել էր նաև Յանձնաժողովի, սրա բաժանմունքների և մասնաճիւղերի փոխադարձ յարաբերութիւնը: Թէպէտ Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի բաժանմունքները ապակենտրոն գործունէութեան սկզբունքին էին հետամուտ և իւրաքանչիւրը իւր ազդեցութեան շրջանում բաւական անկախ էր Ս. Էջմիածնի Գլխաւոր Յանձնաժողովից, ինչպէս օրինակ եկամուտի նոր միջոցներ հայթհայթելու, զաղթականների համար որ և է օգտակար ձեռնարկութիւն սկսելու, նպաստ ու տպրուստի միջոց ձեռք բերելու ու մատակարարելու նկատմամբ, այնուամենայնիւ որոշ դէպքերում ու խնդիրներում անպայման ստորադրուում էին նրան շնորհիւ մի քանի հանգամանքների: Նախ Գլխաւոր Յանձնաժողովը, իբրեւ նորին Սրբութեան Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական հսկողութեան ու անօրէնութեան ենթակայ հաստատութիւն, վաշտելում էր երկրի իշխանութեան ու ազգի առաջ իւր ստանձնած պատասխանատուութեան համեմատ իրաւունք և հեղինակութիւն: Երկրորդ զաղթականների խնամատարութեան համար ամեն կողմից դրամական և նիւթական նպաստները Էջմիածնի էին ուղարկուում նորին Վեհափառութեան անունով, որի կամքի, անօրէնութեան ու հրահանգների գործադրելը Յանձնաժողովը էր: Երրորդ՝ անխտիր բոլոր զաղթավայրերից անհատական կամ համայնական խնդիրներ, ցանկութիւններ և միջնակ իսկ զանգաւաններ հաստատութիւնների անփութութեան, զեղծումների, անգործութեան դէմ տեղում էին Էջմիածնի, որոնց ընթացք ու լուծում տուողը Գլխաւոր Յանձնաժողովը էր հանդիսանում: Չորրորդ՝ Յանձնաժողովի բաժանմունքները յաճախ իրենց սեփական միջոցներով հնարաւորութիւն չունենալով փախստականներին արժանաւոր աջակցութիւն ցոյց տալ և ինքնուրոյնաբար հոգալ նրանց բազմ-

մատեակ կարիքները, նպաստի մեծ գումարներ էին խնդրում Ս. Էջմիածնի Յանձնաժողովից: Հինգերորդ՝ յանուն գաղթականութեան Էջմիածնից դրամական և այլ նպաստ ստացող հաստատութիւնները պարտաւորուում էին իրենց մտադրած գաղթականական ձեռնարկութիւնների ծախուց նախահաշիւը, այլ և սպաղայում ծախքի վաւերական հաշիւը փաստաթղթերով հանդերձ ներկայացնել Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովին, որին արտօնութիւն էր վերապահուած խորհրդակցութեամբ քննելու նախահաշիւները և վերստուգելու ծախքերը: Կարեւոր դէպքում նշանակուում էին Յանձնաժողովի անդամներից քննիչներ, կամ պաշտօնական հաղորդադրութեամբ բացատրութիւններ էին պահանջուում և կամ հաստատութեան ղեկավարը կանչուում էր Էջմիածնի, անձամբ այս և այն հաշիւն ու խնդիրը լուսարանելու: Նման յանձնարարութիւններ քանիցս կատարել են Տ. Մատթէոս Կալիսկոպոս, Տ. Իսահակ վարդապետ, Տ. Արսէն, Տ. Բարդէյ, Տ. Թադէոս ու Տ. Երուանդ վարդապետներ Էջմիածնում, Հին Նախիջևանում, Զուլֆայում, Իզդիրում, Ալաշկերտում, Ալեքսանդրապոլում, Աշտուրակում և այլուր:

Այս բոլորից զատ Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովը իրեն իրաւատէր և միաժամանակ պատասխանատու էր համարում հետեւեալ, ըստ երևութին աննշան, բայց իրապէս կարեւոր խնդիրների նկատմամբ. 1. Զբաղմունք հայթհայթել չափահաս և աշխատանքի ընդունակ գաղթական երկսեռ անձանց, բանուորների, արհեստաւորների և կրթական կոչումն ունեցողների համար, որպէս զի կարողանան երեսի քրտինքով իրենց ամենօրեայ ապրուստը հոգալ և չձանրանալ ազգային հաստատութիւնների և տեղական ազգաբնակչութեան վրայ, 2. Վերահասու լինել փախստականների մէջ պատահած սովորական կուրծքի, վէճերին ու յանցանքներին և միջոցներ որոնել, նման գործերը վճռելու ժողովրդական դատական իրաւունքի սովորոյթով, փախստականներից ընտրուած յատուկ կազմակերպութեան գործակցութեամբ, 3. Խնամել և պահպանել գաղթական ժողովրդի ազգային սովորութիւններն ու ծէսերը,

հաւաքելով կորստից ու եղծուից փրկել հայրենիքից բերած ազգագրական ամեն տեսակ նիւթեր՝ բանահիւսութիւնը, բարբառները, երածըշտութիւնը, սովորոյթները, արտաքին և առտընին կենցաղին վերաբերեալ իրերը, զարգարանքը, հաղուստը, կահ կարասիքը, գործիքները, հին ու նոր մշակոյթի արտադրութիւնները և այլն և Ս. Էջմիածնում հիմք դնել գաղթականական ազգագրական թանգարանին: Այս մտադրութիւնների իրագործումը Յանձնաժողովի համար նորանոր յարաբերութիւններ ստեղծելու առիթ էր և միաժամանակ խթան եղբայրական օգնութեան գործի բազմակողմանի ընդլայման, որ իրականացաւ գլխաւորապէս երկրորդ գաղթից յետոյ և որի մասին յարմարաւոր տեղը սոյն տեղեկագրի մէջ արժանաւոր յիշատակութիւն կլինի: Այդպէս առաջին գաղթին, թէև Դափանի պղնձահանքի կառավարութիւնը, ճակատի վրայ ճանապարհների շինութեան վարչութիւնը, Դղարից կալուածատէրեր, Բազուից գործարանատէրեր Յանձնաժողովից հարիւրաւոր, հազարաւոր բանուորներ էին խնդրում, յատկապէս փախստականներին շահուէտ դործ տալու նպատակով, սակայն գաղթականութիւնը անագորոյն բազմի հարուածից շշմած և իւր ներկայ վիճակի դառնութիւնից լքած, հոգեպէս որ և է աշխատանքի տրամադիր չէր և նման առաջարկներին խուսափողական պատասխան էր տալիս: Յաջողուեցաւ միայն գաղթական բահաններին փախստական ծխի հոգեւոր պէտքերը կատարելու և պսակի, ծննդեան ու թաղման դէպքերը չափաբերական մասեաններում արձանագրելու պարտականութիւնը յանձնարարել, դրադէտ և կրթուած գաղթականներին Յանձնաժողովի սեփական ձեռնարկութիւնների մէջ պաշտօն տալ, իսկ արհեստով զբաղուել ցանկացողներին, կարեւոր դէպքում, գործիքներ գնելու համար դրամական նպաստ ընձեռել:

Եւ Յանձնաժողովը ջանադիր էր այս բոլոր բարդ յարաբերութիւնները վարել բարեխղճութեամբ և իբրեւ գրաւական յաջողութեան հաստատել էր յատուկ դիւան, վարչական, հաշուաբարական և վիճակագրական բաժանմունքներով:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

1915 թուի մարտի 1-ից մինչև յուլիսի 20-ը

1. ՀԱՅ ԳԵՂՈՒԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԽՆՆԱՄԻՐԿՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԵՒ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՆՊԱՏԱԿ.—Նորին վեհափառութիւնը տեղն-դէտ հետամուտ էր Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովի գործունէութեան: Ամենօրեայ իրադարձի մասին գրաւոր զեկուցումն մատուցա-իրապետական Դիւանի կառավարիչը բանաւոր կերպով յայտարարում էին Նորին Սրբութեան գաղթականների կեանքի և ապրուստի կարևորագոյն դէպքերը և ըստ այնմ ընդունում պատշաճաւոր տնօրէնութիւն ու հրահանգ ապագայ անելիքի նկատմամբ: Ամենքին մտադրաւ հոգս էր պատճառում փախստականների վիճակը:

Երևանի նահանգում պատսպարուած գաղթականների ապրուստը դեռ բարեկեցիկ վիճակի չէր հասել: 1915 թուի յունուար և փետրուար ամիսներին ռուս բանակը Տաճկաստանի սահմանամերձ գաւառներում մեծամեծ շրջաններ էր զբաւել, որով և մասնակի գաղթի հոսանքը դէպի Կովկաս տակաւին գաղար չէր առել: Անհրաժեշտ էր նորեկ փախստականներին պատսպարել և նրանց կենսական անհրաժեշտ կարիքները դարմանել: Ռուս բանակի զբաւած շրջաններում հայ զիւղերը, աւաններն ու քաղաքները հիմնա-յատակ կործանուած էին, կռուի դաշտում ընկածների դիակները դեռ չթաղուած, դիւղական տնտեսութիւնը խաւառ քայքայուած: Հայրենիքի վերաշինութիւնն ու յարմար դիպումին ներգաղթի յարգարումը իբրև պարտք ծանրանում էր բոլոր ազգային հաստատութիւնների և յանձնաժողովների վրայ անխտիր:

Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը գիտակ այս պարտականութեան և համոզուած, որ փախստականներին օգնող բոլոր ազգային կազմակերպութիւնների միահամուռ ջանքերով միայն հնար կլինի թշուառացած հայ ժողովրդի մեծածաւալ կարիքը դարմանել և հայրենիքի վերաշինութեան գործը զուլիս բերել, Նորին

Սրբութեան 1914 թուի դեկտեմբերի 28-ից արձակած Հմբ. 1990 Կոնդակի հրահանգները իւր 1915 թուի յունուարի 24-ի և փետրուարի 9-ի նիստերին նորից խորհրդակցութեան առարկայ դարձրեց և Կոնդակի Դ. հատուածի մէջ պար-փակած ցանկութեան համաձայն թէ՛ «Միւսուրի» զործուկներին ամենայն յանձնաժողովը Եղբայրական Օգնութեան եւ, ի դէպս անհրաժեշտութեան նախապես ընկալելով ի Մեկ զկարեւոր հրահանգս, հետիւրէյ աստ ի Ս. Էջմիածին գերկայացուցիչս նոցա ի խորհրդակցութիւն, վասն որոշելոյ զընդհանուր սկզբունս գործունէութեան յօգուտ գաղթականաց», որոշեց 1915 թուի մարտի 1-ին, Ս. Էջմիածնում, փախստականներին եղբայրական օգնութիւն մատակարարող ազգային կազմակերպութիւնների Համա գ ու մ ար նշանակել, նախապէս Նորին Սրբութեան հայեցողութեան և հաստատութեան մատուցանելով խորհրդի զբաղման խնդիրները և մասնակցութեան հրաւիրուողների ցանկը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.—Ս. Էջմիածնի և Երևանի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովների փոխադարձ համաձայնութեամբ Համա-գումարի զբաղմունքի մշակուած ծրագիրը բո-վանդակում էր կարևորութիւն ստացած հետեւեալ խնդիրները.

1. Գաղթական—փախստականներին խնամ-լու գործում միութիւն և սերտ կապ ստեղծել ազակից եւ նպաստող հաստատութիւնների մէջ.
2. Նպաստել Ռուսաստանի սահմաններն ապաւինած փախստականներին բարեկեցութեան, մատակարարելով սնունդ, հագուստ, անկողին եւ այլ կենսական պիտոյք, մինչեւ որ հնարաւորու-թիւն ունենան վերադառնալու իրենց հայրենի երկիրը.

3. Կովկասում որբանց—ապաստանարաններ հիմնել որբ եւ անտէր երեխաների համար եւ վե-րածի նրանց որբանց—արհեստանոցների հայրենիք վերադառնալուց յետոյ.

4. Հիւանդանոցներ բանալ եւ հիմնովին կազմակերպել ու զարգացնել գաղթական ժողովրդի առողջապահական եւ բժշկական օգնութեան գործը.

5. Հայեցողութեան առնել յանձնաժողովների եւ այլ ազգային հաստատութիւնների մինչ ցարդ յօգուտ գաղթականութեան նախաձեռնող գործունէութեան գեկուցումն ու հաշուետւոյթիւնը.

6. Ուրուագծել գաղթականներին փրկուած հայրենիք վերադառնելու եւ նրանց բայցալուծ տնտեսութիւնը երկրում վերակենդանացնելու ապա-գայ ձեռնարկութեան ծրագիրը եւ պահանջելիք ծախի նախաձեռնելը:

Որոշուած էր Համագումարի մասնակցու-թեան հրաւիրել յետագայ յանձնաժողովներն ու կազմակերպութիւնները, սահմանելով նաև իւրա-քանչիւրի պատուիրակների թիւը: Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Յանձնաժողով իւր ամ-բողջ կազմով, Երևանի թեմի եղբայրական Օգ-նութեան Կենտրոնական Յանձնաժողով՝ երկու պատուիրակ, Ալեքսանդրապոլի, Իգդիրի, Հին Նախիջևանի և Կարսի եղբայրական Օգնութեան փախստականական կոմիտէներ՝ մի—մի ներկայա-ցուցիչ, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկե-րութիւն՝ մի և Կենտրոնական Ազգային Կոմիտէ՝ երկու պատուիրակ, Թիֆլիզի Հայ Հոգևորակա-նութեան և ծխական Հոգաբարձութեան Յանձ-նաժողով, Նպաստամատոյց և Դիւղատնտեսական Ընկերութիւններ՝ մի—մի պատուիրակ, Բազուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւն, Կուլտու-րական Միութիւն՝ մի—մի և Ազգային Բիւրոյի գաղթականական սեկցիա՝ երկու ներկայացուցիչ: Մոսկուայի Հայկական Կոմիտէ՝ երկու, Պետրո-գրադի Հայկական Կոմիտէ և Հայոց Եկեղեցական Խորհուրդ՝ մի—մի պատուիրակ, Նոր Նախիջևանի Հայոց Ազգային Բիւրո, Աղքատախնամ Հոգաբար-ձութիւն, Բարեգործական Ընկերութեան և Եղ-բայրական Օգնութեան Գործադիր մարմին՝ մի—մի պատուիրակ, Աստրախանի, Ասխաբադի, Կոկան-դի, Արմաւրի, Եկատերինադարի և Սիմֆերոպոլի Հայոց Ազգային Կոմիտէներ՝ մի—մի պատուիրակ: Կարգադիր Յանձնաժողովը վերոյիշեալ որո-շումը 1915 թ. փետրուարի 14-ի Հմբ. 34 յայ-տարարութեամբ մատուցեց Նորին Սրբութեան ի տնօրէնութիւն, որ և մակագրութեամբ վաւե-րացրեց և պատուիրակի գործադրել և անյապաղ հետադրով հետաւոր քաղաքներին ազգային հաս-տատութիւններին խնդրել, ժամանակին պատ-կասաւոր ուղարկել, Համագումարի զբաղմունք-

ներին և որոշումներին մասնակցելու: Նորին Սրբութեան փետրուարի 24-ին Հմբ. 324 Կոնդա-կով իւր կողմից Համագումարի նախագահ նշանա-կեց Տէր Յուսիկ Արքեպիսկոպոսին, նախապէս տնօրէնելով, անձամբ բաղմակողմանի կերպով ծանօթանալ Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժո-ղովի երկամասեայ գործունէութեան և հաշիւներին: Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովի հրա-ւերը Ս. Էջմիածնում գաղթականական գործով կայանալիք անդրանիկ Համագումարի առթիւ հայ հասարակութեան և ազգային հաստատու-թիւնների կողմից ընդունուեցաւ քաջալերական համակրութեամբ: Յիշատակուած վայրերից ան-նըշան բացառութեամբ, Հայրապետական Դիւա-նին և Յանձնաժողովին պաշտօնապէս յայտա-րարուեցան ընտրուած պատգամաւորների անուն-ները և նրանց Էջմիածին ժամանելու օրը: Ազ-գային մամուլն ևս իբրև հասարակաց մարի և կուսակցական հոսանքների ազդակ ու արտայայ-տիչ հարկաւ անփոյթ չեղաւ, աճապարեց շոշա-փել Համագումարի ռւմ նախաձեռնութեամբ կո-չուելու, հրտեղ գումարուելու, նրա իրաւասու-թեան սահմանի սկզբունքային խնդիրները, քըն-նադատել նրա նպատակը և խորհրդակցութեան առաջարկելի հարցերը, միանգամայն խոստովա-նելով Համագումարի գլուխ գալու կարևորութիւնը ազգին վիճակուած պատմական օրերին: Ոմանք բացասում էին Մայր Աթոռին գաղթականական գործում ամեն իրաւունք և միջամտելու արտօ-նութիւն, հետևապէս և Էջմիածնի Համագումարի որոշումներն ու եղբայրական օգնութեան գործին չէին համարում եղբայրական օգնութեան գործին նուիրուած հաստատութիւններին: Իսկ ուրիշները ընդհակառակը պաշտպանում էին ազգի կողմից նրան վստահացած անկապտելի իրաւունքը, տա-ռապանքի և բռնի պանդխտութեան մատնուած հայ ժողովրդին խնամարկելու և այդ ասպարի-զում ջանացող բոլոր գործօն մարմիններին իւր հովանու տակ համերաշխ գործունէութեամբ միա-ւորելու: Հրապարակաւ արտայայտուեցան նաև այն սակաւաթիւ անձինք, որոնք Համագումարին քաղաքական միտումն պատուաստելու և ներշնչե-լու մտքից հեռու չէին: Այս մասամբ ընդգիծա-լիք և մասամբ բարեմիտ պայքարի մէջ Եղբայ-րական Օգնութեան Կարգադիր Յանձնաժողովը բնաւ չվարանեց լռելեայն պատրաստուել, Համա-գումարի առաջ դնելու իւր երկամասեայ գործու-նէութեան արդիւնքը հայ գաղթականութեան օգտին և պաշտպանելու այն տեսակէտները, որոնցով անաջնորդուել է գաղթի սկզբից և պիտի զեկավարուի ապագային, հետեւելով Ամենայն Հայոց Հայրապետի հրահանգին, որ իրաւամբ

հանդիսացել է հայ գաղթականության առաջին գործունե հովանավորողը, հեղինակաւոր խօսքով և գրով շարժել է լուսանշակ աշխարհի ծայրերում սփռուած հայութեան գթասրտութիւնը դէպի տանջուած ու հայրենիքից վտարուած ժողովուրդը և եղբայրական օգնութեան հսկայական գործն է կազմակերպել ազգի Դուրբարեիւոյ նպաստի լուսնակներով:

Այս նպատակով Տ. Մատթէոս եպիսկոպոսը յանձնարարութիւն ստացաւ Յանձնաժողովի գործունէութեան մասին ընդարձակ ղեկուցադիր պատրաստել Համագումարին ներկայացնելու համար, իսկ Տ. Գարեգին վարդապետին առաջարկուեցաւ ուրուագծել այն հիմնական հայեացքն ու տեսակէտը, որ իբրեւ ուղեցոյց Յանձնաժողովը առանձնապէս ուշադրութեան է առել իւր գործունէութեան ընթացքում, այլ և ըստ էութեան բացատրել Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճ կամքն ու փափագը իւր փախստական հօտի ներկայ և ապագայ վիճակի բարելաւման, գործադրելի միջոցների և ջանքերի նկատմամբ, որ Յանձնաժողովը յայտ ունի իրագործել առանց աշխատանքի խտրուելու, հանուր հայ ժողովրդական կազմակերպութիւնների և ընկերութիւնների համերաշխ ու եղբայրական ձեռնտուութեամբ առանց որ և է պառակտման, — մի սկզբունք, որ պէտք է անդամայն պաշտպանուի Համագումարում յանուն ճշմարտութեան և գաղթական հայ թշուառների բարեկեցութեան: Միաժամանակ պատուէր տրուեցաւ Յանձնաժողովի գիւտնի հաշուաւորական մասին, կազմել եղբայրական Օգնութեան Կարգադիր Յանձնաժողովի գրամական մուտքի և ծախքի, ստացած միջոցների, հաշուետեղէնի և նրանց գործադրութեան հաշուեկշիռը, կցելով դրան գրամարկի և պահանջի վիճակի թուական պատկերը տա 1 մարտի 1915 թուի: Բացի դրանից Համագումարի նախագահ Տէր Յուսէփ Արքեպիսկոպոսին տվին գիւտնութիւն շնորհուեցաւ անձամբ ծանօթանալու, Յանձնաժողովի և Հայրապետական գիւտններից ընձեռած վաւերական տուեալների հիման վրայ, գաղթի պատմութեան, գաղթականների անցեալ և ներկայ վիճակին, եղբայրական Օգնութեան մարմինների գործունէութեան, որպէս զի կուտան ունենալ Համագումարի գրամական ջանքերին ցանկալի և նպատակաւոր ընթացք տալ:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԿԱԶՄԸ ԵՒ ԶԵՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:—1915 թուի մարտի 1-ին Մայր Աթոռի Վանական Մասնապարանի դահլիճում, Նորին Վեհափառու-

թիւն Ամենայն Հայոց Հայրապետի 1915 թ. փետրուար 24 Հմբ. 324 սրբատու Կոնգակի ընթերցմամբ բացուեցաւ Համագումարը նախադրութեամբ Տ. Յուսէփ Արքեպիսկոպոսի և բաղմաթիւ ազգային յանձնաժողովներից և ընկերութիւններից լիազօրուած պատգամաւորների ներկայութեան, որոնք են. Տէր Եփրեմ եպիսկոպոս, Տ. Բագրատ եպիսկոպոս, Տ. Մատթէոս եպիսկոպոս, Տ. Գարեգին վարդապետ, Տ. Բարդէս վարդապետ, Տ. Վրթանէս վարդապետ Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովից, Տ. Սիօն վարդապետ Հին Նախիջևանից, Տ. Գևորգ վարդապետ Զեօրեքճեան Նոր Նախիջևանից, Փոխ-Թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս, Գրիգոր Տէր-Պաշտօնեան, Մկրտիչ Մուսինեան Երևանից, Մամսոն Յարութեան (նաև լիազօր Կարսից), Արշակ Ղազարեան, Աղեքսանդր Շարաֆեան, Արշակ Թաղեւեան, Բժիշկ Երուանդ Մինասեան, Աշոտ Աթանասեան Թիֆլիզից, Մարտիրոս Շաթիրեան, Երուանդ Թաղիանոսեան, Գրիգոր Ծովանեան, Աղեքսանդր Պարոնեան Բաղուից, Տ. Երուանդ քահանայ Նալբանդեան Սիմֆերոպոլից, Մաղաթէլ Թարաղեան Աղեքսանդրապոլից, Վարդգէս Քաջազունի Իզմիրից, Սարգիս Թաւայեան Մոսկուայից: Խորհրդակցական ձայնի իրաւունքով ներկայ էին նաև Սիրական Տիգրանեան Ազգային Կենտրոնական Բիւրոյի և Կովկասի չորրորդ բանակի սպարապետի կողմից, Համաբարձում Առաքելեան Թիֆլիզի Քաղաքային Գաղթականական Յանձնաժողովի, Կարապետ Օպեւեան Ղրիմի քաղաքների և Սեդրաք Աւագեան Պարսկահայ Գաղթականական Յանձնաժողովի ներկայացուցիչներ, որոնց հետեալ նիստին Նորին Արքեպիսկոս հանուութեամբ ժողովը վճռական ձայնի իրաւունք շնորհեց: Ապա նախադասք ի լուր պատգամաւորների յայտարարելով Համագումարին Կոնգակով սահմանուած գրադմունքի խնդիրները կամ օրակարգը, բաղկացած հետեալ վեց կէտերից՝ 1. Կաղթականների օգտին գործող բոլոր յանձնաժողովների և քննիչութիւնների համերաշխ գործունէութիւնը հաստատել, 2. Կովկասի գիւտնում և Բաղրամեում գաղթականների օգնութեան գործը կազմակերպել, 3. Կովկասում հիմնել գաղթական մանուկների համար որբանոց—ապաստարաններ, մանուկների և դպրոցներ, 4. Հիւանդանոցներ բանալ և նպաստել գաղթականների բժշկական և առողջապահական վիճակի բարւոյնման, 5. Այլ և այլ վայրերում գործող յանձնաժողովների հաշիւներն ու գեկուցագրերը լսել, 6. Գաղթականների վերադարձի և նրանց հայրենիքում բարւոյն տնտեսութեամբ վերահաստատելու մասին նպատակաւոր ընթացք ձեռնարկել Համագումարի առեւտրական և

քարտուղար. բաց ձայնտուութեամբ առաջին պարտականութիւնը վիճակուեցաւ պ. Մամսոն Յարութեանին, իսկ երկրորդը՝ Տ. Գևորգ վարդապետին:

ԶԵՆՈՒՄՆԵՐԸ. — Համաժողովի խորհրդակցութիւնը տեւեց երեք օր. նիստերը լինում էին օրական երկու անգամ: Գրաւոր գեկուցումներ ներկայացրին Ս. Էջմիածնի, Երևանի, Հին-Նախիջևանի, Աղեքսանդրապոլի և Իզմիրի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովները, Կովկասի Հայ Բարեգործական Ընկերութիւնը և Հայոց Կենտրոնական Կոմիտէն, Թիֆլիզի Հայոց Ազգային Բիւրոյի Կահանայ Կոմիտէն, Նպաստամատոյց Ընկերութիւնը, Թիֆլիզի Քաղաքային Գաղթականական Յանձնաժողովը, Տաւրիկեան նահանգի հայ համայնքների պատուիրակութիւնը, Պարսկահայ փախստականների Յանձնաժողովը, իսկ միւս հաստատութիւնների լիազօր ներկայացուցիչները բանաւոր գեկուցումն արին իրենց ուղարկող կազմակերպութիւնների գաղթականութեան նուիրած ջանքերի և ցանկութիւնների առթիւ: Ստացուած լուրջ և բազմակողմանի տեղեկութիւնները ապացուցին, նախ՝ որ հայ գաղթականների թիւը առաջին խուճապին եղել է ոչ պակաս քան 60000, որպիսի բազմութեան մեծագոյն մասը տեղաւորուել է Երևանի նահանգում, իսկ համեմատաբար շատ փոքր մասը Անդրկովկասի մնացած տեղերում և հիւսիսային Կովկասի կենտրոնական վայրերում. երկրորդ՝ որ ընդհանուր առմամբ գաղթականներին խնամելու գործը, չնայելով նպատակաւոր հաստատութիւնների եռանդին, գործիչների երկամսեայ անձնուրաց և փութալան սպասաւորութեան, տակաւին զարգացման բաւարար աստիճանի չի հասել, թեքուած շնորհիւ այն հանգամանքի, որ ազգը ն իւր ապէս հնարաւորութիւն չունի գաղթի բերած աւերը իւր լողոր հետեանքներով զարմանելու, այլ և այն իրողութեան, որ գաղթականութեան հոգաբարձու մարմիններին պակասում է միաբար և համերաշխ գործունէութեան ոգին, որ տեղի է տուել միմեանցից անկախ լինելու ձգտման և մրցութեան. երրորդ՝ որ 60000 թշուառների պահպանութեան համար երկու ամսուայ ընթացքում ազգային նպատակ գումարներից ծախսուել է մօտաւորապէս 200000 ուրլլի, պետական հաստատութիւնների նպաստի 100000 ուրլլի, որ կազմում է ընդհանուր ծախքի 5/8 մասը. իսկ մնացած 3/8 մասը՝ շուրջ 500000 ուրլլու ծախք իւր վրայ է առել Երևանի նահանգի հայ գիւղացիութիւնը, առանց որ և է շշուէ և զղբիցնող ազմուէլ յարու-

ցանելու, իւր յարկի տակ պատսպարելով և սեփական հացով ու կթանի բերքով սնուցանելով ապրուստի և զոյութեան միջոցներից զրկուած տարագիր ազգայիններին, չնայելով որ դէպի գաղթականութիւնը տածած սէրը քայքայում էր իւր տնտեսութեան հիմքերը:

Իզմիրի եղբայրական Օգնութեան, այլ և Պարսկահայ փախստականներին օգնող Յանձնաժողովների, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհրդի և Հայոց Կենտրոնական Կոմիտէի գեկուցագրերը, ի միջի այլոց, բովանդակում էին մի շարք շատ հետաքրքրական տեղեկութիւններ գաղթականների հայրենիքում ունեցած բարգաւաճ տնտեսութեան, կայքի, կալուածների, կրած տնտեսական և մարդկային կորուստների և դրանց նիւթական և բարոյական զննատութեան մասին: Իրական տուեալների համեմատ Բայագիրտի, Դիպիլի, Դարաքիլիսայի և Ալաշկերտի չորս քաղաքից և յիսուն գիւղերից գաղթել են 3020 տուն կամ 23640 հոգի, որոնցից 660 հիւանդ, իսկ ընդհանուր ու մասնակի աւարի ենթարկուել են Դարաքիլիսայի և Ալաշկերտը իրենց 36 շրջակայ գիւղերով, որոնցից 18 մեծ ու փոքր վայրերը, գլխաւորապէս Ալաշկերտը, Մոլլա-Սիւլէյմանը, Զեդեանը, Խոշեանը, Աղա-Դէվէն, Ամաղը, Զուջանն ու Խոլըրը մատնուել են չարաչար և անխնայ կոտորածի: Միայն Ալաշկերտից բնաջինջ է եղել 270, Մոլլա-Սուլէյմանից 150, Զեդեանից 70, Խոշեանից 35 հայ ընտանիք, Խոլըրից 260, Ամաղից 75, Դաղարայ գիւղից 35, Դուլթաից 14, Զուջանից 25 հոգի, չհաշուելով սակաւաթիւ կորուստ ունեցող վայրերը: Ընդհանուր առմամբ վերոյիշեալ տեղերից տղամարդիկ և չափահաս երիտասարդները՝ թուով 1200 հոգի արի և կրակի բաժին են դարձել, իսկ մատաղ աղջիկները, դեռատի կանայք և 7—10 տարեկան երեխաները՝ թուով ոչ պակաս քան 500 հոգի, գերութեան մատնուել: Սոյն շրջանի նիւթական՝ հացահատիկների, լծկան ու կթան կենդանիների և այլ զանազան իրերի կորուստը ուսական դրամի վերածած կարող է հասնել 4,500,000 ուրլլու արժողութեան:

Տաճկական Բասենի 11 վայրերից գաղթել է 1043 ընտանիք կամ 8518 հոգի, գերի տարուած աղջիկներ և կանայք 30, հիւանդներ 75, սպանուած 35 հոգի, նիւթական կորուստ 1,700,000 ուրլլու արժողութեամբ:

Ատրպատականի բոլոր կոտորածներից՝ Թաւրիզից, Սալմաստից, Սոյից, Մարագայից և Միւսնդարից գաղթած հայ ընտանիքների թիւն է մօտ 3360, իւրաքանչիւր ընտանիքի անդամները

միջին թուով հաշուելով 7, կստացուի 23,520 հոգուց բաղկացած, գոյքից, ապրուստից և աշխատանքի միջոցներից իսպառ զրկուած բազմութիւն: Կոտորածի ժամանակ մահացած տղամարդ 1970, գերուած կանայք և աղջիկներ 230 և հիւանդներ մօտ 800 հոգի: Նիւթական կորուստը — հացահատիկ և անասունի կեր՝ ցորեն, ալիւր, դարի, առւշյա, յարդ. անասունների՝ ձի, ոչխար, կով, եղ, գոմէշ, հաւ. կենսական մթերք՝ գինի, մեղր, իւղ, պանիր, հաւկիթ. գորգեղէն և անկողին, վառիւք, զիւղատնտեսական գործիքներ և տնային կահ կարասիք, — ընդամենը 3,021,135 թումանի կամ մօտ 6,042,270 ռուբլու արժողութեամբ:

Ռուսահպատակ Արդուինի, Արտահանի, Օլթու և Արտանուշի շրջաններից գաղթել է 1050 հայ ընտանիք կամ 7500 հոգի, կոտորածի ենթարկուածները 1270, գերուած կանայք և աղջիկներ 250, հիւանդներ 350 հոգի. նիւթական կորուստը 1,600,000 ռուբլու արժողութեամբ:

Բոլոր գաղթականների առևտրական ձեռնարկութիւններին հասած շուրջ 2,500,000 ռուբլու փասի հետ ամբողջ նիւթական կորուստը առաջին գաղթին առ նուազը էր 16,342,270 ռուբլու պատկանելի գումար, չհաշուելով աւերուած շէնքերը, մարդկային բազմաթիւ զոհերը և գաղթի յառաջ բերած անգործութեան և այլ ծանր հետևանքները:

Հայոց Նպաստամատոյց Ընկերութեան լիազօր Ա. Ա. թանասեանի ղեկուցումը առանձնապէս հետաքրքրական էր այն տեսակէտից, որ Նպաստամատոյցը Կովկասի հայութեան ապաւինած 60000 փախստականների առօրեայ ապրուստի հոգսը թողնելով գոյութիւն ունեցող միւս աղքատի հաստատութիւններին և պատերազմի աւթիւ կեանք ստացած հասարակական կազմակերպութիւններին, մտորում էր իւր վրայ վերցրել միայն նրանց գիւղական տնտեսութեան վերականգման մեծածախս և դժուարին աշխատանքը, գաղթականների հայրենիք վերադառնալուց յետոյ: Այս նպատակով Ընկերութիւնը յատուկ մասնախմբի միջոցով ծրագիր էր մշակել, ուսումնասիրելու աւերուած Հայաստանի հողային պայմանները և դաղթած աղքատներին վերադառնալու կարիքի չափը, որպէս զի ըստ այնմ յենած գլխաւորապէս պետութեան գրամական օժանդակութեան և երկրորդաբար աղքատի նուիրաբերութեան, կարողանայ աւերուած հայրենի տնտեսութիւնը վերականգնել: Միաժամանակ Ընկերութիւնը հետամուտ էր, իւր ծրագիրը իրականացնելու նպատակով, գաղթականական գործին նուիրուած միւս հայ կազմակերպութիւն-

ների համաձայնութեամբ Տիփլիսում մի հեղինակաւոր և ուս կառավարութեան վստահութիւնը անպայման վայելող վարչական մարմին և սրան կից մի կենտրոնական բիւրո ստեղծել, որ կենտրոնական փախստականների օգտին գանձուելիք նպաստի բոլոր գումարները և այնտեղից որոշ կարգով մատակարարուէին այս կամ այն կարիքի լուցուման համար, նախապէս հաստատուած նախահաշուի համեմատ: Եւ որովհետեւ միևնույն միտքը, իրականացման նպատակաւարար տարբեր ըմբռնումով, յղացել էր Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովը, ուստի պ. Ա. Ա. թանասեան Նորին Սրբութեան հաւանութեամբ Էջմիածնի Համագումարի գլուխ գալու իրողութիւնը համարում էր Նպաստամատոյց Ընկերութեան ղեկի իրականացման առաջին քայլը: Ընկերութեան 1915 թուի փետրուար 25-ին գումարած ընդհանուր ժողովը քննելով եղբայրական Օգնութեան Գլխաւոր Յանձնաժողովի սահմանած Համագումարի դրադմունքի խնդիրները, յանգել էր հետևեալ եզրակացութեան. 1. Հայ փախստականների փայլալուծ տնտեսութիւնը վերականգնելու համար անհրաժեշտ է գաղթականութիւնը խնամաւոր յանձնաժողովների եւ մարմինների մէջ համեմատաբար դաժնեցողութեան և անհրաժեշտութեան համաձայն ղեկավարելու: 2. Համագործակցութիւնը իրականացնելու համար ցանկալի է իւրաքանչիւր գաղթականական կազմակերպութիւնից հաւասար բաժնով ներկայացուցիչներ ընտրել եւ կազմել իւր գործառնութեան համար ընտրողների առաջ մի պատասխանատու եւ պարբերաբար բազմակողմանի հաւաք եւ տեղեկագիր ներկայացնող մարմին եւ նրա վարչութեանը յանձնել փախստականների վերաբերեալ գործերը, 3. Գաղթականական Ընկերութեան Կենտրոնական Վարչութիւնը պէտք է հաստատուի Կովկասի կուսակալութեան մայրաքաղաք Թիփլիսում, գտնուի Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանաւորութեան ներքոյ եւ Սնդկովկասի գաղթականական կենտրոններում ունենայ տեղական գործադիր բաժանմունքներ: 4. Նպաստամատոյց Ընկերութեան իրաւաց տակ գտնուած եւ գալիք գումարների 70%-ը յատկացնել բացառապէս գաղթականների գիւղատնտեսութեան բարելաւման եւ վարդապետներ հաղթեցնելու եւ նրանց տնտեսական կարիքներին գաղթականներին:

Այսպէս Նպաստամատոյց Ընկերութիւնը գաղթականական գործում բռնելով որոշ դիրք և կամենալով նուիրուել բացառապէս նուաճուած Հայաստանի քայքայուած գիւղական տնտեսութիւնը վերանորոգելու նպատակի սպասաւորութեան, ծրագրել էր մի շարք ուսումնասիրու-

թիւն կատարել, գաղթականների գիւղատնտեսական կարիքներին լաւապէս ծանօթանալու համար: Եւ որովհետեւ երկու ամսից ի վեր Երանքարէն Երեանի նախագում ընկերութիւն էին հաստատել և վայելում էին տեղական յանձնաժողովների խնամքը, որոնք բազմաթիւ փաստացի տուեալներ ունէին ձեռքի տակ գաղթականների անցեալ և ներկայ կացութեան, կորուստների, ունեցուածքի և տնտեսութեան մասին, ուստի Ընկերութիւնը որոշել էր լիազօր ներկայացուցիչներ ուղարկել Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Իգդիրի, Երեանի, Նոր-Բայազետի, Հին-Նախիջևանի, Ջուլֆայի և Շահթախտի գաղթականութիւնները, յանձնաժողովներից ձեռք բերելու փախստականների տնտեսական վիճակին վերաբերեալ մանրամասն և իրական տուեալներ, այլ և գաղթականների հետ բանակցելով անմիջական աղբիւրից հանելու և ցուցակագրելու հետևեալ տեղեկութիւնները. 1. Ո՞րտեղից են գաղթել, 2. Իւրաքանչիւր գաղթական ընտանիքում քանի հայրենիք վերադառնալ և տնտեսութեամբ պարագիւր ցանկացող տղամարդ կայ և գիւղատնտեսութեան որ ձեւերից է հետամուտ, 3. Ո՞րքան և ի՞նչ հերկ, ցանքս և վար ունին հայրենիքում, 4. Ո՞րքան և ի՞նչ սերմացու ունին. որտեղ է սերմացուի պաշարը, մնում է արդեօք թէ թշնամու ձեռքն է ընկել, 5. Մինչև յառաջիկայ հունիս իւրաքանչիւր ընտանիք որքան ուտեստի ցորենի, ալիւրի, գարու, խոտի, դարմանի և այլ անհրաժեշտ կենսական մթերքի կարիք ունի, 6. Իւրաքանչիւր ընտանիք հայրենիքում քանի գլուխ լծի և կթան տաւար է ունեցել, քանիսն է յափըղակուել, անհետացել, ստակել կամ ծախուել, քանիսի կարիք կունենայ, եթէ հայրենիք վերադառնալու և գիւղատնտեսութեամբ պարագիւր հնար լինի, 7. Երեանի նահանգում և Ատրպատականում սերմացու ցորեն, գարի, կորեկ, եգիպտացորեն, գետնախնձոր և այլն գնելու յոյս կայ և ի՞նչ գնով, 8. Ո՞րտեղից կարելի է ձեռք բերել լծկան և կթի անասուններ, որքան և քանիսով, 9. Գնած տաւարը փախստականների հայրենի ընտանիքը փոխադրելու համար որքան ծախք կպահանջուի, 10. Ունին արդեօք փախստականները երկրագործական անհրաժեշտ գործիքներ՝ գութան, արօր, փոցլա, եղան, կափն, մանգաղ, գերանդի և այլ պարագաներ՝ սայլ, պարան, պարկ և որքան. եթէ չունին, ի՞նչքան պէտք է գնել և կամ հնար կլինի երկրում շինել տալ, 11. Ի՞նչ դրութեան մէջ են փախստականների տները, շտեմարաններն ու մարազները հայրենիքում: Կործանուած շէնքերի նորոգութիւնը որքան ծախք կպատճառի և այդ նպատակով ի՞նչ նիւթեղէնի

կարիք կգաջուի և ձրտեղից կարելի է ստանալ, 12. Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը և իւր բաժանմունքները, այլ և միւս աղքատի նպաստի կազմակերպութիւնները մտադիր են արդեօք մասնակցել Նպաստամատոյցի ծրագրի իրականացման և ի՞նչ քանակութեամբ դրամական նպաստ կարող են յոտկացնել այդ նպատակով, 13. Հիմնել Իգդիրում, Հին Նախիջևանում, Ջուլֆայում, Երեանում, Վաղարշապատում, Կարսում և Կաղզուանում Նպաստամատոյց Ընկերութեան գործակալութիւններ, 14. Վերոյիշեալ տեղեկութիւնները հաւաքելուց յետոյ Ընկերութեան ընդհանուր ժողովի խորհրդակցութեան նիւթ դարձնել և հաւանութիւն գտած դէպքում գիւղի պետութեան վարչական և զինուորական իշխանութիւններին և խնդրել, որ յաջող հանգամանքներում վերադարձնեն հայ փախստականներին հայրենիք և արտօնեն նրանց իրենց աւերուած տնտեսութիւնը, գիւղերն ու աւանները վերաշինելու:

Ղրիմի հայ գաղութների պատուիրակութիւնը գեկուցեց, որ 1914 թ. հոկտեմբերի 26-ից Տաւրիկեան նահանգի իշխանութեան հաստատութեամբ Սիմֆերոպոլում, Խարսուբաղարում, Եւպատորիայում, Թէոդոսիայում, Մելիտոպոլում, Սևաստոպոլում, Նալթալում, Հին-Ղրիմում, Կերչում, Օրբադարում և Ջանքոյում հետզհետէ կազմակերպուել են Հայկական Կոմիտէներ, որոնք Հայաստանի ռազմաբեմ յայտարարուելուց յետոյ, ոգևորուած ազգի ազատագրութեան յուսաբեր երկունքով, որոշել էին. 1. Միացեալ ուժերով և դրամական նպաստով աջակցել 100 հոգուց հայ կամաւորական խումբ կազմելու և նրանց պատրաստելու գործին, 2. Կովկասեան ռազմաբեմին մերձաւոր տեղում 30 մահճակալով աղքատի հիւանդանոց հիմնել վերաւոր զինուորների համար հայ բժշկի ղեկավարութեամբ, և 3. հայ զինուորներին և հայկական զինուորական հիւանդանոցին մատակարարել ամեն տեսակ տաք հագուստեղէն, սպիտակեղէն, դեղորայք և վերակապի պարագաներ: Կոմիտէների միացեալ խորհուրդը ենթադրելով, որ պատերազմը երկարատեւ չի լինիլ, կազմել էր յետագայ վեց ամսուայ ծախքերի նախահաշիւ 30,000 ռ. գումարով: Այդ և ապագայ անհրաժեշտ գումարը հայթհայթելու իրեն միջոց Խորհուրդը ի նկատի է ունեցել այն ուշադրաւ հանգամանքը, որ Ղրիմի հայ համայնքները պատրաստակամութիւն էին յայտնել յօժարութեամբ ենթարկուելու սահմանած եկամտային տուրքի պարտագրաբար տարեկան վճարելով իւրաքանչիւր անհատի առ ձեռն դրամական ունեցուածքից

1/2 տոկոս, իսկ ոռճիկ ստացող և առևտրական շրջանառութեան տէր անձի տարեկան գուտ արդիւնքից նոյնպէս 1/2 տոկոս. այս ձևով 100,000 ռուբլու կարողութեան տէրը պէտք է վճարէր 500, իսկ 1000 ռուբլի ոռճիկ կամ առևտրական շրջանառութեամբ արդիւնք ունեցողը 50 ռուբլի, որով կոմիտէների միացեալ խորհուրդը ամբողջ թերակզող կարող էր մինչև պատերազմի վախճանը տարէ ցտարի 100,000 ռուբլի հայթհայթել, — մի ակնբախ ապացոյց, թէ ընդամենը 3000 շունչ ազգաբնակչութիւն ունեցող Ղրիմի հայ գաղութը ինչպիսի սրտացաւ վերաբերմունք ունէր դէպի թշուառ և պատերազմի աւերին ենթարկուած հայրենիքը: Սակայն այս ծրագիրը դեռ իրականացման սկզբնաւորութեան մէջ էր, երբ Կովկասի ճակատում տեղի ունեցաւ ռուս բանակի 1914 թ. դեկտեմբերի նահանջը և տասնեակ հազարաւոր հայ փախստականներ ապաւինեցին Ռուսաստանի հայրենիք: Ուստի և Ղրիմի Հայկական Կոմիտէները վճռեցին նախկին որոշումները մասամբ խափանել և իրենց զբաղակցի միջոցների մեծագոյն մասը ազգային տաղանայի օրերին յատկացնել գլխաւորապէս հայ գաղթականութեան, որի մի ծայրը, բաղկացած 35 անգամ պարունակող 9 ընտանիքից, 1915 թ. յունուարի մէջ հասել էր արդէն Սիմֆերոպոլ: Այս նպատակով առ 10 փետրուարի վերոյիշեալ վայրերում հաւաքուած առձեռն 53,000 ռուբլու գումարից Թիֆլիզի Հայոց Ազգային Բիւրոյին ուղարկած 6542 ռ. նպաստը և կամաւորական խմբի համար եղած շուրջ 8521 ռուբլու ծախքը հանկուց յետոյ, մնացորդը յատկացուեցաւ գաղթականական գործին, մասնակցելու այն բոլոր ձեռնարկութիւններին, որ նպատակայարմար կը համարի Յանձնաժողովների համերաշխ խորհուրդը Համագումարում:

Ս. Էջմիածնի, Երևանի, Ալեքսանդրապոլի և Հին-Նախիջևանի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովները, իբրև Երևանի նահանգում պատասպարուած հայ գաղթականութեան մեծագոյն մասի հետ մերձաւոր առնչութիւն ունեցող, փախստականների վիճակին լաւագոյն ծանօթ և օգնութեան գործի ծանրագոյն մասն ու պատասխանատուութիւնը ստանձնած հաստատութիւններ, ներկայացրել էին խնամքով և մանրամասն կազմուած զեկուցագրեր, որոնք պարունակում էին գլխաւորապէս փախստականներին ընդունելու, պատասպարելու, ցուցակագրելու և վիճակագրելու, նրանց կենսական մթերք և հագուստ մատակարարելու, որբերին ժողովելու և գործնական ձեռնարկութիւններին մասին իրական

տուեալներ, այլ և զբաղակցի մուտքի և ծախքի, ստացուած միջոցների և գործադրութեան հաշիւները:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան և Հայոց Կենտրոնական Կոմիտէի միացեալ գործունէութեան տեղեկագրի համաձայն այդ հաստատութիւնները եղբայրական Օգնութեան Յանձնաժողովից յետոյ հայ գաղթականներին վիճակուած նպաստի գործում առաջաւոր դիրք են բռնել և բեղմնաւոր գործ կատարել: Սկզբում Կենտրոնական Կոմիտէն փորձել է Կովկասում գործող բոլոր ազգային բարեգործական հիմնարկութիւնները համախմբել իւր գրասենյակի տակ: Գործակցութեան համաձայնութեամբ նրան յարել են միայն Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը և Թիֆլիզի կանանց Կոմիտէն: Գաղթի առաջին հոսանքը սկսուելուն պէս Միացեալ Կոմիտէն յանձնարարել է Բարեգործական Ընկերութեան Կարսի ճիւղին, ներկայացուցիչներ ուղարկել սահմանը, գաղթականներին դիմաւորելու և նրանց սկզբնական օգնութիւն հասցնելու: Գաղթի խուճապից անմիջապէս յետոյ լիազօրներ է ուղարկել Կարս, Կաղզուան, Արտահան, Սարիգամիշ, Ալեքսանդրապոլ, Իզդիր, Նախիջևան, Զուլֆա, Մակու և այլ կողմեր, ցուցակագրելու գաղթականներին, օգնելու նրանց և նպաստի մատակարարութիւնը ղեկավարող կազմակերպութիւններ կեանքի և գործի կոչելու: Իւր գործունէութիւնը ընդլայնելու և կազմակերպութեան իրօք ազգային Կենտրոնական Կոմիտէի բնոյթ տալու դիտաւորութեամբ իւր կազմի մէջ մասնակցութեան է հրաւիրել Թիֆլիզի երկու հայ օրաթերթի, Մոսկուայի, Պետրոգրադի, Նոր-Նախիջևանի, Եկատերինոգրի և Թեոդոսիայի հայ համայնքների կողմից ներկայացուցիչներ, այլ և դիմել է Ռուսաստանի և արտասահմանի Հայոց ակնաւոր գործիչներին, տեղական բանկերին, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ճիւղերին սեփական միջոցներով և հանգանակութեամբ նպաստելու հայ գաղթականութեան: Թիֆլիզում կազմակերպել է կառնեկուբան և ողորմաժողովրդի աշխատանք հայթհայթելու նպատակով: Ուղարկել է ղեկորայք, բժիշկներ և ֆիզիքներ Կարս, Սարիգամիշ, Կաղզուան, Ալեքսանդրապոլ և Ախալքալաք: Կանանց Կոմիտէի միջոցով պատրաստել է տուել ու հաւաքել մեծ քանակութեամբ նոր ու գործածուած տաք շորեր, սպիտակեղէն, անկողնի պարապանք, կօշիկներ և հակերով ու-

ղարկել գրեթէ բոլոր գաղթավայրերը բաժանելու: Իւր լիազօրների ձեռքով և Բարեգործական Ընկերութեան ճիւղերի օժանդակութեամբ քաղմել է գաղթականների ցուցակը և մօտաւորապէս որոշել նրանց թիւն ու կորուստը: Մասք է ունեցել մօտ 109,000 ռուբլի, որից ծախսել է գաղթականութեան պէտքերի համար շուրջ 48,000: Կենտրոնական Կոմիտէի Նախագահ պ. Սամսոն Յարութիւնեանը երկու անգամ ի պաշտօնէ այցելել է Կարսի, Ալեքսանդրապոլի և մէկ անգամ Ախալքալաքի շրջաններում կենտրոնացած գաղթականներին, անձամբ ծանօթացել նրանց վիճակին և, լինելով միաժամանակ Պատերազմից վնասուածներին Օգնող Կովկասի Կենտրոնական Կոմիտէի անգամ, վերջինս նիստերին պաշտպանել է հայ փախստականների օգուտը և ներշնչել, հայկական մարմինների աջակցութեամբ հիմնել գաղթականական հիւանդանոցներ Կարսում, Կաղզուանում, Ալեքսանդրապոլում և Ախալքալաքում: Զեկուցանող պ. Ա. Շարաֆեանը իբրև գաղթականական գործին անձամբ տեղեկ և ուսումնասիրած փախստականների ամենատարրական կարիքները, տեղեկագրին կցել է 57,000—60,000 գաղթականներին վկայ ամիս միայն սնունդ մատակարարելու համառօտ նախահաշիւը և յանգել այն եզրակացութեան, որ հասարակական և ազգային միջոցներով անհնարին կլինի գաղթականներին Կովկասում երկար ժամանակ սնուցանել, խնամել, պատերազմի յաջող վախճանին հայրենիք վերադարձնել և հայրենիքում նրանց տնտեսութիւնը վերականգնել, որպիսի մտադրութեան իրականացումը բազմաթիւ միջոցների ծախք կպահանջի և հնարաւոր կլինի միայն պետութեան առատ և լայն զբաղակցի օժանդակութեամբ:

Ազգային Բիւրոյին կցորդ Հայ Կանանց Կոմիտէի և Թիֆլիզի փախստականներին Օգնող Բաղադային Յանձնաժողովի ղեկուցագրերից յայտնի եղաւ, որ առաջինը փախստականներին մօտ 5000 ռուբլի զբաղակցի նպաստ է բաշխել, 77 հակ հագուստեղէն ուղարկել Իզդիր, Սարիգամիշ, Հին-Նախիջևան և Ախալքալաք գաղթականների համար, այլ և Թիֆլիզի զանազան դպրոցներում տեղաւորուած 300 գաղթական երեխաներին հագուստ է մատակարարել. իսկ երկրորդը 1914 թ. դեկտեմբերի 20-ից մինչև 1915 թ. փետրուարի 27-ը զբաղակցի նպաստ է բաշխել Թիֆլիզ ապաւինած 3800 հայ, 4000 ասորի և 200 ռուս, յոյն, լեհ, մուսուլման և հրէայ փախստականներից չափահասներին ամսական 4 ռ. 50 կ., մանկահասակներին 2 ռ. 25 կ. տալով:

Սպասած 12000 ռուբլու գումարից 4600 ռ. բաժանուել է ասորի, 7400-ը հայ և միւս այլացեղ գաղթականներին:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ.— Գրաւոր և բանաւոր զեկուցումները լսելուց, գաղթականներին հոգատար հաստատութիւնների գործունէութիւնը մի քանի տեսակէտից քննադատութեան ենթարկելուց, իւրաքանչիւրի ցոյց տուած արդիւնքն ու բարի ձեռնարկութեան արգասիքը ըստ արժանոյն գնահատելուց յետոյ, Համագումարը օրակարգի միւս հինգ խնդիրները յանձնարարեց մասնախմբերի խորհրդածութեան, ջոկ-ջոկ ուսումնասիրելու և եզրակացութիւններն ու կարծիքները Համագումարի վերջնական քննութեան և հաստատութեան մատուցանելու համար: Առաջին հերթին քննութեան առնուեցաւ հայ փախստականների օգուտը գործող բոլոր յանձնաժողովների և ընկերութիւնների մէջ միարար և համեմատելի համագործակցութիւն հաստատելու խնդիրը: Մտքերի և կարծիքների երկարատե փոխանակութիւնից յետոյ Համագումարը ձայների ճնշող բազմութեամբ բնադրուեց հետեւեալ որոշումները. 1. Անհրաժեշտ է հիմնել մի կենտրոնական ղեկավար և տեղեկատու մարմին փախստականների օգնելու համար, 2. Ղեկավար և տեղեկատու Մարմինը պետք է հաստատուի Ս. Էջմիածնում և վայելի Ամենայն Հայոց Հայրապետի բարձր նովանորոշութիւնը, 3. Ս. Էջմիածնի Կենտրոնական Ղեկավար Մարմնի կազմը պետք է բաղկացած լինի տասներկու քնուած անդամից, 4-ը Ս. Էջմիածնի և 4-ը Երևանի ներքալական Օգնութեան Յանձնաժողովների, 2-ը Թիֆլիզի, 1-ը Բագուի և 1-ը Մոսկուայի Հայոց ազգային հաստատութիւնների ներկայացուցիչ:

Ս. Էջմիածնի Կենտրոնական Յանձնաժողովի կամ Ղեկավար Մարմնի ֆունկցիաները որոշելու համար ընտրուեցաւ մի մասնախումբ, որի մէջ մտան Տ. Բաղդատ Եպիսկոպոս, պ. պ. Հ. Առաքելեան, բժ. Ե. Մինասեան, Ա. Ղազարեան, Ս. Յարութիւնեան և Ա. Պարոնեան, որոնք միւս նիստին Համագումարին առաջարկեցին իրենց մշակած բանաձևը յետագայ մասերով, որոնք իբրև որոշումներ ձայների առաւելութեամբ հաստատուեցան ժողովից. 1. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նովանորոշութեան և վերին նսկողութեան ներքոյ գրուում և Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովը ղեկավարող է այն բոլոր ազգային յանձնաժողովների և կազ-

Օրակարգի 2, 3, և 4-րդ հերթական կետերը, որոնք պարունակում էին զաղթականների խնամատարության ընդհանուր գործը՝ նրանց

818
598

Համադումարին մարքերի աշխոյժ փոխանա-
կութեան առաւ նիւթ մատակարարեց զպղծա-
կաններին հայրենիք վերագործնելու և նրանց
տնտեսութեան վերականգման խնդիրը։ Չնայելով
ոռւս բանակի անօրաթիւք յառաջխաղացման կով-
կասի ճակատում, ճախորդ անակնկալի երկիւղը
ժողովականներին տարակուսանք և երկբարու-

Մտքերի փոխանակութիւնը գրական ար-
դիւնք ունեցաւ, Համագումարը խրախուսեց գաղ-
թականներին մերձաւոր ապագայում հայրենիք
ուղարկելու մտադրութիւնը և որոշեց նախօրօք
նախաճաշի կազմել. 1. Փախստականներին վեց
ամիս խնամելու եւ պալպանելու, 2. Հայրենիք
փոխադրելու եւ նրանց տնտեսութիւնը բնավայ-
րում վերականգնելու, 3. Վերադարձողների կեանքն
ու զոյքը ներգաղթին եւ հայրենիքում ապահովելու
նուազագոյն ծախքերի համար: Նախաճաշիւր, որ
Խողովի յանձնարարութեամբ կազմել էին պ. պ.
Ա. Աթանասեան, Ս. Աւագեան, Ա. Դրմբեան,
Ա. Թադէոսեան, Ե. Թաղեանոսեան, Ա. Շարա-
բեան և Վ. Քաջմանուէրի, յետագայ թուական
պատկերն էր ներկայացնում, հաշուելով փա-
ստական ընտանիքների թիւը 8900 կամ ընդա-
մենը շուրջ 60,000 հոգի և անորոշ թողնելով ազ-
դիւնք և պետութիւնից սպասուած նպաստը:

ԺԱԽՔԻ ՀԱՄԱԹՕՏ ՆԱԽԱՀԱՇԻԻ

Ա. Պահպանություն.

1. Մասնագ և պահպանություն, անձին օրական 15 կոպէկ .	1,620,000 ո.
2. Եօթը հիւանդանոցի պահպանություն, ամսական 14,000 ո.	84,000 ո.
3. Հիւանդանոցի եւ շրջիկ բժիշկներ, ֆելդշերներ, դեղորայք .	16,000 ո.
4. Քսան շրջիկ սանիտարներ և հակողներ, ամսական 2000 ո.	12,000 ո.
5. Անահիւսունիկի ծախք 100/0 2—4 յօդուածներէց .	11,200 ո. 1,743,200 ո.

Բ. Վերադարձ եւ ցնցեցություն.

1. Ծանաղարհի ծախք, անձին 3 ուրլի .	180,000 ո.
2. Նորոգութիւն 8900 աւերուած շէնքերի, 50-ական ուրլի .	445,000 ո.
3. Սերմնացու ցորեն 180,000 փութ, 1 ո. 50 կոպէկով .	270,000 ո.
4. Սերմնացու գարի 180,000 փութ, 1 ո. 50 կոպէկով .	270,000 ո.
5. Լծկան եղ 8900 զոյգ, 100 ուրլով .	890,000 ո.
6. Կթի կով 8900 գլուխ, 30 ուրլով .	267,000 ո.
7. Գիւղատնտեսական զոյք և զործիքներ 8900 բնտանիքի համար	540,230 ո. 2,862,230 ո.

Գ. Ապահովություն.

1. Կեանքի և զոյքի ապահովութիւն .	50,000 ո. 50,000 ո.
Ընդամենը .	4,655,430 ո.

Համագումարը ի նկատի ունենալով, որ ազգային և օտար ազգիւրներից ստացած և ստանալիք նպաստի կաթիլներով անհնարին է բաւարարել այս նուազագոյն չափով դժած գաղթականական կարիքները և իրականացնել հայրենիք վերադարձող փախստականների կեանքի և զոյքի ապահովութեան հարցը, Ատենապետի առաջարկութեամբ որոշեց հայցել Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Հայրապետին, որ բարեհաճի գիտնել կառավարութեան, նախ պետական

նպաստ և ապա Կովկասի բարձր իշխանութեան աջակցութիւնը խնդրելու, հայ գաղթականների թշուառ վիճակը բարելաւելու և հայրենիքում նրանց կեանքն ու զոյքը պաշտպանելու համար, իսկ եթէ կառավարութիւնը մերժի, յանձնարարել Ս Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ղեկավար և Կենտրոնական Տեղեկատու Յանձնաժողովին, որ փութով կազմակերպի փախստականների կեանքի և զոյքի ապահովութեան զործիքը սեփական միջոցներով:

2. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԹԳՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԽՈՐ ԵՒ ԿԱՐԳԱԳԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Նորին Սրբութիւնը ընդունելով Ս. Էջմիածնի Համագումարի մասին զեկուցումներ և ուշադրութեան առնելով նրա արձանագրութիւններն ու որոշումները, որ միանգամայն համապատասխան էին Հայրապետական կամքին և Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի զործունէութեան նախնական ծրագրին ու ընթացքին, բարեհաճեց իրականացնել Համագումարին ազգի արտայայտած ցանկութիւնները: 1915 թուի մարտի 21-ի Հմբ. 462 և յուլիսի 10-ի Հմբ. 1169 Կոնգրակներով Եղբայրական Օգնութեան Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովը, իրրև հայ փախստականներին խնամատար ազգային կազմակերպութիւնների և յանձնաժողովների Ղեկավար, այլ և հանուր հայ գաղթականական զործի Կենտրոնական Տեղեկատու Մարմին, վերակազմուեցաւ և նրա անդամների շարքի մէջ մտան Համագումարին մասնակցող Հայկական Կոմիտէներից, Ընկերութիւններից և Յանձնաժողովներից ընտրուած ու Վեհափառ Հայրապետից հաստատուած ներկայացուցիչներ, որոնք են. Տ. Բագրատ և Տ. Մատթէոս Եպիսկոպոս, Տ. Գարեգին և Տ. Բաղդէն վարդապետներ Ս. Էջմիածնի Յանձնաժողովից, Տ. Խորէն Եպիսկոպոս, պ. պ. Վասիլ Եղիազարեան, Գրիգոր Տէր-Սաչատրեան և Արշակ Զիլինգարեան Երեւանի Յանձնաժողովից, պ. պ. Յովհաննէս Սաղաթելեան և Պօղոս Կանգուրաւեան Թիֆլիզի Հայոց Բարեգործական, Գիւղատնտեսական, Նպաստամատոյց Ընկերութիւններից, Ազգային Կենտրոնական Կոմիտէից և Հոգեւորականների ու ծխական Հոգաբարձութիւնների Յանձնաժողովից, պ. Գաբրիէլ Պապեան Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնից և Կուստուրական Միութիւնից, պ. բժիշկ Անդրէաս Սալթիկեան Նոր-Նախիջևանի Հայկական Կոմիտէից, Բարեգործական Ընկերութիւնից և Եկեղեցական Հոգաբարձութիւնից, պ. Գեորգ Ամիրեան Պետրոգրադի և Ս. Յ. Սաչատրեան Մոսկուայի Հայկական Կոմիտէներից և Եկեղեցական Պետրոգրադի և Ս. Յ. Սաչատրեան Մոսկուայի Հայկական Կոմիտէներից և Եկեղեցական Պետրոգրադի Կոնգրակով արտօնութիւն էր շնորհուած նաև գաղթականական զործին նուիրուած բոլոր ազգային յանձնաժողովների և կազմակերպութիւնների անդամներին և առանձին յանձնաբարութեամբ լիազօրութեան, Ս. Էջմիածնում եղած ժամանակ մասնակցել Գլխաւոր Յանձնաժողովի քննարկին և խորհրդակցութիւններին:

Հայրապետական Կոնգրակը, ինչպէս անցեալ նոյնպէս և այս անգամ հրահանգում էր՝ «Հայաստանի ամեն կողմերում կազմակերպել եղբայրական օգնութեան գործը, նպաստել թշուառներին, աննդատու կայաններ հիմնել, քաղաքներում և կենտրոնական գիւղերում հիւանդանոցներ և բժշկական ընդունարաններ հաստատել, ծածկել տնտեսիկ մեղքութիւնը, երաշխաւորուած ապահովութեան ղեկավարում ուղևորել գաղթականներին իրենց ազատագրուած հայրենիքը և օգնութեան ձեռք մեկնել նրանց, հայրենի մոխրակոյտի ու աւերակների վրայ կենդանացնելու իրենց քայքայուած գիւղական տնտեսութիւնն ու օջախը»: Ապա Նորին Վեհափառութիւնը յայտ էր տաւ, որ «Իւր հոգևոր որդիները ամեն կողմից տեսնելով Վասպուրականի, Մանազկերտի, Բաղշէի, Տարօնի, Ալաշկերտի, Բասենի և Հայաստանի այլ կողմերի հայոց անչափ և բազմազան կարիքները, առատաձեռն նուէրներով կնպաստեն իւր բազմաշարք որդիներին ապրելու և կախփեն, պահ մի մոռանալու իրենց դժոխային պայմաններում անցուցած օրերը»: Կոնգրակը Գլխաւոր Յանձնաժողովին, իրրև բոլոր հայաստա ազգային կազմակերպութիւնների Ղեկավար Մարմնի արտօնում էր՝ «Հաւաքել պարբերաբար բոլոր ինքնուրոյն և ստորագիր յանձնաժողովների գործունէութեան մասին տեղեկութիւն, ստանալ նրանց դրամական մուտքի և ծախքի հաշիւները վաւերացրած տեղական վերատուգող մարմինների կողմից և կարեւոր քաղաքները հետզհետէ տպագրութեամբ հրատարակելով մատչելի առել հայ ազգին»:

Յանձնաժողովի Նախագահութիւնը Նորին Սրբութեան հաճութեամբ և տնօրէնութեամբ վաւերել են Տ. Եփրեմ Եպիսկոպոս 1914 թուի դեկտեմբերի 28-ից մինչև 1915 թուի ապրիլի 26-ը, Տ. Բագրատ Եպիսկոպոս 1915 թ. ապրիլի 26-ից մինչև սեպտեմբերի 17-ը, Տ. Գարեգին վարդապետ (այժմ Եպիսկոպոս) 1915 թ. սեպտեմբերի 17-ից մինչև 1916 թ. օգոստոսի 1-ը, իր Կոնգրակով նախագահութիւնը անցաւ Տ. Գեորգ վարդապետին (այժմ Եպիսկոպոս): Չանաղան ժամանակ Նորին Սրբութիւնը Յանձնաժողովի անդամութեան է կոչել Մ. Աթոսի միաբաններից Տ. Տիրայր, Տ. Չաւէն Եպիսկոպոսներին, Տ. Իսահակ, Տ. Վրթանէս և Տ. Գիւտ վարդապետներին:

3. ԳԵՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ԳԻՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ ԱԼԱՇԿԵՐՏԻ ՀՈՎՏՈՒՄ ԵՒ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Գաղթականներից սակաւաթիւ կորովի, խիզախ ու ձեռներէց սղամարդիկ ձմեռուայ ամիսներին ուս ընտանի յառաջընթաց շաւղով անցել էին հայրենիք, մասնաւոր Քայաղիտի, Ալաշ-կերտի, Ղարաքիլիսայի և Ատրպատականի կողմերը, զարնան ըացողներուն պէս իրենց ցանքսին խոտատեղին, դաշտին ու հանդին, աւերուած տանն ու դրանը տիրանալու, ցորենի ու գարու հորերին, տնային կարասիքի թագստոցներին պահապան կանգնելու նպատակով: Այգալիսները տոկուն աշխատութեամբ՝ զօրքին սպասաւորելով կամ մանր առևտուրի ձեռնարկութեամբ բաւական ապահով վիճակ էին ստեղծել և հիմք ունէին յուսով սպասելու իրենց խափանուած տնտեսութեան և հրկիզուած շէնքերի մօտալուտ վերաշինութեան: Մերձ ապագային դրանք եղան նաև ներգաղթի կարապետներն ու հայրենիքի վերաշինութեան առաջին նեցուկները:

Կենսարեւր զարնանամտին, երբ ցամաքած ծառն ու թուփն էր բողբոջում, սառած գետինը դալարում և տարագիր ծիծառը իւր լքած նախկին բունն էր գորգուրում, հիւսում, կեանք ու եռանդ էր առել նաև Այրարատի ու Շիրակի պանդուխտ, տնաւեր փախստականը: Կարծես նա թե էր առած, լեռների բարձունքից ու լանջերից ճախրելու Մասիսի միւս կողմը, դէպի իւր բնագաւառը, այն զուլումի երկիրը, որ թարմ ողողում էր հայի արիւնով: Ուր դեռ անթաղ ընկած էին իւր հերոս որդիների դիակները, ուր մոխրի տակից դեռ մխում էր իւր այրուած տունն ու տեղը: Ուր իւր ոստիւր, արիւնուշտ քիւրդն ու թուրքը նիդակն ու սուխը աջ ու ձախ ճօճելով դեռ մահ էր սփռում ամեն տեղ: Ուր վերջապէս համաճարակն ու սովը ժայռերի ծերային, անտառի խորքին, անմատչելի այրերին ապաստանած հաղարաւոր հայ թշուառների կեանքն էր հնձում: Հայ գաղթականին այլ ևս սոսկալի չէր նաև աշխարհաստանն ուղմի անհղ փողն ու հրետանութիւնը հայրենի լեռներում: Նա հոգու բոլոր թափով ձգտում էր դէպի երկիր, օտար արևը այլ ևս նրան չէր տալիս: Եւ այս հասկանալի հոգեկան տրամադրութեամբ փախստականները ամեն կողմից խնդրենք էին տեղում Եղբայրական Օգ-

նութեան Յանձնաժողովներին, անցագիր և նպաստ խնդրելով հայրենիք վերադառնալու համար:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՐՁ. — Որքան էլ փախստականների մէջ ինքնաբերաբար յառաջացած շարժումը, հայրենիք վերադառնալու նկատմամբ, համապատասխանում էր Ս. Էջմիածնի Համագումարի որոշման և Եղբայրական Օգնութեան Ղեկավար և Տեղեկատու Մարմնի ծրագրին ու ցանկութեան, բայց և այնպէս Կարգադիր Յանձնաժողովը շատ խոհեմ և զգուշաւոր դիրք բռնեց այդ կարևոր խնդրի լուծման վերաբերմամբ, յետագայ հանգամանքներն ի նկատի ունենալով: Նախ՝ ճակատում ռազմական դրութիւնը երբեք էր և ուս ընտանիք մեծամեծ դժուարութիւնների դէմ տակաւին գերմարդկային ջանքեր պիտի թափէր, լեռնանցքերին տիրանալու և յաղթական ճանապարհ հարթելու համար դէպի Մուշ, Վան և Բաղէշ: Երկրորդ՝ Բաղէշի, Մուշի, Վանի, Արճէշի, Ախլաթի, Ալաւազի, Պատնոսի, Լիզի, Կոփի և Մանազկերտի շրջաններում, որոնք դեռ թիւրքաց բռնապետութեան տակ էին հեծում, հայ ժողովուրդը այդ պահին ենթակայ էր ընդհանուր կոտորածի, աքսորի, աւարի. ուստի և հայոց գաղթի նոր հոսանք էր սկսուել ուսաց պաշտպանողական ճակատագրի երկարութեամբ դէպի գրաւած հայկական գաւառները, ուր մերթ զմերթ տեղաբնակ իշխանութիւնը անցնելով օրէնքի և իրաւունքի սահմանը և մերթ նաև առանձին զօրապետներ քմահաճօրէն ոտնկոխելով ամեն արդարութիւն, մի կողմից արգելում էին բնիկ և եկուոր հայ փախստականներին բնակութիւն հաստատելու նուաճուած հայկական վայրերում, իսկ միւս կողմից գէնք կրելու և աղատ շրջագայելու արտօնութեամբ յղկացնում էին սանդաղակ քիւրդ հրոսակներին, մոխրաւոյտի և աւերակների վրայ որբացող ցաք ու ցրիւ հայերին կեանքի արեւից զրկելու համար: Երրորդ՝ անհրաժեշտ էր նախապէս պետական իշխանութիւնից ներգաղթի թոյլտուութիւն ձեռք բերել և աղաներգաղթի թոյլտուութիւն ձեռք բերել և աղաներգաղթի թոյլտուութիւնների աշակցութեամբ ապրուստի և առողջապահական դիւրութիւններ, կեանքի և գոյքի ապահովութեան պայմաններ

ստեղծել երկրում, որպէս զի ներգաղթող փախստականները դերձ միայն սովից, տարափոխիկ ու համաճարակ հիւանդութիւններից և աւազակային յարձակումներից, պայմաններ, որոնք կարևոր են ամեն հաստատարնակ, երկրագործ ու գիւղատնտես ժողովրդի համար: Զորքերը՝ անհրաժեշտ էր նաև նախապէս երկրագործական գործիքներ, պարագաներ, սերմացու և լծկաններ հայթհայթել վերադարձողների համար, որպէս զի երկրի վերաշինութեան և նրանց ապագայ տնտեսութեան բարգաւաճման հիմք դրուէր:

Այս նկատումներով Յանձնաժողովը, փախստականների դարձը դէպի հայրենիք կազմակերպելուց առաջ, Վեհափառ Հայրապետի հաւանութեամբ երկու պատուիրակութիւն ուղարկեց Բայազետի, Ալաշկերտի և Ղարաքիլիսայի շրջանները, առաջին անգամ Տ. Մատթէոս Կալսկոպոսին և Բարդէն վարդապետին, Գեղէն Ահարոնեանի և Ռուբէն Օհանյանեանի ուղեկցութեամբ, իսկ երկրորդ անգամ Տ. Պրէն Կալսկոպոսին և Տ. Արսէն վարդապետին: Պատուիրակութեան յանձնարարութեամբ տեղում ծանօթանալ հայ փախստականների վիճակին, նուաճուած երկրի հանգամանքներին, տեղեկանալ Տաճկաստանի հայոց հողային սեփականութեան նկատմամբ պետութեան բռնած քաղաքականութեան ընթացքին, բնակեցել զինուորական իշխանութեան և զօրաբանակի սպարապետի հետ, թէ ո՞ր շրջաններում կ'ընդլայտի կովկասից վերադարձող հայ գաղթականներին տեղաւորուել և վերաշինել իրենց գիւղերն ու նախկին բնակութեան տեղերը և թէ արդեօք զինուորական իշխանութիւնը կ'ապաստի նրանց գիւղատնտեսութեան նուիրուելու, որ պատերազմի ժամանակ շատ ցանկալի էր աղագրանալութեան և զօրքի պարենաւորման տեսակէտից, և ի՞նչ չափով, արդեօք սերմացու և լծկաններ կ'աւելի երկրագործներին թէ ոչ: Միւս կողմից Յանձնաժողովը իւր բաժանմունքների և համագործակից կազմակերպութիւնների աշակցութեամբ շտապով ցուցակագրել տուաւ իւրաքանչիւր գաղթավայրի այն փախստականներին, որոնք իրօք հայրենիք վերադառնալու և շինարարական գործին ձեռնամուխ լինելու ցանկութիւն ունէին, մանրամասն տեղեկութիւն հաւաքեց նրանց ունեցած լծկանների, երկրագործական պարագաների ու երկրում հորած սերմացուի քանակի մասին, այլ և պակասորդը հայթհայթելու ծախքի մօտաւոր նախահաշիւը կազմեց:

Միաժամանակ Հայոց Գիւղատնտեսական և Նպաստամատոյց ընկերութիւնները հաւատարիմ Համագումարում ջօշափուած սկզբունքին և ժողովի որոշումներին, մարտի կէսից Ալաշկերտի և

Ղարաքիլիսայի կողմերն էին ուղարկել երկրի աւերուած տնտեսութեան վերականգմանը նըպաստող երկու յանձնախումբ, մինը լիազօր Ա. Թադէոսեանի առաջնորդութեամբ, Մուշից թուամանեանի և Միքայէլ Տէր-Գէորգեանի անդամակցութեամբ, միւսը լիազօր Ա. Աթանասեանի գլխավորութեամբ, որին ուղեկցում էր իւր օգնականը՝ պ. Բարաշանեան: Կենտրոնից հրահանգ էր տրուած, նախ սկզբնական տեղեկութիւններ ժողովել հայրենիքի ծոցը դարձած փախստականների գիւղատնտեսական կարիքների մասին, պատշաճաւոր զեկուցագիր ներկայացնել Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխավոր Յանձնաժողովին և ապա նրա փոխադարձ համաձայնութեամբ ու աշակցութեամբ կազմակերպել գաղթականների վերադարձը, լայն չափով նպաստել տնտեսութեան դարգացմանը, երկրագործական գործիքներ, լծկաններ, կթաններ և սերմացու մատակարարել, վերահասու լինել երկրում հայապատկան հողերին, կալուածներին, խոտահարքին, ցանքսին, այլ և ըստ կարելոյն օժանդակ լինել վերադարձողների շինարարական աշխատանքին և ընդհանրապէս նրանց բարեկեցութեան, պաշտպանելով նաև ժողովուրդի առողջութիւնը, գոյքն ու կեանքը անակնունելի պատահարներից:

Ստացուած տեղեկութիւնները համոզեցին Յանձնաժողովին, որ առ այժմ վաղաժամ է բոլոր գաղթականներին անխտիր ուղարկել հայրենիք, քանի որ ռազմական տեսակէտից մթնոլորդը դեռ պարզ չէր: Կարսի նահանգապետի կարգադրութեամբ Արտահանի, Արդուինի, Սարիղամիշի և Կարսի փախստականների առաջ դեռ փակուած էին հայրենի դռները թիւրքական վտանգի երեսից: Ամբողջ Սալմաստը սաքսափի օրը էր ապրում թուրքերի և քրդերի Ուրմիայի և Սովուշ-բուլաղի ուղղութեամբ գործած անընդհատ յարձակումների պատճառով: Բերկերիկալէի և Արճէշի ճանապարհները միանգամայն կտրուած էին, իսկ Մանազկերտի շրջանում գնեքալ Արացեի և իւր գործակիցների չարամիտ բռնաարկութեամբ բացարձակ հալածանք էր սկսուած գաղթական հայերի դէմ: Նոյն վայրերում մթերքի պակասութիւնը՝ սով, տաքածուած համաճարակը մահ էր սպառնում հայութեան մնացորդներին: Միակ փոքր ի շատէ յուսալից վայրը գիւղատնտեսական և շինարարական գործի յաջողութեան համար Բայազետի, Ալաշկերտի և Ղարաքիլիսայի շրջաններն էին: Ուստի Յանձնաժողովի կարգադրութեամբ միայն այդ տեղերի փախստականներից մօտ 1800 հոգի, աշխատանքի ընդունակ անձինք, իբրև 1500 ընտանիքի ներկայացուցիչ

մարտի 15-ից սկսած մինչև մայիսի 15-ը վերադարձան հայրենիք, շինարարական գործին և տնտեսութեան նուիրուելու, թողնելով իրենց կանանց, երեխաներին և ծերունիներին կովկասի սահմաններում: Վերադարձողներին համար անընդատու կայաններ էին հաստատուած Էջմիածնում, Իգդիրում, Յովհաննու վանքում և Ղարաքիլիսայում: Իգդիրի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը ցուցակադրում էր անցորդներին և մատակարարում նրանց անհրաժեշտ իրեր, իսկ երկրում Սիրական Տիգրանեանի կազմակերպութիւնը, քանի ղեկ վանի շրջանը չէր անցած, ապահովում էր նրանց կեանքը ճանապարհի անակնկալներէ՝ գործով ու խորհրդով պիտանի ծառայութիւն մատուցանելով նրանց:

Վերադարձի և հայրենիքի վերաշինութեան նախապատրաստական ձեռնարկութիւնները մէջ ծանրակշիւ նշանակութիւն ունէր. գիւղատնտեսական գործիքների, լծկանների, սերմացուի մատակարարութիւնը, վերադարձողների համար կենսական մթերքների հայթհայթումը մինչև հունիսը և բժշկական օգնութեան կազմակերպութիւնը: Այս խնդիրները լուծելու և նրանց իրականացման միջոցներ որոնելու համար Նորին Սրբութեան տնօրէնութեամբ 1915 թ. ապրիլի 26-ին Ս. Էջմիածնի Վեհարանում նոր ընտրուած նախագահ Տ. Բագրատ հայրենասիրի ատենապետութեամբ տեղի ունեցաւ վերակազմուած Եղբայրական Օգնութեան կենտրոնական և զեկավար Յանձնաժողովի անդամներէ նիստը, որին ներկայ էին անդամներ Մեծամասնութիւնից զատ նաև Գիւղատնտեսական և Նպաստամատոյց ընկերութիւնները լիազօր Ա. Աթանասեան և Ա. Թադէոսեան: Սրանք բանաւոր զեկուցումն արին Բայազետի Ալաշկերտի և Ղարաքիլիսայի գաւառներում իրենց կատարած միամսեայ շրջագայութեան արդիւնքի և աչքով տեսածի մասին:

Ա. Թադէոսեանը միանալով Սիրական Տիգրանեանի կազմակերպութեան, այցելել էր 23 հայկական գիւղ, ուր կենտրոնացած էին վերադարձող փախստականները կամ արեւմտքից ու հարաւից դիմում էին գաղթականական նոր հոսանքներ: Ղարաքիլիսան, Զեդեանը, Ամաթը, Մուլա-Սիւլէյմանը, Եօնջալուն և Ղազին բոլորովին աւերուած էին. ուստի վերադարձող բնակիչները ժամանակաւորապէս զետեղուում էին բնակիչութիւնից թափուր և համեմատաբար քիչ վնասուած քրդական գիւղերում, իսկ մնացած աւանների աւերածը յարաբերաբար աննշան էր և բնակիչները շտապով վերանորոգում էին իրենց խրճիթները: Բոլոր վայրերում վերադարձած փախստականներին ծանր հոգս էր պատճառում

լծկան անասունների, գիւղատնտեսական գործիքների՝ մանաւանդ գութանի, գերանդու, բահի և չուլի, սերմացուի, առօրեայ սննդի և բժշկական օգնութեան զգալի սպակասութիւնը: Ըշմարիտ է, թէպէտ առաջին վերադարձողները իրենց հետ բերել էին սակաւ լծկան և գործիքներ, իսկ շատերը իրենց հորերում գտել բաւականաչափ սերմացու ցորեն, սակայն այդ ամենը բաւարար չէին ոչ միայն յառաջիկայ աշնան վարին ու ցանքսին, այլ և ներկայ գարնանը արտերը հերկելու, մշակելու, սերմանելու և հնձելու համար: Առանձնապէս զգալի էր գարու պակասութիւնը: Շատ անմըխթար էր երկրի վիճակը բժշկական, առողջապահական տեսակէտից, բժիշկ Մանդինեանի և նրա արշաւախմբի հեռանալուց յետոյ: Հիւանդների թիւը մեծ էր, կային նաև վարակիչ հիւանդութիւններով բռնուածներ, ամենքը թողնուած իրենց բաղնիք: Այս դրութիւնը կծանրանար մանաւանդ հունիսի ժամանակ, երբ գաղթականների կանայք ամբողջ գերդաստանով կովկասից վերադառնային, տղամարդկանց դաշտային աշխատանքներին մասնակից լինելու Բացի դրանից կենսական մթերքներ հազիւ էին ձարուում. կղած անպէտք, կեղծ ապրանքների գներն էլ տեղական վաշխառուները 4—5 անգամ բարձրացրած անխրճօրէն շահագործում էին անձար և տնտեսական զգաւարութիւնը:

Ա. Աթանասեանը ապրիլի 24-ին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան տեղական յանձնաժողովին նոյն իմաստով յայտարարութիւն արած լինելով ինչպէս նախորդ զեկուցանողը, աւելացրեց, որ ըստ ցուցակադրութեան, հայրենիք դարձողները ներմուծել են մօտաւորապէս 1300 զլուխ տաւար և ունին 8000 սոմարի տեղ հերկ, որպիսի տարածութիւնը սերմելու և ամառուայ հերկը անելու համար նոր լծկանները, գործիքները և սերմացուի մեծ պահանջ կգագացուի:

Յանձնաժողովը ի նկատի ունենալով այս բոլոր կարիքները շուտափոյթ ցուցանելու անհրաժեշտութիւնը, միաժամանակ հաշուի առնելով նաև Նորին Սրբութեան տնօրէնութեան ներքոյ գանձուած շինարարական նպաստի քանակը, այլ և Հայոց Գիւղատնտեսական, Նպաստամատոյց Ընկերութիւնների և Մոսկուայի Հայկական Կոմիտէի լիազօրների միջոցով ընձեռած երաշխիքը հայրենիքի վերաշինութեան յատկացրած լաշն դրամական օժանդակութեան նկատմամբ, որոշեց առ այժմ Բայազետի, Ալաշկերտի և Ղարաքիլիսայի շրջաններում մի շարք շինարարական ձեռնարկութիւնների նախահաշիւ կազմել, սահմանելով հինգ ամսուայ ծախքը, և ներկայացնել Նորին Վեհափառութեան ի հաստատութիւն:

Ա. Երկրագործական պիտոյք.

1. Լծկան կոնքեր, 300 զոյգ	30000 ա.
2. Սերմացու դարի, 5000 փութ	5000 ա.
3. Սերմացու ցորեն 7500 սոմար	25000 ա.
4. Սրբ և չուլ, 600 հատ	3000 ա.
5. Մետաղեայ գութան, 250 հատ	7500 ա.
6. Գերանդի, 2000 հատ	1400 ա.
7. Բահ, 1000 հատ	1000 ա.
8. Պարկ (ջուլ), 5000 հատ	3250 ա.
9. Պարան, 2000 փութ	2400 ա.
10. Ուրաղ, 80 հատ	240 ա.
11. Կացին, 200 հատ	200 ա.
12. Սրելու քար, սոց և այլն	500 ա.
13. Երկաթի սամի, 600 զոյգ	360 ա.
14. Փոխադրութեան ծախք	1150 ա. 81,000 ա.

Բ. Միամսեայ սննդատու կայաններ.

1. Իգդիրում	2000 ա.
2. Յովհաննու վանքում	3000 ա.
3. Ղարաքիլիսայում	2000 ա. 7,000 ա.

Գ. Բժշկական-առողջապահական խնամք.

1. Քսան մահճակալով հիւանդանոցի կահաւորութեան միանուագ	2000 ա.
2. Երկու բժշկի, 4 ֆելդշերի, 8 սանիտարի և ողորմած քոյրերի ուճիկ	15000 ա. 17,000 ա.

Դ. Մասակարգողական պահեստ.

1. Կոստանտնուպոլսի սպառողական խանութի շրջանառութիւն	5000 ա. 5,000 ա.
---	------------------

Ե. Գործադիր վարչութիւն.

1. Երեք լիազօրի ուճիկ, իւրաքանչիւրին ամսական 200 ա.	3000 ա.
2. Հինգ օգնականի ուճիկ, իւրաքանչիւրին ամսական 70 ա.	1750 ա.
3. Տասներկու սպասաւորի ուճիկ, իւրաքանչիւրին ամսական 30 ա.	1800 ա.
4. Զիւրիկ թամբեր և սարքեր, միանուագ	1500 ա.
5. Տասներկու ձիու կեր, ամսական 240 ա.	1200 ա.
6. Անակնունքի ծախք	1750 ա. 11,000 ա.
Ընդամենը	121,000 ա.

Հարկւր քսան և մէկ հազար ուրբու ծախքի նախահաշիւը գործադրելու համար անհրաժեշտ համարուեցաւ Ալաշկերտում կազմակերպել մի գործադիր վարչութիւն Գլխաւոր և Կարգադիր Յանձնաժողովի իրաւասութեան և հրահանգութեան կիսակայ, բաղկացած հինգ լիազօրից: Որոշուեցաւ լիազօրների տրամադրութեան ներքոյ զինել 5 օգնական և թուով 12 պաշտօնեայ,

երկրի զանազան մասերում շրջագայելու և իրագործելու հայրենիքի վերաշինութեան ծրագիրը, այլ և ամբողջ կազմի անդամներին անխտիր տալ ուճիկ, սննդադրամ, ձիեր, ճանապարհորդական իրեր, հագուստի և մանր ծախքերի համար միանուագ գումար: Իբրև սկզբունք ընդունուեցաւ նոյնպէս հայրենիք վերադարձողներին բաշխուած լծկանների, գործիքների և սերմացուի գումարը

համարել անտոկոս փոխառութիւն, հայրենիքի բարօրութիւնը հաստատութեանը վերադարձնելու պայմանով, որը մատակարարել է այդ իրերը. իսկ այդ ձևով ապագային գանձուելիք դրամներից մի հիմնական դրամազուլիս կազմել, Տաճկահայաստանի ուրիշ շրջաններում գիւղատնտեսական և շինարարական ձեռնարկութիւնների հիմք դնելու համար:

Ալաշկերտի եղբայրական Օգնութեան Գործադիր Վարչութիւնը, որի կազմի մէջ Ս. Էջմիածնի Կարգադիր Յանձնաժողովի ընտրութեամբ իրրե լիազօր կարգուած էին Տ. Արսէն վարդապետ, Ա. Աթանասեան, Ա. Թադէոսեան և Պ. Գրիգորեան, պարտաւոր էր ըստ հարկին հետըզնիտէ իւր գործունէութեան համար հաշիւ և տեղեկագիր ներկայացնել Ս. Էջմիածնի Կենտրոնական և Ղեկավար Յանձնաժողովին, այլ և նրա հայեցողութեան առաջադրել այդ շրջանի գաղթականութեան կարիքների մասին իւր կարծիքը, դիտողութիւններն ու անելիքի ծրագիրը:

Վեհափառ Հայրապետը 1915 թ. մայիսի 28-ին թ. 872 մակագրութեամբ հաստատելով Ալաշկերտի եղբայրական օգնութեան Գործադիր Վարչութիւնը և ալաշկերտցի փախստականների դարձի ու նրանց ապագայ շինարար տնտեսութեան 121,000 ուտրլու ծախքի նախահաշիւը, տնտեսաբար գործադրելու պատուէր տուաւ, այլ և տնօրինեց Սինդիկատ, գաղթականական դրամադրից այդ գումարը դնել Յանձնաժողովի տրամադրութեան տակ: Միաժամանակ Նորին Սրբութիւնը դիմեց Կովկասի պետական բարձր կառավարութեան, մի կողմից առաջարկելով, որ զինուորական իշխանութեան կողմից զիւրութիւն տրուի հայրենիք վերադարձող գաղթականներին, տէր կանգնելու իրենց նախկին բնակավայրերին և զիւղատնտեսական ձեռնարկութեամբ աւերուած երկիրը շէնցնելու, պարենաւորման գործում նույնի հանդիսանալով մարտնչող բանակին և թիկունքի ազգաբնակչութեանը, իսկ միւս կողմից խնդրելով, որ Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեանին և Տ. Արսէն վարդապետին արտօնութիւն շնորհուի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից կրօնական-հոգևոր առաքելութեամբ իրենց օգնական խմբով շրջագայելու նուաճուած հայկական գաւառները, առաջինը՝ Վասպուրական, երկրորդը՝ Ալաշկերտի, Դարաքիլիսայի և Մանազկերտի շրջանները, տառապեալ հայ հօտի եկեղեցական-վարչական գործերը տնօրինելու և նրա կենսական կարիքները հոգալու համար: Դժբաղդաբար այս միջնորդութեան իրականացումը զրեթէ մէկ ամիս յապաղեց, հարկաւ քա-

ղաքական և պատերազմական նկատումներով: Այս հանգամանքից հարկադրուած, Նորին Սրբութիւնը Տ. Խորէն Եպիսկոպոսին նոյն առաքելութեամբ երկրորդ անգամ բանակցութեան ուղարկեց չորրորդ բանակի հրամանատար զօրապետ Օգանովսկու մօտ, որ յետագայ արդիւնքն ունեցաւ. 1. Թոյլատրել Տ. Սահակ արքեպիսկոպոսին, պատուաւոր պահակի առաջնորդութեամբ անցնել Վան, 2. Վերացնել գաղթականների Արաղա, Արճէշ և Վան անցնելու արգելքը, 3. Թոյլ տալ Մշոյ դաշտից և Բիթլիսի վիլայէթից եկող փախստականներին տեղաւորուել Մանազկերտի շրջանում, իրաւունք չտալով նրանց Ալաշկերտի և Կովկասի սահմանն անցնելու, 4. Ալաշկերտի գաղթականութեան և Տ. Արսէն վարդապետի առաքելութեան նկատմամբ ամեն տնօրէնութիւն զինուորական իշխանութեան իրաւասութիւնից դուրս համարել, իրրե միայն Կովկասի վերին կառավարութիւնից կախուած մի հանգամանք:

Մինչ այս, տեղի ունեցաւ ուսւ բանակի յաղթական մուտքը Վան և Մանազկերտի, Կոփի ու Լիզի գրաւումը, որով Ալաշկերտում և մերձակայ գաւառներում հայ գաղթականների կացութեան պայմանները բարեփոխուեցան: Իսկ յունիսի սկզբին կառավարութեան կողմից ընդհանուր կարգադրութիւն եղաւ, որ Կովկասի սահմաններում բնակած գաղթականներին թոյլատրուում է աղատ վերադառնալ հայրենիք: Նոյն իմաստով Երևանի նահանգապետը բացատրական հրահանգ ուղարկեց Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին, որ փախստականների ներգաղթի առթիւ ոստիկանութիւնը ոչ մի բուռն միջոց չի գործադրելու, վստահ ազգային կազմակերպութիւններին, որ ջանք ու եռանդ չեն խնայել յորդորելու գաղթականներին վերադառնալ հայրենիք, միաժամանակ յայտնելով, որ վերադառնալ չցանկացողներին միայն Երևանի, Թիֆլիզի և Գանձակի նահանգներում բնակութեան սահմանափակ շրջաններ կյառակացուին: Այնուհետև ամեն տեղ փախստականներին խնամող ազգային հաստատութիւնները ոչինչ չխնայեցին գաղթականների վերադարձը կազմակերպելու համար: Շարժումը, թէև դանդաղ, թափ ստացաւ առանձնապէս Էջմիածնի և Երևանի շրջակայքից դէպի Բայազիտ, Ալաշկերտ և Վան, Շարուր-Վարաշագեղից ու Նախիջևանից դէպի Ատրպատական և Շիրակից ու Ախալքալաքից դէպի Արտասան ու Արդուին: Այս անգամ վերադարձողները գնում էին իրենց գերդաստանով, ստանալով եղբայրական օգնութեան հաստատութիւններից յաջորդ ամսուայ ամբողջ նպաստը, հազուադէպ շաքար, թէյ և այլն: Եւ որովհետև մեծամասնութեան

դարձը Էջմիածնի վրայով էր լինում, այնտեղ բացուեցաւ սննդատու կայան, որից դատ Ալաշկերտի Գործադիր Վարչութիւնը ճանապարհի յարմար հանգույցներում նախապէս հաստատել էր ուրիշներն էլ:

Պարսկահայ փախստականների վերադարձի հոգն ամբողջապէս իւր վրայ էր վերցրել Թեմակալ Առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկոպոսը: Նա իւր բնատուր եռանդով ու փախստականներին սրտի խորքից բաժին հանած կարեկցութեամբ 1915 թուի մայիսի 18-ից մինչև յունիսի 4-ը թուցիկ սանիտարական խմբի ուղեկցութեամբ շրջագայել էր Խոյի հայաբնակ վայրերը, Սալմաստի 18 հայաբնակ և Թրքախան, այլ և Ուրմիայի ու Բարանդուզի 50-ի չափ խառն հայաբնակ, ասորաբնակ և Թրքաբնակ գիւղերը, իւր տարազիւ հօտից հայրենիք վերադարձողներին վիճակին ծանօթանալու և նրանց անտեսական շինարարութեան օժանդակ լինելու համար:

Խոյի, Սէյդաւարի, Շորաւի և շրջակայքի 900 տուն փախստական հայերից շատերը գաղթի խուճապին իրենց անասունների մեծ մասը վաճառել և երկրագործական գործիքներն ու տնային կահ կարասիքը պահ էին տուել հարեան թուրքերին, իսկ ուսական սահմանն անցնելիս համեմատաբար աւելի քիչ զրկանք կրել ու կորուստ ունեցել: Գարնանը վերադառնալով հայրենիք, երկրի դատաւորի և ուսական հիւպատոսի վճռի համաձայն ամենքը իրաւունք ստացան, հարեան թուրքերից ոչ միայն իրենց աւանդ դրած աղբանքը, այլ նաև վաճառած անասունները յետ ստանալ, հատուցանելով վաճառման գինը և ամեն մի գլուխ տաւարի ձմեռուայ կերի ու պահպանութեան վարձը՝ 8 ուտրլի: Այս պայմանների մէջ Խոյի շրջանը վերադարձող գաղթականները առանձին նպաստի և օգնութեան կարիք չէին զգում: Միայն յափշտակութեան ենթարկուած սակաւաթիւ եկեղեցիները զգեստների, սրբազան տնօթիւնների և զբոսի մեծ պահպանութիւն ունէին:

Սալմաստի հայ ազգաբնակչութիւնը ցրուած էր յետագայ գիւղերում. Ախտախան՝ 50, Գրիշի՝ 25, Զէյվաջուկ՝ 4, Խորուր՝ 30, Հաւթուան՝ 450, Հին-քաղաք՝ 110, Դալասար՝ 120, Դարաբաղ՝ 10, Դալլա՝ 40, Մահլամ՝ 200, Շէյթմանաւ՝ 15, Սառնա՝ 100, Սարամբիկ՝ 40, Սաւրա՝ 100, Վարդան՝ 4, Փայաջուկ՝ 300, Գեալաշան՝ 10 և Բոշամիշ՝ 30 տուն. ընդամենը 1638 տուն, որոնցից 657 տունը տարեցտարի վարում և ցանում էին 2390 բնուած 23900 փութ հացահատիկ: Հետեապէս հայրենիք վերադարձող փախստականները նախորդ տարուայ ցանքսը խնամելու, հնձելու և յաջորդ տարուայ հերկն անելու ու սերմ ձգելու համար

օգնութեան և նպաստի մեծ կարիք ունէին, քանի որ գաղթի խուճապին իրենց ունեցուածքի մեծագոյն մասը աւարառութեան էր ենթարկուել, իսկ քիչ մասը միայն պահ տրուել հարեան թուրքերին: Եւ օգնութեան գործը իրական հետեանքի հասցնելու նպատակով, Տ. Ներսէս Եպիսկոպոսի նախագահութեամբ 1915 թ. մայիսի 24-ին Դիլմանում գումարուած հայ ժողովրդական խորհրդակցութիւնը որոշեց կազմել Սալմաստի հայոց բերքը հնձելու, ժողովելու և յաջորդ աշնան վարն ու ցանքսը անելու ծախքի նախահաշիւը և յանձնել սրբազան Թեմակալ Առաջնորդին ի տնօրէնութիւն: Այսպէս.

Սննդի և շէնքերի նորոգութեան.	20,000 ու.
2390 բնուան տեղ հնձելու, 6 ու.	14,340 ու.
629 կալսելու ջարջաւ, 10 ու.	6,290 ու.
56 գութան, 25 ու.	1,400 ու.
168 գոյգ լծկան, 100 ու.	16,800 ու.
Ընդամենը . . .	58,830 ու.

Ուրմիայի և Բարանդուզի շրջանում 1914 թուի դեկտեմբերին, տաճկական արշաւանքի ժամանակ, 1100 տուն հայ ազգաբնակչութեան բոլոր շարժական ունեցուածքը աւարի էր մատնուել, իսկ անշարժ կայքը իսպառ աւերի և կրակի բաժին գարձել: Անաղարտ էին ֆապցել միայն ցանքան ու այգիները, որոնք 1915 թուին ստատ և գերազանց հուճ էին խոստանում: Քանի որ տեղական հայ ժողովուրդը գլխաւորապէս այգեգործութեամբ էր զբաղուում, հետեապէս վերադարձող գաղթականներն էլ անասունների և երկրագործական պարագանքների մեծ կտրիք չէին զգում, զբաղական նպաստի բացառութեամբ, որ նրանց անհրաժեշտ էր հնձելու, կալսելու, այգիները կլիելու և ամառուայ երեք ամիսը ապրելու համար: Այս նպատակով եթէ 1000 չուսեւոր ընտանիքին տրուէր մի-մի լծկանի գին 50-ական, շէնքերի նորոգութեան համար 20-ական և երեք ամսուայ հացապին 30-ական ուտրլի, միանուագ 100,000 ուտրլու ծախք կլինէր:

Սալմաստի և Ուրմիայի շրջաններում ներգաղթին ապաստանել էին նաև մօտ 3000 փախստական Հասպատանից, Վանից, Արաքից, Արաղայից և Գեալաշից: Նրանց վերադարձը դէպի Բաշկալա և Հասպատան-Արաղա մեծամեծ վտանգների հետ էր կապուած, շնորհիւ քրդական հրոսակների ասպատակութիւններին: Ուստի անհրաժեշտ էր նրանց ևս ամառուայ երեք ամիսը կերակրել, ամսական իւրաքանչիւր շնչին հաշուելով աւելուագը՝ 2 ուտրլի, որով կգոյանար ընդամենը 18,000 ուտրլու ծախք:

Ատրպարատականի թեմակալ Տ. Ներսէս եպիսկոպոսը ի նկատի ունենալով իւր հօտի վերոյշեալ կարիքներն ու պահանջները, նախկին ծաղկած գիւղական տնտեսութիւնը վերականգնելու համար դիմեց Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Կարգադիր Յանձնաժողովին և խնդրեց միանուազ 200,000 ռուբլի նպաստ: Այսպէս՝

Մարմատի համար	58,820 ռ.
Ուրմիայի համար	100,000 ռ.
Տաճկահայ փախստականների հմբ.	18,000 ռ.
Անտկնունելի ծախք	23,170 ռ.

Սրբազանը առանձին փոյթ ունէր, գտնել տալու խուճաղի ժամանակ փախստական հայրից կողոպտած աւարը՝ տնային կահ կարասիք, գործիքներ, անասուններ, հացահատիկ և այլն և յանձնել իրենց երկիր վերադարձող տէրերին: Այս նպատակով Սալմաստում, Սոյում և Ուրմիայում սրբազան թեմակալի, զինեալ Չերնազուբովի և հիւղատուս Կիրսանովի ու Նիկիտինի հովանաւորութեան և անմիջական տնօրէնութեան ներքոյ կազմուեցան ասորիներ, թուրքեր և հայերի ներկայացուցիչները խառն կամ միաւորեալ յանձնաժողովներ, որոնք, յանուն աւել բուժած երկրի վերաշինութեան և ազգաբնակչութեան տարբեր ցեղերի մէջ փոխադարձ հաշտութիւն և անվրդով իրադրութիւն հաստատելու գիտաւորութեամբ, ջանադիր էին համոզել յականէ յանունէ յայտնի աւարառուներին, հայրից և ասորիներից գողթի խուճաղին և յետոյ կողոպտած աւարանքն ու տաւարը վերադարձնելու տէրերին: Եւ ուր խօսքն ու յորդորը չէր ազդում, զինեալ Չերնազուբովի կարգադրութեամբ գործում էին կաղակների վաշտերը, որոնք առանձնապէս քրդաբնակ վայրերից մեծ քանակութեամբ աւար ազատեցին և յանձնեցին վերադարձող փախստականներին:

Մական ներգաղթի զանգաղ շարժումը չըտարածուեցաւ բոլոր գաղթավայրերում: Փախստականներից շատերը մնացին իրենց տեղը. և թէև այգաթիսները բարեբաղդաբար զերծ մնացին 1915 թ. յուլիսի 20-ի մեծ գաղթի աղէտից, սակայն շարունակեցին կրել պանդխտի առօրեայ տանջանքը քաղցի և հիւանդութեան երեսից, մանաւանդ որ եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը և ազգային կազմակերպութիւնները լսելով թիւրքիոյ սահմաններում համայն հայ ժողովրդին սրախողթող անելու դոյժը և իմանալով Վասպուրականի, Մշոյ, Բիթլիսի հայոց առաւանդներն ու գաղթի նոր ազգայն գէպի սուսաց զբաւած դաւաճները, աշխատում էին տնտ-

եսելով մասամբ կրճատել կովկասում ապաստանած գաղթականների համար նախատեսուած ամեն տեսակ նպաստը և իրենց գթութեան զործը կենտրոնացնել գլխաւորապէս Վասպուրականում, Մանազկերտում, Բուլանըխում, ուր նորեկ գաղթականների թշուառութիւնը աւելի մորմորիչ ու սոսկալի էր: Այս տեսակէտով Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Կենտրոնական և Դիկովար Յանձնաժողովը վարանման մէջ ընկաւ և չկարողացաւ վճարել Տ. Ներսէս եպիսկոպոսի Ատրպարատականի գաղթականների համար խնդրած 200,000 ռուբլու նպաստը, լրացնել Ալեքսանդրապոլի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միծածախս հիւանդանոցի կարիքները և իրականացնել գաղթականների խնամատարութեան նկատմամբ նրա տրած լաջն պահանջները: X)

ՇԻՆԱՐԱՐ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ Ա.Ա.ՇԿԵՐՏՈՒՄ.— Ռազմի ճակատը Հայաստանի խորքերը փախադրուելուց յետոյ, Ալաշկերտ վերադարձող գաղթականները կովկասից ընկել տուին իրենց ընտանիքներին, որոնց աջակցութեամբ հիմք դրուեցաւ շինարարական աշխատանքին: Եղբայրական Օգնութեան Գործադիր Վարչութեան լիազօր Ա. Թադէոսեանի և Ա. Աթաբասեանի ջանքերը բեղմնաւոր եղան: Մոսկուայում, Թիֆլիզում, Ալեքսանդրապոլում և Երևանում գնուած գիւղատնտեսական գործիքները ժամանակին բաշխուեցան գիւղացիներին. լծկան չունեցող ընտանիքներին բաժանուեցաւ 270 գլուխ կո ու գոմէշ, գնուած Մակուի և Աւաղաղի շրջանում, այլ և քիչ, ընդամենը 1000 ռուբլու արժողութեամբ սերմացու, քանի որ գիւղացիները գտել էին իրենց սեփական պաշարը հորերում: Ալաշկերտի Եախի-Թափա, Ամադ, Իրիցու գիւղ, խաշլու, Չկանի, Սոշեան, Դայաբէկ, Մուլա-Սիւլէյման, Չիզկան, Սաթմուր և Դարաքիլիսայի Դաշլի-Հայ, Զիրո, Դաղի, Եօնջալու, Մանգասար, Մաղրա, Սըղըր, Քեոփ-Դաւան, Իրիցու գիւղ, Հաջի-Սաֆար, Աշխաւա, Աղա-Դէւէ գիւղերի բնակիչները վարել էին ընդամենը 2500—3000 օրավար տարածութեամբ հանդ և սերմել մօտ 4135 սոմար կամ շուրջ 30,000 փութ ցորեն, ստանալով մէկին ինը արդիւնք, այն է՝ մօտ 270,000 փութ: Բացի դրանից նախորդ տարին հարերում մնացած ցորնից իրրեւ մանաւոր սեփականութիւն ամբարուել էր 60,000 փութ ցորեն, որից 12,000 փութը հասարակական շահմարանին էր յատկացուել ապագայ փորձութեան օրերի համար, իսկ մօտ 4500 փութը պատկանում էր կովկասից գեո չվերադարձած փախստականներին,

4) տեղեկագրութեան իրաւունք. շնորհակալութեամբ պատգամ
զայնուցե առ տոհմի մեր, ուստի և ուղարկու ա թոյլտալ:

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL014334

